



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 111 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 12.06.2019թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5,25 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

ՔՐԿԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է ԱՄՆ փոխպետքարտուղարի՝ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության հարցերով օգնականին 3

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արայիկ Ասլանյան Ձենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շրթելու հանցակազմի քրեաիրավական որակման որոշակի առանձնահատկությունները 5
Հովսեփ Քոչարյան Կեղծ ձեռնարկատիրություն . օբյեկտիվ կողմի ձևակերպման խնդիրները 13
Հռիփսիմե Խաչատրյան Անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր (սոցիալական) կանխարգելման հարցերի շուրջ..... 17
Արթուր Ղամբարյան Լռությունը և իրավական պայմանականությունները (համատեսական վերլուծություն) 23
Նելլի Աշրաֆյան Հաշտեցման տեղը և դերը քրեական իրավունքում 32

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Sona Margaryan Certain issues regarding non-conviction based confiscation of assets40

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայկ Կետոյան Կառավարության գործունեության կայունության ապահովման հիմնախնդիրները կառավարման խորհրդարանական ձևի պետություններում..... 47

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նանե Սահակյան «Պետական պատվեր» և «պետական գնում» հասկացությունները..... 52
Սիրո Ամիրխանյան Պետությունը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ..... 58
Լուսինե Թասալյան Հաշտարարության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 64

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Այվազյան Իրավունքի սուբյեկտի հիմնախնդիրը մարդաբանական հայեցակարգի տեսանկյունից 68

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 73

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները..... 84

ՀՀ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՄՆ ՓՈԽՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ` ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՉԵՐՈՎ ՕԳՆԱԿԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԱՄՆ փոխպետքարտուղարի՝ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) հարցերով օգնական Ջորգեն Էնդրյուսի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Արթուր Դավթյանը նշել է, որ նման հանդիպումները հայ-ամերիկյան բարեկամական հարաբերությունների



բարձր մակարդակի վկայությունն են: Նա գոհունակություն է հայտնել ԱՄՆ կառավարության կողմից քրեական հետապնդման ոլորտում ցուցաբերած, հատկապես՝ անդրազգային հանցագործությունների դեմ պայքարի, խափանման միջոց կալանքի կիրառման, կոռուպցիայի դեմ համակարգային պայքարի ժամանակակից մեխանիզմների ոլորտներում մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված թիրախային և փոխշահավետ աջակցության համար: ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել նաև երկու երկրի միջև իրավական փոխօգնության ոլորտում ձևավորված համագործակցության բարձր մակարդակի կապակցությամբ, ինչի շնորհիվ վերջին շրջանում հայկական կողմի քննչական բազմաթիվ հարցումներին տրվող պատասխանների հենքի վրա հնարավոր է դառնում առավել արդյունավետ դարձնել քրեական վարույթները:

Չնայած այս ձեռքբերումներին, ըստ Արթուր Դավթյանի՝ այս ոլորտում գործակցության մակարդակը դեռևս լիարժեքորեն չի համապատասխանում առկա պոտենցիալին, որի իրացմանը պետք է ուղղվեն ընդհանուր ջանքերը:

Պարոն Ջորգեն Էնդրյուսն իր հերթին արժևորել է ՀՀ գլխավոր դատախազի հետ հանդիպումը՝ նշելով, որ օգտակար է քննարկել, թե ինչպես է Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոն օժանդակել ՀՀ դատախազությանը հաջողված հակակոռուպցիոն գործեր դատարան ներկայացնելու կարողությունների զարգացման հարցում: Նա նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը ԱՄՆ կառավարության համար առաջնահերթություն է, և իրենք ակնկալում են շարունակել համագործակցությունն այս ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ապօրինի ձեռք բերված գույքի և ակտիվների վերադարձման, հակակոռուպցիոն պայքարի ռազմավարության կատարելագործման, քրեական դատավարության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման ոլորտներում համագործակցության նոր հնարավորություններին և ուղղություններին առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է նշված ուղղություններով ՀՀ դատախազության նախաձեռնությունները, ինչպես նաև Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների նպատակներն ու խնդիրները, պաշտոնատար անձանց գործունեության, գույքի և եկամուտների շարժի թափանցիկությանն ու հրապարակայնության բարձրացմանը միտված քայլերը: Նա նշել է, որ, չնայած ակտիվ հանրային աջակցությամբ կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարում արձանագրված աննախադեպ լուրջ արդյունքներին՝ կոռուպցիոն հանցագործությունների կատարման հա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

մար քրեական հետապնդման ենթարկվող պաշտոնատար անձանց կողմից գույքի ապօրինի ձեռքբերման հանգամանքների պարզման և հետախուզման հարցերում առաջանում են իրավական խոչընդոտներ, որոնք հնարավոր է



լուծել միայն օրենսդրական փոփոխությունների իրականացման միջոցով՝ անձանց գույքային իրավունքների պաշտպանության ամուր երաշխիքների ապահովմամբ: Այս համատեքստում գլխավոր դատախազը նաև կարևոր է համարել բանկային գաղտնիքին առնչվող իրավակարգավորումների որոշակի վերանայումը՝ միջազգային իրավունքի նորմերի ու

սկզբունքների լիարժեք պահպանմամբ, մի կողմից՝ հանրային շահի, մյուս կողմից՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հավասարակշռման նպատակով:

ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որպես խափանման միջոց կալանքին այլընտրանք այլ խափանման միջոցների, մասնավորապես՝ տնային կալանքի ներդրմանն ուղղված ՀՀ դատախազության նախաձեռնությունների և շրջանառության մեջ դրած օրենսդրական փոփոխությունների նախագծի մասին՝ հավելելով, որ այս առանցքային բարեփոխումն իրականացնելու հարցում տեսնում է համագործակցության հեռանկար: ԱՄՆ փոխպետքարտուղարի՝ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության հարցերով օգնականի կողմից պատրաստակամություն է հայտնվել հատկապես փորձագիտական աջակցության, փորձի և տեղեկատվության փոխանակման, դատախազների մասնագիտական ունակությունների ու գիտելիքների զարգացման ձևաչափերով խորացնելու և զարգացնելու համագործակցությունը քրեաիրավական ոլորտում Հայաստանի և ՀՀ դատախազության համար առաջնահերթություն ներկայացնող նշված բոլոր ուղղություններով:



ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

ՉԵՆՔ, ՌԱԶՄԱՍԹԵՐՔ, ՊԱՅԹՈՒՅԻԿ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՄ ՊԱՅԹՈՒՅԻԿ ՍԱՐՔԵՐ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ԿԱՄ ՀՈՐԹԵԼՈՒ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 238 հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու համար: Մասնավորապես՝ սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով պատասխանատվություն է սահմանվում հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերում նախատեսված արարքները խոշոր չափերով կատարելու, իսկ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով՝ հոդվածի 1-ին, կամ 2-րդ, կամ 3-րդ մասերով նախատեսված արարքներն առանձնապես խոշոր չափերով կատարելու համար:

Ելնելով վերը նշված հանցակազմի առանձնահատկություններից՝ միանշանակ պետք է ենթադրել, թե օրենսդիրը, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի խոշոր կամ առանձնապես խոշոր չափեր ասելով, նկատի ունի ոչ թե դրանց քանակական, այլ՝ **«արժեքային բնույթի չափելի հատկանիշները»**: Վերը նշվածի կապակցությամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև իր հստակ դիրքորոշումը: Ստորև ներկայացվող դիրքորոշման մեջ որպես հանցագործության առարկա քննարկվում է միայն զենքը, սակայն, ելնելով ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի բովանդակային իմաստից՝ պետք է նաև եզրակացնել, որ ներկայացված պատճառաբանությունները և եզրահանգումները, վերաբերելի են նաև՝ **ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի համար**:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 16-ի դռնբաց դատական նիստում, քննության առնելով թիվ **ԵԷԴ/0122/01/13** քրեական գործով ամբաստանյալ Դավիթ Ալբերտի

Սիմիդյանի վերաբերյալ ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 238-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանի վճռաբեկ բողոքը, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու նպատակով՝ վերոնշյալ հարցի վերաբերյալ արտահայտել է հետևյալ պատճառաբանությունները և եզրահանգումները.

«(...) Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով զենք հափշտակելու չափերը օրենքով սահմանված չլինելու պայմաններում ամբաստանյալ Դ. Սիմիդյանին մեղսագրված արարքը կարճ է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում, ի թիվս այլնի՝ հրազեն հափշտակելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված է 1-ին մասով նախատեսված հանցակազմը ծանրացնող հանգամանք՝ խոշոր չափերով, իսկ 4-րդ մասի 3-րդ կետով՝ առավել ծանրացնող հանգամանք՝ առանձնապես խոշոր չափերով կատարելը»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ հանցագործության առարկայի չափը նախատեսված է որպես հանցակազմը ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք՝ հանդիսանալով դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը: Մինչդեռ՝

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

վկայակոչված հոդվածի, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի ամբողջական բովանդակությունից հետևում է. ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի իմաստով՝ «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունները բացահայտված չեն¹:

Ինչ վերաբերում է ՀՀ քր. օր.-ի 21-րդ գլխում առկա հափշտակության չափերի կարգավորումներին՝ դրանք կիրառելի չեն ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի նկատմամբ, քանի որ ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հափշտակությունների խոշոր և առանձնապես խոշոր չափերը վերաբերում են միայն՝ նույն օրենսգրքի 21-րդ գլխին և 216-րդ հոդվածին:

Այլ կերպ ասած՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված չէ, թե հրազեն (*հեղևաբար նաև՝ ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր*) հափշտակելու ռի չափն է համարվում խոշոր, իսկ ռի՞ր՝ առանձնապես խոշոր:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով դա հանցագործություն չի համարվել: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն. «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն՝ հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն. «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն.

«Արարքի հանցավորությունը, դրա պատ-

ժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

Քրեական օրենքն անալոգիայով կիրառելի արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն. «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: (...)»:

Մեջբերված նորմերով սահմանված է օրինականության սկզբունքը, որի անբաժանելի տարրն է «չկա հանցագործություն և պատիժ, եթե սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը: Վերջինս իր արտացոլումն է գտել ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), այնպես էլ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում:

Քննարկվող կանոնն իր արտացոլումն է գտել նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում: Մասնավորապես՝ Վարուժան Ավետիսյանի գործով որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) [Ա]նձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով: Անձը չի կարող ենթարկվել նաև այնպիսի պատժի, որը նախատեսված չէ գործող օրենքով:

(...) «[2]կա հանցագործություն և պատիժ, եթե սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշումը՝ Դավիթ Սիմիոյանի վերաբերյալ:

իրավունքի գերակայության կարևորագույն փարր, որը բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար՝ նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է» (տես Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ-3/0013/01/11 որոշման 13-րդ կետը: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Երվանդ Մելքոնյանի վերաբերյալ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշման 14-16-րդ կետերում):

Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերը մեջբերված դիրքորոշումներից հետևում է բացարձակ կանոնն այն մասին, որ միայն *օրենքը* կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը, ինչպես նաև այն, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի: Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն *իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով*: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (ի թիվս այլ աղբյուրների, տես Կանտոնին ընդդեմ Ֆրանսիայի (CANTONI v. FRANCE) գործով Եվրոպական դատարանի 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռ, գանգատ թիվ 17862/91, կետ 29; Է. Կ.-ն ընդդեմ Թուրքիայի (E.K. v. TURKEY) գործով 2002 թվականի փետրվարի 7-ի վճիռ, գանգատ թիվ 28496/95, կետ 51): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (տես վերը՝ Աչորն ընդդեմ Ֆրանսիայի (ACHOUR v. FRANCE) Մեծ պալատի 2006 թվականի մարտի 29-ի որոշում, գանգատ թիվ 67335/01, կետ 41): Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե ի՞նչ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում, և ի՞նչ պատիժ կնշանակվի այդ գործողու-

թյունների կատարման և/կամ անգործության համար (ի թիվս այլ աղբյուրների, տես վերը վկայակոչված՝ Կանտոնիի գործով որոշման 29-րդ կետը):

Միննույն ժամանակ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող ընկալվել որպես դատական մեկնաբանման միջոցով քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական հստակեցման բացառում՝ պայմանով, եթե հետևող զարգացումը համապատասխանում է արարքի էությանը և կարող է ողջամտորեն կանխատեսելի լինել (տես, ի թիվս այլ աղբյուրների, Ստերլեցը, Կոսլերը և Կրենզն ընդդեմ Գերմանիայի (Streletz, Kessler and Krenz v. Germany) գործով 2011 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 34044/96 35532/97 44801/98, կետ 50): Մատչելի և ողջամտորեն կանխատեսելի դատական մեկնաբանության բացակայությունը նույնիսկ կարող է հանգեցնել ամբաստանյալի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտում արձանագրելուն (տես Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի (PESSINO v. FRANCE) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 40403/02, կետեր 35-36):

Վերոնշյալ դիրքորոշումներից հետևում է, որ օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի անբաժանելի մասն են կազմում ընդհանրական և գնահատողական հասկացությունները, սակայն այդպիսի հասկացությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի առավել որոշակի հասկացությունների օգտագործման անհնարինությամբ, հակառակ դեպքում կխախտվի օրինականու-

թյան սկզբունքը: Վերջինս կարող է հետևանք լինել օրենսդրի կողմից զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխան բոլոր հնարավոր իրավիճակները սահմանելու անհնարինությունը: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով որոշակի հանցակազմերի պարտադիր հատկանիշները բնութագրվում են «էական վնաս» (182-րդ հոդվածի 1-ին մաս, 199.1-րդ հոդվածի 2-րդ մաս, 214-րդ հոդվածի 2-րդ մաս, 276-րդ հոդված, 284-րդ հոդվածի 1-ին մաս, 287-րդ հոդվածի 1-ին մաս և այլն), «ծանր հետևանքներ» (127-րդ հոդվածի 3-րդ մաս, 128-րդ հոդվածի 3-րդ մաս, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 132.2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ և մի շարք այլ հոդվածներ) հասկացություններով, որոնք իրենց բնույթով գնահատողական են, իսկ դրանց բովանդակությունը հնարավոր չէ վերացարկված սահմանել՝ պայմանավորված համապատասխան հանցագործությունների բնույթով: Նշված և այլ գնահատողական հասկացությունների բովանդակությունը ողջամտորեն կարող է որոշվել և որոշվում է դատարանի կողմից՝ կոնկրետ գործի հանգամանքների գնահատմամբ:

Արարքի հանցավորությունը սահմանող նորմերի դատական մեկնաբանման շրջանակների առումով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև օրենսդրական բացի առկայության դեպքերը:

Այսպես, անդրադառնալով օրենսդրական բացի առկայության հարցին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է. «(...) *Օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սուս կյանքում այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող փարրի բացակայության կամ այդ փարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: (...)*» (տես ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-

րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով թիվ ՍԴՈ-1143 որոշման, 6-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինակաչության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հետևաբար՝ նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է:

Վերը շարադրված իրավական վերլուծությունից հետևում է, որ դատական մեկնաբանման շրջանակները սահմանափակված են օրինականության սկզբունքով: Այդպիսի մեկնաբանումը հնարավոր է այն դեպքում, երբ իրականացվում է օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորման շրջանակներում, բխում է դրա էությունից և բացառում քրեական օրենքի տարածական մեկնաբանումը կամ անալոգիայով կիրառումը: Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ հանցակազմի պարտադիր հատկանիշը սահմանող հասկացության բովանդակության բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, զրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից: Նման դեպքերում օրենքը չի համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար, դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե սահմանված չէ օրենքով» (nolum crimem, nulla poena sine lege) կանոնի խախտման:

Ամփոփելով վերը նշվածը՝ հարկ է նշել հետևյալը. «**խոշոր չափ**» և «**առանձնապես խոշոր չափ**» հասկացություններն ինքնին ենթադրում են **չափելի** երևույթներ: Դրանք, օգտագործվելով քանակի, կշռի կամ արժեքի հատկանիշներով օժտված առարկաները բնութագրելիս, պայմանավորված չեն գործի կոնկրետ հանգամանքներով և օբյեկտիվորեն կարող են սահմանվել (և սահմանվում են) դրանցից վերացարկված: Այսպես՝ ՀՀ քրեական օրենս-

գրքի հատուկ մասի մի շարք նորմերում (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված, 158-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ, գլուխ 21 և այլն) օգտագործելով «խոշոր չափ» և/ կամ «առանձնապես խոշոր չափ» եզրույթները՝ օրենսդիրը միաժամանակ հստակ սահմանել է, թե կոնկրետ առարկայի որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր: Հակառակ դեպքում իրավակիրառ մարմնի կողմից քննարկվող հասկացությունների կիրառումը կհանգեցնի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման, քանի որ գործի հանգամանքներով պայմանավորված չլինելու դեպքում բացակայում են իրավակիրառ մարմնի, այդ թվում՝ դատարանի կողմից այդ հասկացությունների բովանդակությունը որոշելու օբյեկտիվ չափանիշները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում նույն օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունների բովանդակությունը սահմանված չլինելը օրենսդրական բաց է, որի հետևանքով ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և 4-րդ մասի 3-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին (բավարար չափով կանխատեսելի չեն): Որպես արդյունքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը կամ 4-րդ մասի 3-րդ կետը չեն կարող հանդիսանալ անձին դատապարտելու հիմք:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է. առաջին ատյանի դատարանը համարել է, որ արարքի որակման հարցում նախաքննական մարմինն իրավական սխալ եզրահանգման է եկել, որն էլ հիմք է հանդիսացել վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով անհիմն մեղադրանք առաջադրելու համար: Մասնավորապես՝ նշել է, որ նախաքննական մարմինը Դ. Սիմիոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք առաջադրելիս, հափշտակության չափերի հետ կապված, կիրառել է անալոգիա, որն անթույլատրելի է: Դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ գլխում տեղ գտած «խոշոր չափ» հասկացության վերաբերյալ նշված

գլխում չկա օրենսդրական կարգավորում, այն է՝ իրավական որոշակիություն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն փաստել է, որ օրենսդիրը հափշտակության գումարի չափերը նախատեսել է կոնկրետ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում նախատեսված հանցագործությունների համար՝ բացառություն կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի համար, և եթե ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ընդգրկված լիներ հափշտակության չափերի հասկացության մեջ, ապա նույնպես ներառված կլիներ օրենսգրքի 21-րդ գլխի բացառություններում: Այսպիսով՝ վերաքննիչ դատարանը համարել է, որ վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ դատավճիռը բեկանելու և Դավիթ Սիմիոյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով վերաորակելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 14-19-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով զենք հափշտակելու չափերն օրենքով սահմանված չլինելու պայմաններում ամբաստանյալ Դ. Սիմիոյանին մեղադրված արարքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը) չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմի անմիջական օբյեկտը՝ հրազենի և հոդվածում նշված այլ առարկաների շրջանառության համար սահմանված կարգը խախտելու հետ կապված, անձի և հասարակության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Լրացուցիչ օբյեկտ են սեփականության հարաբերությունները:

Հանցակազմի առարկա են հրազենը, ինչպես նաև հոդվածում նշված մյուս առարկանե-

րը (հրազենը համալրող դետալները, ռազմամթերքը, պայթուցիկ նյութերը կամ պայթուցիկ սարքերը):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձանոթ հասկացություններ կամ տերմիններ: (...)»:

Հրազեն հասկացությունը սահմանված է «Ձենքի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ դրա 1-ին հոդվածի բ) կետի համաձայն. «Հրազեն[ը]՝ վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին նպատակաուղղված շարժում ստացած գնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք[ն է], որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, փակաղակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Վերը մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առարկա է, ի թիվս այլնի, վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին նպատակաուղղված շարժում ստացած գնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված ցանկացած զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են փողը, փակաղակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը: Այլ կերպ ասած՝ ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա է ցան-

կացած տեսակի հրազեն՝ առանց որևէ բացառության²:

Բացի դրանից՝ սույն հանցակազմի (ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդված) որակմանն առնչվող մի շարք առանձնահատկությունների կապակցությամբ՝ իրավաբանական գրականության մեջ տեղ են գտել մոտեցումներ՝ սարքին կամ ոչ սարքին վիճակում գտնվող հրազենի կամ ռազմամթերքի, դրանց բաղկացուցիչ մասերը կազմող դետալների հափշտակության քրեաիրավական գնահատման հետ կապված հարցերի վերաբերյալ: Մասնավորապես՝ գոյություն ունեցող տեսակետներից մեկի համաձայն՝ հրազենի և ռազմամթերքի բաղկացուցիչ մասերին, ինչպես նաև դրանց հավաքածուների մեջ ներառվող դետալներին տիրանալու նպատակով կատարված այն հափշտակությունը, որը բավարար է օգտագործման համար պիտանի զենք կամ ռազմամթերք հավաքելուն, հիմք է՝ հափշտակության ավարտված հանցակազմի ձևավորման համար³:

Ընդ որում՝ սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության հարցը կարող է ի հայտ գալ ոչ միայն նպատակային օգտագործման համար պիտանի, այլև՝ անսարք կամ ուսումնական նշանակություն ունեցող զենք հափշտակելու կամ շորթելու դեպքում, եթե հանցավորն իրական հնարավորություն և մտադրություն է ունեցել այդ զենքը՝ նպատակային օգտագործմանը պիտանի դարձնելու համար⁴:

Այն դեպքում, երբ հանցավորը հափշտակում է անպիտան վիճակում գտնվող զենք կամ նմանատիպ այլ առարկաներ՝ մոլորության մեջ գտնվելով դրա որակական հատկանիշների նկատմամբ (թյուրիմացաբար կարծելով, թե դրանք սարքին են), ապա արարքը պետք է որակվի որպես զենքի հափշտակության փորձ⁵:

Նշված առարկաների *հափշտակություն* կարող է համարվել դրանց յուրաքանչյուր եղանակով ապօրինի տիրանալը՝ այդ առարկանե-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի նույն որոշումը:
³ Տե՛ս Курс уголовного права. Особенная часть. Том 4. Учебник для вузов. Под ред. док. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и док. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002, с. 345:
⁴ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики. Под общей ред. заместителя Министра внутренних дел РФ – начальника След. Комитета при МВД России, генерал-майора юстиции В.В. Мозякова. ЭКЗАМЕН, М., 2002г., с. 531:
⁵ Տե՛ս Курс уголовного права. Особенная часть. Том 4. Учебник для вузов. Под ред. док. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и док. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002, с. 344-345:

որ յուրացնելու կամ ցանկացած այլ ձևով դրանք տնօրինելու, ինչպես նաև երրորդ անձի փոխանցելու մտադրությամբ: Ընդ որում՝ նշանակություն չունի՝ թե՛ կատարվել է օրինական, թե՛ անօրինական տիրապետողից: Հափշտակության բոլոր եղանակների դեպքում (բացի ավազակությունից) հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը, իր հայեցողությամբ, իրական հնարավորություն է ստանում տնօրինելու հափշտակվածը: Ավազակության եղանակով կատարված հափշտակության դեպքում հանցագործությունն ավարտված է համարվում հարձակման պահից⁶:

Եթե զենքի կամ այլ առարկաների հափշտակությունը կամ շորթումը կատարվել է այլ հանցագործություն իրականացնելու նպատակով, ապա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ ավարտված հափշտակության կամ շորթման և մեկ այլ հանցագործության կատարման նախապատրաստության համար⁷:

Հանցավորը չի կարող ազատվել նախատեսված պատասխանատվությունից, եթե հափշտակված զենքը՝ այլ հակաօրինական գործողություններ իրականացնելուց կամ այլ նպատակներով օգտագործելուց հետո, ոչնչացվել է, թողնվել դեպքի վայրում կամ հետ է վերադարձվել⁸:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ՝ ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործությունները դեռևս չեն կարող իրենց հստակ քրեաիրավական որակումը ստանալ այնքան ժամանակ, քանի դեռ օրենսդրի կողմից սահմանված չեն հանցագործության առարկայի (ներքի), մասնավորապես՝ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը:

Հաշվի առնելով առկա օրենսդրական բացերը, ինչպես նաև վերը նշված հանցակազմի հանրային վտանգավորության աստիճանը՝ **առաջարկվում է**. ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի 5-րդ կետով, կամ՝ առանձին ծանոթագրության տեսքով, սահմանել (նախատեսել) զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի՝ **«զգալի», «խոշոր» և «առանձնապես խոշոր»** չափերի հասկացությունները: Ընդ որում՝ խիստ կարևոր է դրանց հնարավոր չափերը որոշելիս հաշվի առնել նաև հանրային վտանգավորություն ներկայացնող այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ՝ զենքը, ռազմամթերքը, պայթուցիկ նյութերը և պայթուցիկ սարքերը հափշտակելու կամ շորթելու հետևանքով:

Բացի դրանից՝ որոշակի օրենսդրական բացթողումներ են նկատվում նաև ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի դիպոզիցիայում ներառված՝ **«պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր»** հասկացությունների, իրավական (օրենսդրական) բնորոշումների հետ կապված: Խնդիրն այն է, որ «Ձենքի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում, ի թիվս այլ հասկացությունների (*օրինակ՝ «հրազեն», «սառը զենք», «նեյտղական զենք», «օդածնշիչ զենք», «զազային զենք», «փամփուշտ», «զենքի և հրազենի հիմնական մասեր», «զենքի արտադրություն», «զենքով պարզևարում» և այլն*), «պայթուցիկ նյութ» կամ «պայթուցիկ սարք» հասկացությունների վերաբերյալ որևէ իրավական բնորոշում տրված չէ, ինչը, միանշանակ, կարելի է դիտարկել որպես **«Ձենքի մասին» ՀՀ օրենքի էական բացթողում**: Հիշյալ օրենքը չի սահմանում նաև՝ *«միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք»,* ինչպես և *«զանգվածային ոչնչացման զենք ստեղծելիս օգտագործվող նյութեր կամ դրանց օժանդակ նյութեր կամ սարքավորումներ»* (ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածի 2-րդ մաս) հասկացությունների իրավական բնորոշումները: Տվյալ

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազիսյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 509:

⁷ Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Под общей редакцией док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ В.М. Лебедева и док. юрид. наук, профессора Ю.И. Скуратова, издательство НОРМА, М., 2002г., с. 584:

⁸ Տե՛ս Уголовное право России /части общая и особенная/. Учебник для бакалавров, издание второе, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Рапог, М. 2017г., с. 477.

հանգամանքը, հատկապես՝ իրավական որոշակիության տեսանկյունից (օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 235-րդ և 238-րդ հոդվածների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի ձևավորման իմաստով), հետագայում նույնպես որոշակի իրավական խնդիրների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ:

Մինչույն ժամանակ՝ անհասկանալի է օրենսդրի կողմից որոշ քրեաիրավական նորմերի վերաբերյալ ցուցաբերած՝ մեկ այլ ոչ միանշանակ մոտեցում ևս: Մասնավորապես՝ ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելու համար, այն դեպքում, երբ ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածը գազային, սառը կամ նետո-

ղական զենք հափշտակելու կամ շորթելու համար որևէ քրեաիրավական պատասխանատվություն չի նախատեսում: Այստեղ՝ միանշանակ է այն իրողության հիմնավորումը, որ գազային, սառը կամ նետողական զենքի հափշտակությունը կամ շորթումը նույնպես պակաս հանրային վտանգավորություն չունի, քան հրագենի, դրան համալրող դետալների, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի հափշտակությունը կամ շորթումը: Ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի հետագա բարեփոխումների իմաստով, ավելի նպատակային կլիներ, եթե ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածը՝ ի թիվս մնացածի, պատասխանատվություն նախատեսեր նաև՝ գազային, սառը կամ նետողական զենքը հափշտակելու կամ շորթելու համար:



ՀՈՎԱՏՓ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայ-ռուսական պետական համալսարանի
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
մագիստրանտ

ԿԵՂԾ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. ՕՔՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածը կեղծ ձեռնարկատիրությունը բնորոշում է երկու ինքնուրույն հանցակազմերի միջոցով: Դիտարկվող հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կեղծ ձեռնարկատիրություն է համարվում առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրությամբ առևտրային կազմակերպություն ստեղծելը, որի նպատակն է վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ արգելված այնպիսի գործունեություն թաքցնելն է, որը խոշոր վնաս է պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը: Նշված հանցակազմի կառուցվածքը համարյա ամբողջությամբ կրկնում է ԱՊՀ Մոդելային քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածում ամրագրված հանցակազմը:¹

ՀՀ քրեական օրենսգրքի² 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կեղծ ձեռնարկատիրություն է նաև առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը, որը խոշոր վնաս է պատճառել:

Ինչպես հայտնի է՝ նյութական հանցակազմերում կարևորագույն նշանակություն ունի արարքի և առաջացած հետևանքների միջև պատճառահետևանքային կապի առկայության հարցը: Պատճառահետևանքային կապը հանրորեն վտանգավոր արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև այն օբյեկտիվ կապն է, որ

րի առկայությունը պարտադիր պայման է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Հանդիսանալով օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ՝ պատճառահետևանքային կապը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ համաձայն, ենթակա է ապացուցման յուրաքանչյուր քրեական գործով:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում նշել է, որ ՀՀ ՔՕ 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելով, որը նպատակ է հետապնդել՝ ա) վարկեր ստանալ, բ) հարկերից խուսափել, գ) գերավճարներ առաջացնել, դ) նյութական այլ օգուտներ քաղել, ե) արգելված գործունեությունը թաքցնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերը նյութական են, դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանրության համար վտանգավոր հետևանքը՝ խոշոր վնաս պատճառելը:³ Այլ կերպ ասած՝ եթե վերը թվարկված գործողությունների հետևանքով քաղաքացուն, կազմակերպությանը կամ պետությանը խոշոր վնաս չի պատճառվել, ապա անձին հնարավոր չէ քրեական պատասխանատվության ենթարկել ավարտված հանցագործություն կատարելու համար:

Ինչպես ցանկացած նյութական հանցակազմում՝ այստեղ ևս օբյեկտիվ կողմ պարտադիր հատկանիշներ են գործողությունը, հետևանք

¹ Волженкин Б. В. Преступления в сфере экономической деятельности (экономические преступления). – СПб.: Изд-во «Юридический центр Пресс», 2002. С. 632.

² Այսուհետ՝ ՔՕ:

³ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի Ա. Միքայելյանի և Ա. Վաղարշակյանի վերաբերյալ 2012 թ. դեկտեմբերի 5-ի ԵԱԲԴ/0174/01/11 որոշում//ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, Երևան, 2012, էջ 553:

քը և պատճառահետևանքային կապը դրանց միջև: Նշված հանցակազմի համար գործողությունն արտահայտվում է առևտրային կազմակերպություն ստեղծելու ձևով, հետևանքը՝ կազմակերպության ստեղծելու պատճառով քաղաքացուն, կազմակերպությանը կամ պետությանը խոշոր վնասն է: Ըստ տրամաբանության՝ կազմակերպություն ստեղծելու և վնասի միջև պետք է գոյություն ունենա անմիջական պատճառահետևանքային կապ: Սակայն արդյոք հնարավոր է իրականում, միայն կազմակերպություն ստեղծելով, խոշոր վնաս պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը: Մեր կարծիքով՝ ոչ: Չուտ կազմակերպության ստեղծումը չի կարող դիտվել որպես վնաս պատճառող գործունեություն: Հակառակ դեպքում ստացվում է, որ հենց կազմակերպություն ստեղծելն է վնաս պատճառում, ինչն անհրաժեշտ պայմանի տեսության տեսանկյունից անհնար է: Ստեղծված կազմակերպությունը կարող է և գործունեություն չծավալել, և այդ դեպքում վնաս ընդհանրապես չի պատճառվի: Եվ ընդհակառակն. ցանկացած, արդեն իսկ ստեղծված կազմակերպություն կարող է գնվել երրորդ անձի կողմից, ով դա կօգտագործի կեղծ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար, սակայն այս դեպքն ընդհանրապես չի ընդգրկվում դիտարկվող հանցակազմով: Մեր կարծիքով՝ վնասն ավելի շուտ հանցավոր գործունեության, այլ ոչ թե՛ կազմակերպության ստեղծման օրինաչափ հետևանքն է: Կազմակերպության ստեղծումը վնասի հետ ունի միայն միջնորդավորված կապ: Դիտարկվող հանցակազմի ներկայիս ձևակերպման հետևանքով կորում է պատճառահետևանքային շղթայի ամենակարևոր օղակը՝ հենց կազմակերպության բուն գործունեությունը: Այսինքն՝ պատճառահետևանքային կապը, մեր կարծիքով, պետք է ունենար հետևյալ տեսքը. «առևտրային կազմակերպության ստեղծում» – «կազմակերպության գործունեություն» – «կազմակերպության գործունեության հետևանքով առաջացած վնաս», ինչը նշված դեպքում պահպանված չէ:

Ընդհանրապես՝ անհրաժեշտ է նշել, որ քննարկվող հանցակազմի ձևակերպումը հակասական է, քանի որ «ստեղծելը, որի նպատակն է» ձևակերպումն արդեն իսկ ենթադրում է հատված հանցակազմ, մինչդեռ «որը խոշոր վնաս է պատճառել» ձևակերպումը, ընդհակառակն՝ նյութական հանցակազմի ցուցիչ է: Եվ այս ձևակերպումն է, որ դառնում է տարաբնույթ հակասությունների պատճառ: Այդպիսի հանցակազմն իր մեջ պարունակում է մտքերի և մտադրությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վտանգ, ինչը հակասում է քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին:

Այսպիսով՝ կարծում ենք, որ քննարկվող հանցակազմը ենթակա է շտկման, ինչը տեսականորեն հնարավոր է կատարել մի քանի տարբերակով:

Առաջին՝ արարքը կարելի է վերաշարադրել որպես ձևական հանցակազմ: Այդպիսի մոտեցում կա Վրաստանի (198-րդ հոդված)⁴, Ուկրաինայի (205-րդ հոդված)⁵, Ուզբեկստանի (179-րդ հոդված)⁶ քրեական օրենսգրքերում, որտեղ վերլուծվող հանցագործության հանցակազմը ձևական է, և հանցագործությունը համարվում է ավարտված համապատասխան հակաիրավական նպատակներով իրավաբանական անձի ստեղծման պահից: Սակայն նշված նպատակները կարող են առկա լինել ինչպես կազմակերպության ստեղծման պահին, այդպես էլ ի հայտ գան դրանից հետո, երբ անձն արդեն իսկ գրանցել է կազմակերպությունը, բայց, հանդիպելով ձեռնարկատիրություն իրականացնելու համար որոշակի դժվարությունների, որոշում է օգտագործել որպես գործիք՝ կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու համար: Մեր կարծիքով՝ նշված հանցակազմը չի կարող լիարժեք կատարել իր կանխարգելիչ դերը: Պատժել այն նպատակների համար, որոնք դեռևս չեն արտացոլվել հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ, նշանակում է ենթարկել քրեական պատասխանատվության մտադրությունների համար, ինչը քրեական իրավունքի տեսության տեսանկյունից անընդունելի է: ՀՀ

⁴ Уголовный кодекс Грузии//<https://matsne.gov.ge/ka/document/download/16426/143/ru/pdf>

⁵ Уголовный кодекс Украины//<https://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/>

⁶ Уголовный кодекс Узбекистана// <http://lex.uz/docs/111457>

ՔՕ 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՔՕ-ով: Հետևաբար՝ արարքը պետք է ներառի հասարակական վտանգ: Ինչքան էլ անձի մտադրությունները և նպատակները թվան հանրության համար վտանգավոր, դրանք չեն կարող հանդիսանալ քրեական պատասխանատվության հիմք: Այդ իսկ պատճառով կեղծ ձեռնարկատիրության վերափոխումը ձևական հանցակազմի, մեր կարծիքով, ընդունելի չէ:

Երկրորդ տարբերակի համաձայն՝ հանցակազմը կարելի է ձևակերպել այնպես, որ քրեորեն հետապնդելի արարք համարվի կեղծ առևտրային կազմակերպության կողմից իրականացված այնպիսի գործունեություն իրականացնելը, որը խոշոր վնաս է պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը: Հենց այս տարբերակով է ներկայիս իրավակիրառ պրակտիկայում ընդունված մեկնաբանել այս հանցակազմը: Սակայն այս տարբերակը նույնպես զերծ չէ թերություններից: Այս դեպքում էլ արհեստականորեն ստեղծվում են բարդություններ որակման համար, քանի որ այս տարբերակով հանցակազմը համարյա չի տարբերվում հարակից հանցակազմերից, օրինակ՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումներ վճարելուց չարամտորեն խուսափելուց (ՀՀ ՔՕ 205-րդ հոդված) կամ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելուց (ՀՀ ՔՕ 184-րդ հոդված): Օրինակ՝ կեղծ ձեռնարկատիրությունը հաճախ կարող է ամբողջապես ներառել կեղծ ձեռնարկատիրոջ գործողությունները, որոնք ուղղված են հարկերից խուսափող կոնտրագենտին օժանդակելուն: Որպես կանոն՝ այդ դեպքում գործողությունը որակվում է միայն որպես կանխամտածված ձեռնարկատիրություն, և լրացուցիչ որակում 205-ով չի պահանջվում: Փաստորեն, որոշ դեպքերում կեղծ ձեռնարկատիրությունը նույնն է, ինչ հարկերից խուսափելուն օժանդակելը, և կարող է որակվել ինչպես ՀՀ ՔՕ 38-205-րդ հոդվածով, այնպես էլ ՀՀ ՔՕ 189-րդ հոդվածով: Սա, ինչպես դժվար չէ

նկատել, նորմերի մրցակցություն է (կոնկուրենցիա): Նույն արարքի համար երկու տարբեր պատժաչափերի կիրառման հնարավորությունը լուրջ խնդիր է: Այս իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ կեղծ ձեռնարկատիրությունն իրականում վերը նշված հանցակազմերի մասնավոր դեպքն է և տարբերվում է դրանցից միայն կատարման եղանակով, ուստի առանձին հանցակազմով քրեական օրենքում ամրագրելը կարելի է համարել չարդարացված մոտեցում և ավելորդ դժվարացնում է իրավակիրառ պրակտիկան:

Գոյություն ունի նաև վերոնշյալ նորմի փոփոխման երրորդ տարբերակ, որն առաջարկվել է Տ.Վ.Դոսյուկովայի կողմից,⁷ այն է՝ կեղծ ձեռնարկատիրությունը վերածել ձևական հանցակազմի և պատասխանատվության ենթարկել ապօրինի գործունեության համար, որն իրականացվում է կեղծ ձեռնարկատիրական կառուցվածքների ներքո: Սակայն, մեր կարծիքով՝ այդպիսի մոտեցումը նույնպես զերծ չէ թերություններից, քանի որ կեղծ առևտրային կազմակերպությունները կարող են թաքցնել միայն, մեր կարծիքով՝ հանցավոր, այլ ոչ թե՛ ցանկացած ապօրինի գործունեություն: Կազմակերպության ստեղծումը միայն քրեական օրենսդրությամբ պատժելի արարքների կատարման եղանակ է, հակառակ դեպքում կարող է քրեականացվել նաև վարչական իրավախախտումը: Կեղծ կազմակերպության միջոցով կարելի է թաքցնել հետևյալ հանցագործությունները. խարդախություն, պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն տրամադրելը, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի օրինականացումը, կեղծ փողի և արժեթղթերի իրացումը և թմրանյութերի ու հոգեմետ նյութերի իրացում, պահում, պատրաստում և այլն:

Այսպիսով՝ շտկել նշված հանցակազմը հնարավոր չէ, քանի որ շտկման համար առաջադրվող ցանկացած տարբերակ կամ համընկնում է արդեն իսկ գոյություն ունեցող հանցակազմի հետ, կամ քրեական պատասխանատվություն է առաջացնելու այնպիսի գործողությունների համար, որոնք հանրորեն վտանգավոր չեն:

⁷ Досюкова, Т. В. Уголовная ответственность за лжепредпринимательство: Автореферат дисс... кандидата юридических наук. – М., 1997. – 26 с. // <http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=1237518>

Օտարերկրյա փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կեղծ ձեռնարկատիրության հանցակազմեր նախատեսված են կամ նախատեսված են եղել, օրինակ, ՌԴ-ում, Ղազախստանում, Բուլղարիայիում⁸ և այլուր: Այն պետություններից շատերը, որոնք իրենք քրեական օրենսգրքը ձևավորել են ԱՊՀ Մոդելային քրեական օրենսգրքի հիման վրա, վերացրել կամ փորձում են վերացնել կեղծ ձեռնարկատիրության հանցակազմը:

Այսպես՝ 1996 թվականի մայիսի 24-ին ընդունված ՌԴ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածը նախատեսում էր կեղծ ձեռնարկատիրության հանցակազմ, որի ձևակերպումը նույնական էր ՀՀ ՔՕ-ի 189-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս խմբագրության հետ:⁹ Սակայն տեսական գրականության մեջ բազմիցս մատնանշվել է հանցակազմի թերի լինելու փաստը:¹⁰ Օրինակ՝ Ն.Ա. Դեոլենկոն նշում է, որ նպատակահարմար չէ ՌԴ ՔՕ-ի Հատուկ մասի կառուցվածքի մեջ որպես ինքնուրույն հանցակազմ ունենալ քրեաիրավական նորմ, որը նախատեսում է պատասխանատվություն կեղծ ձեռնարկատիրության համար, այլ անհրաժեշտ է դա ՌԴ ՔՕ-ի 159-րդ, 176-րդ, 199-րդ հոդվածների համար նախատեսել որպես որակող հատկանիշ՝ «պաշտոնապես գրանցված իրավաբանական անձի օգտագործմամբ»:¹¹ Ձևակերպման անորոշության և այլ հանցակազմերի կրկնության պատճառաբանությամբ նշված հոդվածը 2010 թ. հուլիսի 13-ի թիվ №15-Ո ՌԴ Դաշնային օրենքով ուժը կորցրած ճանաչվեց: Ներկայումս կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու դեպքում անձն ենթարկվում է քրեական պատասխանատվության խարդախության, հարկերի կամ տուրքերի վճարումից խուսափելու և այլ հարակից հանցակազմերով:

Կեղծ ձեռնարկատիրության հանցակազմ

նախատեսում էր նաև Ղազախստանի քրեական օրենսգրքը (հոդված 215), որը 2017 թվականի հուլիսի 13-ի օրենքով նույնպես ճանաչվել է ուժը կորցրած:¹² Վերոնշյալ հանցակազմի բացառման անհրաժեշտությունը Ղազախստանի քրեական օրենսգրքից հիմնավորվել է այնքանով, որ այդ հանցակազմն անհարկի բարդություններ էր ստեղծում հարկերից խուսափելու, ապօրինի վարկեր ստանալու, ինչպես նաև ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու հանցակազմերի որակման գործընթացում:

Վերը նշված վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության.

1. ՀՀ ՔՕ-ի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը բովանդակում է հանցակազմի օբյեկտիվ կողմի ձևակերպման էական թերություն. նախատեսված արարքի և հետևանքի միջև բացակայում է պատճառահետևանքային կապը:

2. Հանցակազմը չի նախատեսում քրեական պատասխանատվություն այն դեպքում, երբ կեղծ ձեռնարկատիրության գործունեությունը ծավալվել է ոչ թե կազմակերպության ստեղծողի, այլ՝ կազմակերպության ձեռք բերողի կողմից, երբ այդ ձեռքբերման նպատակն է վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ արգելված գործունեություն թաքցնելը:

3. ՀՀ ՔՕ-ի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը հնարավոր չէ շտկել, ուստի ավելի նպատակահարմար է ուժը կորցրած ճանաչելը:

4. Անհրաժեշտություն է առաջանում այն բոլոր հանցակազմերում, որոնք հնարավոր է կատարել գրանցված առևտրային կազմակերպության օգտագործմամբ, ավելացնել համապատասխան որակող հատկանիշ:

⁸ Уголовный кодекс Республики Болгария / ред.кол.: А.И. Лукашев (науч.ред.) и др.; пер.с болг. Д.В. Милушев, А.И. Лукашев; вступит. ст. И. И. Айдаров (Уголовные кодексы стран Восточной Европы).– М.: Тесей, 2000. с. 124.

⁹ Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. 2-е изд., изм. и доп. / под ред. Ю.И. Скуратова, В.М. Лебедева.– М.: НОРМА-ИНФРА, 1999. С. 390.

¹⁰ Жовнир С. А. Уголовная ответственность за лжепредпринимательство: Автореферат дисс... кандидата юридических наук.– Хегай.– М.,2002. 26 с.

¹¹ Деуленко Н. А. Лжепредпринимательство: понятие, формы и уголовно-правовое значение: дис. к. ю. н. / Академия управления МВД РФ.– М., 2002. С. 95.

¹² Закон Республики Казахстан “О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты Республики Казахстан по вопросам совершенствования правоохранительной системы”// http://online.zakon.kz/Document/?doc_id=33354739#pos=1;-184

ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության մայոր,
Երևանի պետական համալսարանի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՃԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀՈՒՐՁ**

Ըստ Ադայանի բացատրական բառարանի՝ կանխարգելել նշանակում է նախօրոք արգելել՝ առաջն առնել¹: Հանցավորության կանխարգելումը մարդկանց, հասարակության, պետության պաշտպանությունն է հանցագործություններից²: Դեռևս 18-րդ դարի մեծ լուսավորիչները ձևավորել են դրույթ այն մասին, որ լավ օրենսդիրը պետք է հոգ տանի ոչ այնքան հանցագործության համար պատժի մասին, որքան դրա կանխման, և ամենից առաջ՝ բարքերի բարելավման ճանապարհով (Մոնտեսքյո, Բեկկարիա), այն, որ հանցագործությունների կանխարգելումը պետք է հանդիսանա քաղաքակիրթ հասարակության արդարաբարապետության բովանդակությունը (Վոլտեր)³:

Հանցավորության կանխարգելման առաջատար ուղղություններից է անչափահասների (այդ թվում՝ խմբային) հանցավորության կանխարգելումը: Վերջինս կանխիչ ներգործության միջոցների բարդ, բազմաբնույթ համալիր է, որի նպատակն է ոչ միայն և ոչ այնքան հանցագործությունների քանակի նվազեցումը և ցածր մակարդակում պահելը, որքան, որից կախված է երկրի ապագան կանխորոշող աճող սերնդի սոցիալական և բարոյական առողջացումը⁴:

Անչափահասների խմբային հանցավորության խնդիրները կանխարգելման ընդհանուր մակարդակում, որպես կանոն, միշտ իրականացվել են անչափահասների ընդհանուր հանցավորության կանխարգելման համատեքստում: Ընդ որում՝ անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր կանխարգելման միջոցները կարող են համընկնել անչափահասների ընդհանուր հանցավորության կանխարգելման միջոցների հետ, որովհետև երկուստեք ուղղված են անչափահասների միջավայրի առողջացմանը:

Ընդհանուր կանխարգելման միջոցները, որպես կանոն, ուղղված են մարդկանց նյութական բարեկեցությունը, աշխատանքի և հանգստի պայմանները բարելավելուն, ինչպես նաև հասարակությունում այլ դրական փոփոխությունների⁵:

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցները պետք է ուղղված լինեն առաջին հերթին բարելավելու դեռահասների դաստիարակությունն ընտանիքում, դպրոցում, ձևավորելու նրանց ժամանցը:

Կասկած չի հարուցում, որ, առաջին հերթին՝ անհրաժեշտ է կանխարգելել անչափահասների

¹ Տե՛ս Է.Բ. Ադայան Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, հատոր 1, էջ 688: (ընդհ. 1-ին հատորը 932 էջից):
² Տե՛ս Արակեյան Ս.Վ. Преступное насилие / Ս.Վ. Аракеян; под. ред. доктора юрид. наук, профессора Ю. М. Антоняна.– Ереван: Изд-во ЕГУ, 2013, էջ 207:
³ Տե՛ս Криминология: Учебник / Под. ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова.– 3-е изд., перераб. и доп.– М.: ЮристЪ, 2007, էջ 265: /ընդհ. 734 էջից/
⁴ Տե՛ս Криминология: Учебник / Под. общ. ред. А.И.Долговой.– 3-е изд., переаб. и доп.– М.: Норма, 2005, էջ 797: (ընդհ. 912 էջից)
⁵ Տե՛ս Ларичев Василий Дмитриевич. Общесоциальное предупреждение преступности. Что это, вид криминологического предупреждения преступности или просто поступательное развитие общества? (постановка вопроса) // Общество и право. 2011. №1 (33). էջ 130 /131-133/ URL: <https://cyberleninka.ru/article/n/obschesotsialnoe-preduprezhdenie-prestupnosti-chto-eto-vid-kriminologicheskogo-preduprezhdeniya-prestupnosti-ili-prosto> (дата обращения: 19.02.2019)

հասանելի հանցավոր խմբերի ծագումը, ինչին կարող են նպաստել ընդհանուր կրթական, մշակութադաստիարակչական և օպերատիվ բնույթի միջոցառումները: Հատուկ ուշադրություն են պահանջում անչափահասների հակահասարակական ուղղվածությամբ խմբերը, որոնց հանցավորի վերաճումը տեղի է ունենում շրջապատողների աչքի առաջ: Խմբերի հանցավորի վերաճման գործընթացի կանխարգելումը պետք է կառուցել ընտանեկան մթնոլորտի առողջացման, միկրոշրջապատի բացասական ազդեցության չեզոքացման, անչափահասների ազատ ժամանակի պլանավորման գործընթացում ուսումնական և զբաղմունքի (ժամանցի) հաստատությունների դերի բարձրացման միջոցով:

Ընտանիքը, հանդիսանալով անձի սոցիալականացման կարևորագույն ինստիտուտը, ոչ միայն պարտավոր է երեխաներին դաստիարակել բարոյականության և օրենքները հարգելու ոգով, այլ նաև ընտանիքից դուրս նրանց զերծ պահելու վնասակար ազդեցությունից, առաջին հերթին՝ փոքր ոչ ֆորմալ խմբերի, ինչպես նաև նրանց մեջ ձևավորելու միջավայրի հակահասարակական և հանցավոր ազդեցություններին հակազդելու կարողություն, ինչին կարող է խոչընդոտել ընտանեկան անբարենպաստությունը, ուստի կանխարգելելու համար անհրաժեշտ է հատուկ քաղաքականություն, որի շրջանակում՝

- միջոցներ կձեռնարկվեն՝ հայտնաբերելու այն ընտանիքները, որտեղ կա ընտանեկան անբարենպաստություն,
- կուսումնասիրվեն անբարենպաստության պատճառներն ու հետևանքները,
- միջոցներ կձեռնարկվեն ընտանեկան անբարենպաստությունը կրճատելու, հնարավորության դեպքում՝ վերացնելու ուղղությամբ:

Անբարենպաստ ընտանիքների հայտնաբերումը, որպես կանոն, իրականացվում է ուստիականությունում դպրոցներից՝ երեխայի(ների) պարտադիր ուսումից խուսափելու վերաբերյալ ստացված հայտարարությունների հիման վրա: Թերևս՝ նման դեպքերում գործ ունենք այն ընտանիքների հետ, որտեղ երեխաներն արդեն ունեն խնդիրներ: Կարծում ենք՝ պետք է միջոցներ ձեռնարկվեն ընտանեկան անբարենպաս-

տության վաղ հայտնաբերման ուղղությամբ, քանի դեռ դրանից երեխաները չեն տուժել: Այդ նպատակով պետք է օգտագործել դպրոցի ողջ ներուժը՝ մանկավարժների, հոգեբանի, սոցիալական աշխատողի, որոնց միջոցով առաջին հերթին հնարավոր կլինի հայտնաբերելու այն ընտանիքները, որտեղ երեխաները կարող են ունենալ խնդիրներ: Բացի այդ՝ ընտանիքների վերաբերյալ տեղեկատվություն կարող են հայտնել հարևանները, ազգականները, կարծում ենք՝ այստեղ կարելի է օգտագործել նաև համատիրությունների հնարավորությունները, քանի որ համատիրության տեսուչները, սպասարկելով կոնկրետ տարածք, շենքեր, բնակարաններ, կարող են գնահատել ընտանեկան անբարենպաստության առկայությունը:

Հայտնաբերելով անբարենպաստ ընտանիքները՝ հաջորդ քայլը պետք է լինի անբարենպաստության գնահատումը և դրա հնարավորինս վերացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Որպես այդպիսին՝ կարծում ենք՝ առաջին հերթին խոսքը պետք է վերաբերի սոցիալական աջակցության ցուցաբերմանը, որն իրականացվում է՝ «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքների համաձայն: Այստեղ խնդիր ենք համարում այն հանգամանքը, որ մարդիկ ցածր իրավագիտակցության պատճառով հաճախ սոցիալական աջակցությունը նույնացնում են սոցիալ-տնտեսական օգնության հետ և դիմում են միայն նյութական օգնություն ստանալու համար, մինչդեռ օրենքում սոցիալական աջակցությունն ավելի լայն բովանդակություն ունի և պարունակում է նաև սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական ծառայություններ: Այստեղ շատ կարևոր ենք համարում, որպեսզի կյանքի կոչվեն օրենքներն ամբողջ ծավալով, հատկապես՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 7-րդ հոդվածում ամրագրված հասցեականության՝ սոցիալական ծառայությունների տրամադրումն իսկապես դրա կարիքն ունեցող անձին և մատչելիության՝ տրամադրվող սոցիալական ծառայություններին հասանելիության ապահովումը, սկզբունքները, քանի որ հաճախ ենք ականատես լինում այն փաստերին, որ սոցիալական աջակցման պետական ծրագրերից օգտվում են մարդիկ, ովքեր

այնքան էլ անապահով չեն: Անհրաժեշտություն կա սոցիալական քաղաքականության հնարավորությունների և դրա հասցեատերերի լուսաբանման, որ մարդիկ իրազեկ լինեն և օգտվեն իրենց հասանելի օրենքով նախատեսված ծառայություններից ու օգնություններից: Պետք է միջոցներ ձեռնարկել, որպեսզի սոցիալական աջակցությունը շարունակական լինի և ոչ թե ժամանակավոր խնդրի լուծում և նպատակ հետապնդի՝ անչափահասին, անձին, ընտանիքին կյանքի դժվարին իրավիճակից վերջնական դուրս բերելու:

Կարևորում ենք ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանն ուղղված միջոցները: Միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ հոգեբանական, մանկավարժական աջակցություն ցուցաբերելու այն ծնողներին, որոնց մեջ առկա է դաստիարակության գործառույթի իրականացման անընդունակություն: Այս խնդիրների լուծումը կարևորվում է հատկապես ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում, որի նպատակն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: Սակայն, չթերազնահատելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի քաղաքականությունը, համարում ենք, որ դա բավարար չէ անչափահասների (այդ թվում և՛ խմբային) հանցավորության կանխարգելման խնդիրները լուծելու համար: Դա ընդամենը խնդրի լուծման մի բաղադրատարրն է: Բացի այդ՝ ռազմավարական ծրագրում ևս որպես հիմնախնդիր ամրագրված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի վաղ հայտնաբերման, ուղղորդման, խնդիրների կանխարգելման, վաղ և համակարգված միջամտության հարցերում միջգերատեսչական համագործակցության պակասը: Երեխաները գտնվում են տարբեր հաստատություններում և ունեն տարբեր խնդիրներ, և հաճախ երեխաների հետ աշխատող մասնագետները նկատում ու կարևորում են միայն ոլորտի հետ իրենց առնչվող խնդիրները: Հայաստանում բացակայում է երեխաների իրավունքների մշտադիտարկման և հաշվետվողականության համակարգը:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է անչափահասների (այդ թվում և՛ խմբային) հանցավորության

կանխարգելման քաղաքականություն, ազգային ռազմավարություն: Այդ խնդրի լուծման համար, ըստ մեզ, պետք է ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, որտեղ պետք է ընդգրկվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության, կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և մարզերում մարզպետարանների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, առողջապահության, սոցիալական ապահովության, հանրակրթության բաժինների ու վարչությունների, այս խնդրով հետաքրքրված հասարակական կազմակերպությունների և իրավապահ մարմինների ուժերն ու հնարավորությունները: Հարկավոր է միասնական քաղաքականություն՝ ազգային ռազմավարության մշակում, քանի որ միայն համատեղ ջանքերի շնորհիվ կարող ենք հասնել ցանկալի արդյունքի: Միջգերատեսչական հանձնաժողովը, որպես համակարգող մարմին, կմշակի հանրապետությունում անչափահասների (այդ թվում՝ խմբային) հանցավորության կանխարգելման քաղաքականություն, որը պատասխանատու կլինի ազգային ռազմավարության մշակման, մարտավարության ընդունման և դրա կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Ուսումնական հաստատությունների արդյունավետ աշխատանքն անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման գործընթացում կարևորագույն գործոն է, քանի որ անչափահասի վրա ունենում է դաստիարակչական ներգործություն: Ուսումնառության ընթացքում անչափահասները պետք է յուրացնեն հասարակությունում ընդունված վարքագծի նորմերը, բարոյական և էսթետիկական մտածողության փորձը, իրականության հանդեպ բարոյական և էսթետիկ վերաբերմունքը, գաղափարական հայացքների համակարգը: Դպրոցը սովորողներին բացատրում և փոխանցում է գիտելիքներ հասարակության կառուցման հիմնական սկզբունքների, ժողովրդավարական ինստիտուտների նշանակության մասին, զարգացնում է գիտակցական ընդունակություններ, սովորեցնում է գործել կոլեկտիվում: Թերևս՝ քրեական գործերի ուսումնասիր-

ման արդյունքներից տեսնում ենք, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների մի մասը հանցանքը կատարելու պահին եղել է դպրոցի կամ այլ ուսումնական հաստատության սան: Այսպես՝ հետազոտության համար մեր վերցրած ժամանակահատվածում, ըստ միջինացված ցուցանիշի, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 24,9% եղել է դպրոցի սովորող⁶: Մի կարևոր ցուցանիշ է, ըստ միջինացված ցուցանիշի, 11,7%-ն էլ եղել են քրեջի, ուսումնարանի սովորողներ: Այս ցուցանիշը ևս փոխկապակցված է դպրոցի հետ, քանի որ փոխարինում են ավագ դպրոցին և ուսումնական հաստատություններ են: Այս ոլորտին հատուկ ուշադրության բևեռացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անչափահասների հանցավոր խմբերի մի զգալի մասն էլ ձևավորվում է ուսումնական հաստատություններում:

Դպրոցն այն վայրն է, որտեղ ձևավորվում և մշակվում է դպրոցականի սոցիալական փորձը: Աշակերտը դպրոց է հաճախում ոչ միայն սովորելու սոցիումում ապրելու համար, այլև, 12 տարի դպրոց հաճախելով՝ անցնում է մարդու սոցիալականացման ճանապարհը, ճանապարհ՝ մանկությունից դեպի չափահասություն: Եվ այստեղ դպրոցի առաջադրանքն է ուսումնառության հետ մեկտեղ անչափահասների գիտելիքները համալրել այնպիսի հմտություններով, որոնք անհրաժեշտ են ողջ կյանքի և հասարակության մյուս անդամների հետ հարաբերությունների համար:

Դպրոցում կարևորում ենք պրոֆիլակտիկ աշխատանքների դերը, որոնց անցկացման համար պետք է մշակվեն պլաններ, որոնք կներառեն միջոցառումներ՝ իրավական և հայրենասիրական դաստիարակության, վատ սովորություններից ձերբազատվելու, առողջ ապրելակերպի քարոզչության վերաբերյալ: Ուսուցիչը, որ ամեն օր ուսումնական պարապմունքերին հանդիպում է աշակերտների հետ, կարող է ճիշտ ժամանակին ուշադրություն դարձնել հասակակիցների, ուսուցիչների, ուսման նկատմամբ անչափահասների նույնիսկ աննշան վար-

քային շեղումներին, որոնք ոչ միշտ են նկատելի: Հատկապես ընտանիքում, որպես կանոն, անչափահասների վարքագիծն էականորեն տարբերվում է այլ միջավայրում դրսևորած վարքագծից: Եթե նույնիսկ վարքագծային շեղումներն արտահայտվում են նաև ընտանիքի ներսում, ապա շատ ծնողներ այնքան կուրորեն են սիրում իրենց երեխաներին, որ ուղղակի ընդունակ չեն նկատելու երեխաների վարքագծի շեղումները: Իսկ ուսուցիչը, ում համար բոլոր աշակերտները միևնույն հարթության վրա են, ունակ է նկատելու ցանկացած աշակերտի վարքագծի փոփոխությունները: Հետևաբար՝ վաղ կանխարգելումն արդյունավետ հնարավոր է իրականացնել դպրոցում, քանի որ ուսումնական հաստատության ազդեցությունն անչափահասի նկատմամբ բավականին մեծ է, որովհետև այստեղ այն միջավայրն է, որին անչափահասն առնչվում է գրեթե ամեն օր: Եթե դպրոցում ժամանակին նկատվի անչափահասի վարքային շեղումը, ապա ոչինչ չի խանգարի դա կանխելու համար: Անչափահասի հաջող սոցիալականացումը հնարավոր է ծնողների և մանկավարժների համագործակցության պայմաններում: Դպրոցն այն միակ հասարակական ինստիտուտներից մեկն է, որն ունի ազատ մուտք անչափահասի ընտանիք, ինչը կարևոր հանգամանք է խնդիրներ ունեցող անչափահասների վարքագիծը վերահսկելու և շեղումները կանխարգելելու համար:

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման արդյունավետությանը կնպաստեն նաև այն միջոցները, որոնք կուղղվեն ուսումնական հաստատությունների գործունեության կատարելագործմանը: Մասնավորապես՝ կարող ենք առանձնացնել այն միջոցները, որոնք նպատակաուղղված են դպրոցի հեղինակության բարձրացմանը, գիտելիքի արժևորմանը, դպրոցից աշակերտի դուրս մնալը կանխելուն, մանկավարժների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը, ուսումնական հաստատության դաստիարակչական գործառույթի իրականացմանը, մանկավարժների կողմից անհրաժեշտության դեպ-

⁶ Մեր վերլուծությունն իրականացրել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ՀՀ դատական դեպարտամենտից ստացված՝ 2010-2015 և 2016-2017 թվականների քրեական գործերի ցանկերի² հիման վրա www.datalex.am կայքից վերցրած փորձառնական նյութերի ուսումնասիրությամբ:

քում աշակերտներին և նրանց ծնողներին սոցիալական ծառայությունների և իրավապահ մարմինների հետ համագործակցելու համար ուղղորդելուն և այլն:

Դպրոցի դերը հատկապես կարևորում ենք նաև այն առումով, որ խմբերի մի մասը ձևավորվում է ուսումնական հաստատություններում, և հենց այստեղ էլ պետք է միջոցներ ձեռնարկվեն դպրոցում աշակերտների սոցիալական շփման առողջացման ուղղությամբ: Անչափահասների ասոցիալ խմբերի կազմալուծման կամ վերակողմնորոշման աշխատանքների արդյունավետության հնարավորությունը բարձր է ուսումնական հաստատություններում, որտեղ հնարավոր է դրական ազդեցություն ունենալ աշակերտների միջև ձևավորված հարաբերությունների ենթամշակույթի վրա՝ միմյանց միջև, ինչն էլ նաև մանկավարժների հետ տարածայնությունները հարթելու նպատակով: Այս աշխատանքներում մեծ դերակատարում պետք է ունենան ոչ միայն մանկավարժները, այլ նաև հոգեբանները, սոցիալական աշխատողները, դպրոցի պատասխանատու ոստիկանության անչափահասների գործերով տեսուչները: Անհրաժեշտ է ուսումնական հաստատություններում, եթե չկան, ստեղծել կամ, եթե կան, ապա ակտիվացնել մշակութային, գեղագիտական, սպորտային խմբակները, ապահովել երեխաների ներգրավվածությունը, բացել երկարօրյա դասարաններ բոլոր դասարանների աշակերտների համար: Այստեղ կկարևորենք և կխրատենք արտադպրոցական կրթությունը, որի նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Տնտեսական արմատական փոփոխությունները հանգեցնում են աճող սերնդին ուղղված անհատական հատկանիշների նոր պահանջ-

ների՝ տնտեսական ակտիվություն, շահույթ ստանալու ձգտում, խոհեմություն, աշխատունակություն: Հետևաբար՝ հանցավորության ընդհանուր կանխարգելման համատեքստում հատուկ նշանակություն է ստանում անչափահասների և երիտասարդների աշխատանքային դաստիարակության նոր համակարգի ներդրումը, որը կներառի նրանց մասնագիտական կողմնորոշման աջակցությունը, աշխատանքի տեղավորվելու համար օգնության ցուցաբերումը, աշխատանքային տեղերի ստեղծումը:

ՀՀ օրենսդրությունն ամրագրում է 16 տարին լրացած անձանց աշխատանքային իրավունքը և նախատեսում է 14-16 տարեկանների աշխատանքի հնարավորությունը: Հետևաբար՝ աշխատելու ցանկություն և կարիք ունեցող անչափահասների աշխատանքով ապահովման հարցը պետք է հանդիսանա զբաղվածության ազգային քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը:

Անչափահասների խմբային հանցավորության քրեաբանական վերլուծության արդյունքները⁷ ցույց են տալիս անչափահասների զբաղմունքի և ազատ ժամանցի կազմակերպման խնդիրը:

Ժամանակակից պայմաններում կարևորվում է անչափահասների դրական ժամանցի և հանգստի կազմակերպման առավել խոր և կառուցակարգային մոտեցումը: Այսօր երեխաների զարգացման կրթական, մշակութային և բարոյական զարգացման մակարդակը կրել է որակական փոփոխություններ, քանի որ շատ ընտանիքներ իրենց սոցիալ-տնտեսական դրության պատճառով հնարավորություն չեն ունենում կազմակերպելու նրանց ժամանցն ու հանգիստը:

Անհրաժեշտ է անչափահասների ժամանցի կազմակերպման համակարգ, որը պայմաններ կստեղծի ժամանցը զուգակցելու անձի ֆիզիկական, հոգեկան, բարոյական զարգացման հետ: Դա պետք է հանդիսանա անչափահասների հարցերով պետական քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը: Ան-

⁷ Տե՛ս, օրինակ՝ Մարգարյան Ա.Ռ., Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ – Եր.:– Հայրապետ հրատ., 2017, էջ 157-158, Է. Ա. Кожевникова. Детерминанты преступности несовершеннолетних // Вестник Челябинского государственного университета. 2011. №19(234). Право. Вып. 28. էջ 101–103, Криминология: Учебник для вузов / Под. ред. проф. В.Д. Малкова.– 3-е изд., переаб. и доп.– М.: ЗАО «Юстицинформ», 2008, էջ 367: (ընդի 528):

չափահասների ազատ ժամանակի հագեցումը լրացնում են արտադպրոցական կրթության, մշակույթի, սպորտի, հանգստի (հատկապես՝ ճամբարները) հաստատությունները, մանկական և դեռահասների ակումբները, կենտրոնները: Թերևս՝ անչափահասների ժամանցի կազմակերպման գործում հաջողությունների և ձեռքբերումների կողքին սրվում է խնդիր՝ երեխաների և դեռահասների նշանակալից մասի համար օգտակար ժամանցի անհասանելիությունը՝ ազգաբնակչության նշանակալից զանգվածի նյութական անապահովածությամբ պայմանավորված: Այս խնդրի հաղթահարման համար կարող է դրական նշանակություն ունենալ հասարակական նախաձեռնությամբ բակային ժամանցի կազմակերպումը, այսինքն՝ մունիցիպալ մակարդակում, օրինակ, ակումբներ բացելով: Դա հնարավոր կլինի վարչական շրջանի ղեկավարության հետ համապատասխան պայմանագիր կնքելով՝ իրենց ֆինանսական և նյութատեխնիկական աջակցության շնորհիվ: Կարծում ենք՝ այս քայլը լուրջ դրական ներդրում կունենա ինչպես անչափահասների, այնպես էլ ընդհանուր հանցավորության կանխարգելման գործում: Հատկապես կանխատեսելի է դրական արդյունքն անչափահասների ոչ ֆորմալ խմբերի վրա, քանի որ ժամանակի ընթացքում աննպատակ ժամանցի, փողոցում թրև գալու պատճառով են ձևավորվում հակահասարակական, հանցավոր խմբերը: Ուստի բակային ժամանցի կազմակերպման շնորհիվ կկանխվի նաև այդ խմբերի՝ «հանցավորի» վերաճելու գործընթացը:

Անչափահասների ազատ ժամանցի հետ մեկտեղ՝ կարևորում ենք հանգստի կազմակերպումը, հատկապես՝ ամառային արձակուրդների ընթացքում: Նախկինում այդ հարցը լուծվում էր ճամբարների միջոցով, որոնք անվճար էին բոլորի համար: Ժամանակակից պայմաններում ևս գործում են ճամբարներ, սակայն՝ ոչ բոլորին հասանելի: Կարծում ենք՝ անհրաժեշտ է այստեղ մշակել և ներդնել պետական քաղաքականություն՝ հասանելի դարձնելով ոչ միայն

նյութապես անապահով և հատուկ կարգավիճակ ունեցող ընտանիքների, այլև հասարակության ավելի լայն զանգվածի համար: Կարելի է կյանքի կոչել ուսումնական հաստատության հիմքով ցերեկային ճամբարներ, որոնք, մի շարք հետազոտողների կարծիքով՝⁸ երեխաների արձակուրդային հանգստի կազմակերպման բավականին հասանելի ձև են ֆինանսապես խոցելի ընտանիքների համար:

Պետք է ակտիվացնել և առավել հասանելի դարձնել մանկապատանեկան մի շարք ծրագրեր՝ սկաուտներ և արշավներ, որոնք կունենան և՛ ժամանցի, և՛ զբոսաշրջության, և՛ ճանաչողական, և՛ հանգստի, և շփման նպատակ:

Այսպիսով՝ անչափահասների ժամանցի և հանգստի տարաբնույթ ձևերով կազմակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ աճող սերնդի համար առողջ կենսակերպի ապահովում, որի հետ մեկտեղ լուծվում են նաև անչափահասների (այդ թվում՝ խմբային) հանցավորության ընդհանուր կանխարգելման խնդիրները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր մակարդակում կանխարգելումը սոցիալ-տնտեսական, դաստիարակչական, կազմակերպչական, իրավական բնույթի միջոցների համակարգ է, որը կնպաստի աճող սերնդի կյանքի պայմանների բարելավմանը, դրական սոցիալականացման հիմնական ոլորտներից անչափահասների օտարմանը նպաստող գործոնների չեզոքացմանը, հնարավորության դեպքում՝ նաև վերացմանը: Եվ չնայած, որ ընդհանուր-սոցիալական բնույթի կանխարգելման միջոցները չեն կարող ունենալ հատուկ նշանակություն, սակայն կարող են էականորեն ազդել հանցավորության այս տեսակի մակարդակի, շարժի և կառուցվածքի վրա, քանի որ կստեղծեն պայմաններ՝ չեզոքացնելու, արգելափակելու կամ էլ վերացնելու այն գործոնների ազդեցությունը, որոնք պայմանավորում են անչափահասների հանցավոր խմբերի ձևավորումը և գործունեությունը:

⁸ Տե՛ս, օրինակ՝ Русинов А.П. Содержание и организация летнего отдыха детей и подростков в условиях летнего оздоровительного лагеря / А.П. Русинов // Вестник Алтайской государственной педагогической академии. – 2011. – N9, էջ 21-24:

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԼՈՒԻԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ)

Շարունակություն

2.3. Լռելյայն համաձայնությունը և ուղղակի համաձայնությունը

Լռելյայն համաձայնությունն անհրաժեշտ է տարբերակել *ուղղակի (պոզիտիվ)* համաձայնությունից: Ուղղակի համաձայնությունն իրավաբանական փաստ է, իսկ լռելյայն համաձայնությունը լռությունից բխող պայմանական եզրահանգում է, որին պոզիտիվ իրավունքով կամ գործարքով վերապահվել է իրավաբանական փաստի գործառույթ:

Եթե նորմի կիրառման համար պահանջվում է անձի համաձայնությունը (ուղղակի համաձայնությունը), ապա դրա բացակայությունը բացառում է նորմի կիրառումը: Անձն ուղղակի (պոզիտիվ) համաձայնություն կարող է հայտնել գրավոր, բանավոր կամ, ծայրահեղ դեպքում՝ կոնկլյուզենտ գործողությամբ, որոնցից ուղղակիորեն տեսանելի է նրա կամքի բովանդակությունը: Ուղղակի համաձայնության բացակայությունը թեև լռություն է (իրավաբանական փաստ է), սակայն լռելյայն համաձայնություն չէ: Համաձայնության ակտի բացակայությունն անհամաձայնություն է: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի»: Այս օրինակում՝ մարդուն կարելի է ենթարկել բժշկական փորձերի ուղղակի (պոզիտիվ) համաձայնության առկայության դեպքում: Եթե նման համաձայնությունը բացակայում է, ապա դա համարվում է բժշկական միջամտության ենթարկվելու անհամաձայնություն:

Եթե նորմի կիրառման համար բավարար է միայն առարկություն չներկայացնելը, ապա առարկության բացակայությունը (լռությունը)

կարող է համարվել որպես լռելյայն (պայմանական) համաձայնություն: Օրինակ՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ»: Այս օրինակում՝ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունած դատարանում գործը քննելու համար բավարար է պատասխանողի կողմից առարկություն չներկայացնելը (լռությունը), քանի որ իրավական նորմը ձևակերպելիս օրենսդիրը ղեկավարվել է այն ենթադրությամբ, թե պատասխանողը, առարկություն չներկայացնելով, ամենայն հավանականությամբ՝ համաձայն է գործն այդ դատարանում քննելու հետ:

Օրինակներից պարզ են դառնում նաև լռելյայն և ուղղակի համաձայնության օրենսդրական ձևակերպումների տարբերությունները: Եթե նորմի կիրառման համար բավարար է անձի լռելյայն (պայմանական) համաձայնությունը, ապա օրենսդիրն օգտագործում է, օրինակ՝ «առարկություն (անհամաձայնություն) չներկայացնել» ձևակերպումը, իսկ եթե պահանջվում է անձի ուղղակի համաձայնությունը, ապա օգտագործում է, օրինակ՝ «համաձայնությամբ», «միջնորդություն ներկայացնել» ձևակերպումները:

Ռուս ցիվիլիստ Դ. Մեյերը լռելյայն և ուղղակի համաձայնությունը մեկնաբանում էր այլ տրամաբանությամբ: Նա նշում էր. «Այն դեպքերում, երբ պահանջվում է, որպեսզի անձը ֆորմալ արտահայտի գործողության վերաբերյալ իր անհամաձայնությունը, լռությունն անհամաձայնության նշան է, իսկ այն դեպքերում, երբ պահանջվում է, որ անձը ֆորմալ արտահայտի գործողության վերաբերյալ իր համա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

ծայնությունը, լռությունը համաձայնության նշան է»¹: Հեղինակը ներկայացնում է հետևյալ օրինակը. «Մեր օրենսդրությունը երեխաների ամուսնության համար պահանջում է ծնողների համաձայնությունը: Գործնականում այս պահանջը հասկացվում է այնպես, որ ծնողների ֆորմալ համաձայնության անհրաժեշտությունը չկա, ուստի, եթե ծնողները գիտեն իրենց երեխաների ապագա ամուսնության մասին և անհամաձայնություն չեն հայտնում, ապա ընդունվում է, որ նրանք համաձայն են ամուսնության հետ, կամ մեզանում նույնիսկ ուշադրություն չեն դարձնում՝ ծնողները գիտեն երեխաների ապագա ամուսնության մասին, թե՛ ոչ, այլ բավարարվում են միայն ծնողների անհամաձայնության բացակայությամբ»²: Կարծում ենք՝ նման մեկնաբանությունը ստեղծում է իրավական խառնաշփոթ:

Ինչպես նշեցինք՝ եթե օրենսդիրն անձի կամքի արտահայտումը ձևակերպել է *համաձայնություն ներկայացնելու ձևաչափով*, ապա դա նշանակում է, որ մարդը պետք է իր կամքն արտահայտի *ուղղակի եղանակով (գրավոր, բանավոր կամ կոնկլյուզենտ գործողությամբ)*, այսինքն՝ դրանից պետք է հստակ տեսանելի լինի կամքի բովանդակությունը: Անձի պոզիտիվ համաձայնությունը պահանջող օրենսդրական կարգավորումը բացառում է կամքի արտահայտման վերաբերյալ որևէ պայմանական եզրահանգում, այլ պահանջում է կամքի ուղղակի և հստակ արտահայտում: Ուղղակի համաձայնության բացակայությունը անհամաձայնություն է:

Եթե օրենսդիրն անձի կամահայտնությունը ձևակերպել է *առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելու* ձևաչափով, ապա առարկության բացակայությունը կարող է արտահայտվել երկու եղանակով՝

1) ուղղակի (պոզիտիվ) կամահայտնությամբ, որից տեսանելի է կամքի բովանդակությունը, օրինակ՝ իրավասու մարմնին հասցեագրված նամակում մեղադրյալը հայտնում է, որ չի առարկում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ,

2) լռությամբ, որից կամքի բովանդակությունն ուղղակիորեն տեսանելի չէ, օրինակ՝ *իրավիճակի մասին տեղեկացված անձը* գրավոր կամ այլ կերպ առարկություն չի հայտնում, որի դեպքում լռությունը դիտվում է որպես լռելյայն (պայմանական) համաձայնություն:

Առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելը կարելի է համարել լռելյայն համաձայնություն, եթե անձը *պատշաճ տեղեկացված է եղել* իրավիճակի մասին և առարկություն չի ներկայացրել: Իրավիճակի մասին չտեղեկացված անձի կողմից առարկություն չներկայացնելը չի կարող համարվել լռելյայն համաձայնություն: Ենթադրենք՝ օրենքը սահմանում է, որ քրեական հետապնդումը կարելի է դադարեցնել, եթե մեղադրյալը չի առարկում դրա դեմ: Այս պարագայում, եթե մեղադրյալը տեղեկացված չէ քրեական հետապնդման կամ դադարեցնելու քննիչի մտադրության մասին, ապա առարկություն չներկայացնելը չի կարող դիտվել որպես քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ լռելյայն համաձայնություն: Չտեղեկացված անձի լռությունը որպես լռելյայն (պայմանական) համաձայնություն դիտելը հակաիրավական է:

Եթե նորմի կիրառման համար պահանջվում է անձի *ուղղակի* համաձայնությունը, ապա համաձայնություն տալու հարցը, բնականաբար, կարող է քննարկվել, երբ նա *նախապես տեղեկացված է* իրավիճակի մասին: Տրամաբանորեն այլ տարբերակ հնարավոր չէ: Օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ դատապարտյալն իր համաձայնությամբ առանց վարձատրության կարող է ներգրավվել ուղղիչ հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներին»: Այս օրինակում, նախ՝ պետք է դատապարտյալին տեղեկացնել անվճար աշխատելու փաստացի հնարավորության մասին, այնուհետև՝ քննարկել դատապարտյալի համաձայնության հարցը: Այլ կերպ ասած՝ ուղղակի համաձայնություն ստանալու հարցը կարող է քննարկվել, միայն այն դեպքում, երբ անձը

¹ Мейер Д. И. Русское гражданское право. По исп. и доп. 8-му изд., 1902. Изд. 3-е, испр. М.: Статут, 2003. <http://civil.consultant.ru> (дата обращения: 12.12.2018)

² Указ. соч.

նախապես տեղեկացված է իրավիճակի մասին:

Միևնույն ժամանակ՝ տեղեկացված չլինելու պատճառով անձի *ուղղակի* համաձայնություն չներկայացնելը չպետք է ձևավորի էստիպել և մեկնաբանվի ի վնաս նրա՝ հետագայում զրկելով օրինական ակնկալիքից: Իրավիճակի մասին տեղեկացվելուց հետո անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր վիճակը բարելավող համաձայնության ակտը:

Մեկ հանգամանք ևս: Կարծում ենք՝ անթույլատրելի է իրավական նորմի փաստակազմում (հիպոթեզում) լռելյայն համաձայնությունը և ուղղակի համաձայնությունը միաժամանակ դիտել միևնույն իրավական գործողությունը կատարելու պայման (այդ պայմանները կարող են ձևակերպված լինել տարբեր բառերով, սակայն փաստացի ունենան նույն բովանդակությունը): Օրինակ՝ Մ. Չելցով-Բեբուտովը, քննարկելով 18-19-րդ դարերի ամերիկյան քրեական արդարադատության առանձնահատկությունները, օգտագործում է հետևյալ ձևակերպումը. «...եթե մեղադրյալը մեղադրական ակտի կայացման դեմ առարկություն չի ներկայացրել և իրեն մեղավոր է ճանաչել...»³: Այս ձևակերպումից բխում է, որ առանց ապացույցները հետազոտելու դատական ակտ կայացնելու համար պահանջվում է երկու պայման՝ մեղադրական ակտի դեմ չառարկելը (լռելյայն համաձայնություն) և իրեն մեղավոր ճանաչելը (ուղղակի համաձայնություն)⁴: Ամբաստանյալը կարող է մեղադրական ակտի դեմ չառարկել լռությամբ, սակայն երբ դրան ավելացվում է նաև երկրորդ պայմանը՝ իրեն մեղավոր ճանաչելը, ապա ստացվում է, որ ամբաստանյալը պետք է նաև ուղիղ եղանակով հայտնի իրեն մեղավոր ճանաչելու (մեղադրանքն ընդունելու) մասին: Կարծում ենք՝ օրենքով կարող է պահանջվել անձի կամ լռելյայն համաձայնությունը, կամ ուղղակի համաձայնությունը, բայց ոչ՝ և՛ դա, և՛ մյուսը:

2.4. Լռելյայն համաձայնությունը. իրավական կանխավարկած, իրավական ֆիկցիա, թե՛ սուբստիտուցիա

Լռությունից բխող եզրահանգումը (լռելյայն համաձայնությունը) իրավական պայմանականությունների տիրույթում է, որի պարագայում պետք է պարզել՝ դա իրավական կանխավարկած է, ֆիկցիա է, թե՛ սուբստիտուցիա է: Մեր կողմից օգտագործվող «ենթադրյալ կամ ֆիկտիվ լռություն» ձևակերպումներից, ընդհանուր առմամբ, պարզ է հարցի վերաբերյալ դիրքորոշումը, սակայն դա առավել խորը քննարկման կարիք ունի:

(ա) Իրավական ֆիկցիան և կանխավարկածը: Վերջին ժամանակներում իրավական կանխավարկածների և ֆիկցիաների նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է ոչ միայն իրավունքի տեսության մասնագետների (հատկապես՝ իրավաբանական տեխնիկայի հարցերով զբաղվողների), այլև ճյուղային գիտության ներկայացուցիչների մեջ, սակայն հազվադեպ է, որ հեղինակները հատուկ անդրադառնան նաև լռելյայն համաձայնությանը: Օրինակ՝ Օ. Տանիմովը իրավական ֆիկցիաներին նվիրված մենագրությունում, որպես քաղաքացիաիրավական ֆիկցիայի օրինակներ, նշում է լռելյայն համաձայնության հետևյալ ձևերը՝ օրենսդրությամբ կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում լռությունը համարվում է գործարք կնքելու կամքի արտահայտում (Ղազախստանի Հանրապետության քաղ. օր.-ի 151-րդ հոդված), կամ լռությունն ակցեպտ չէ, եթե այլ բան չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթից կամ կողմերի նախկին գործարար հարաբերություններից (Ղազախստանի Հանրապետության քաղ. օր.-ի 396-րդ հոդված)⁵: Նախապես նշենք, որ առաջին օրինակը (Քաղ. օր.-ի 151-րդ հոդվածը), անկասկած, իրավական ֆիկցիա է, քանի որ օրենսդիրը լռությունը հավասարեցրել է կամք արտա-

³ Чельцов-Бебутов М. А. Курс советского уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. СПб.: Равена, Альфа, 1995. С. 537.

⁴ Սույն աշխատանքում հիմք ենք ընդունում այն մոտեցումը, ըստ որի՝ մեղքի ընդունումը և մեղադրանքին համաձայնվելը, ըստ ծավալի, համընկնող հասկացություններ են: Տարբերությունն այն է, որ մեղքի ընդունումը նյութական իրավունքի տնօրինման ակտ է (անմեղ համարվելու իրավունքի, դատական պաշտպանության իրավունքի), իսկ մեղադրանքին համաձայնվելը՝ նյութական իրավունքի տնօրինման իրացման դատավարական ակտ: Տե՛ս Касаткина С. А. Упрощенная уголовно-процессуальная форма по УПК РФ (при признании обвиняемым вины) монография. М.: Юр-литинформ, 2017. С. 64.

⁵ Танимов О. В. Теория юридических фикций: монография / отв. ред Т. В. Кашанина. М.: Проспект, 2016. С. 177.

հայտելու հետ, այսինքն՝ այնպիսի մի բանի հետ, որն ակնհայտորեն գոյություն չունի, իսկ երկրորդ օրինակը (Քաղ. օր-ի 396-րդ հոդված), կարծում ենք՝ իրավական կանխավարկած է, քանի որ լռությունն իրականում կարող է նաև համարվել ակցեպտ, այսինքն՝ հավանականություն կա, որ լռությամբ մարդն ընդունում է առաջարկը, ուստի դա չի կարող գնահատվել որպես իրավական ֆիկցիա:

Ժամանակակից ռուսական իրավունքում լռելյայն համաձայնությունն առավել շատ քննարկվում է իրավական կանխավարկածի տիրույթում: Գիտնականներից շատերը լռելյայն համաձայնությանն առնչվող այս կամ այն իրավական նորմը քննարկելիս դա համարում են իրավական կանխավարկած⁶:

Լռելյայն համաձայնությունն իրավական կանխավարկած կամ իրավական ֆիկցիա դիտելու հարցի պատասխանն իրավական կանխավարկածների և ֆիկցիաների տարանջատման տիրույթում է: Հետխորհրդային իրավագիտության մեջ իրավական կանխավարկածների և ֆիկցիաների տարբերակման վերաբերյալ դեռևս չի մշակվել ընդհանուր ճանաչում ստացած հայեցակարգ: Ավելին՝ իրավական կանխավարկածի և ֆիկցիայի սահմանները չքանում են, երբ իրավական ֆիկցիան դիտարկվում է որպես իրավական կանխավարկածի տեսակ: Օրինակ՝ առանձին հեղինակներ դրանք դիտում են որպես ֆիկցիայի տեսակ կամ հակառակը՝ կանխավարկածի տարատեսակ: Նրանք իրավական ֆիկցիան ու կանխավարկածը դիտում են մեկ դասի դատողություններ, թեև կոչվում են տարբեր կերպ⁷:

Ռուսական գրականությունում առավել լայն տարածում ունի այն մոտեցումը, ըստ որի՝ ի-

րավական կանխավարկածների ու ֆիկցիաների սահմանը կարելի է անցկացնել ինչպես սոցիալական, այնպես էլ իրավաբանական հատկանիշներով:

1) Սոցիալական չափանիշի տեսանկյունից՝ իրավական ֆիկցիան իրավական կանխավարկածից տարբերվում է հավանականության աստիճանով: Իրականում՝ կանխավարկածը հավանաբար ճշմարիտ ենթադրություն է, իսկ ֆիկցիան՝ ակնհայտորեն ոչ ճշմարիտ է:

2) Ֆիկցիան միշտ անհերքելի դատողություն է: Եթե կանխավարկածը բովանդակում է իրավաբանական ենթադրություն, այսինքն՝ պարտականություն ենթադրելու, որ որոշակի փաստեր տեղի են ունեցել, քանի դեռ հակառակը չի ապացուցվել, ապա ֆիկցիան ենթադրում է իրավաբանական պնդում, այսինքն՝ փաստերը հաստատված համարելու պարտականությունից բացառություն չի թույլատրում⁸: Մ. Դավիդովան իրավաբանական տեխնիկայի վերաբերյալ հիմնարար դասագրքում նշում է. «Իրավական կանխավարկածը կարող է ներկայացվել որպես *հերքելի ենթադրություն*, իսկ իրավական ֆիկցիան՝ *ենթադրություն անհերքելի*»⁹:

Կարծում ենք՝ այս կամ այն դրույթն իրավական ֆիկցիայի կամ կանխավարկածի հետ նույնականացնելու բարդությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ռուսական և հայկական գրականությունում իրավական ֆիկցիան դիտարկվում է որպես իրավական ենթադրության տեսակ¹⁰, մինչդեռ գերմանական իրավունքում իրավական ենթադրություն է միայն իրավական կանխավարկածը, իսկ ֆիկցիան ենթադրություն չէ, քանի որ իրականում գոյություն չունեցող երևույթ է, ուստի դրա վերաբեր-

⁶ Ойгензихт В. А. Презумпции в советском гражданском праве. Душанбе: Ирфон, 1976. С. 177, 182, Виниченко Ю. В. Презумпция согласия в гражданском праве // Проблемы регистрации прав, фиксации и удостоверения юридических фактов гражданского права: сборник статей. М.: Статут, 2013. С. 207-209, Калиновский К. Б. Презумпция согласия родственников на прекращение дела в связи со смертью обвиняемого // Уголовный процесс. 2012. №3. С. 9.

⁷ Кучинский В. А. Юридические презумпции и фикции (общие черты и различия) // Юридическая техника. 2010. №4. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 22.11.2018).

⁸ Давыдова М. Л. Юридическая техника. Общая часть: учебник / М.: Проспект, 2015. С. 169.

⁹ Юридическая техника: учебник / под ред. В. М. Баранова. М.: Изд. Юрайт, 2018. С. 269-270.

¹⁰ Никиташина Н. А. Юридические предположения в механизме правового регулирования (Правовые презумпции и фикции). Дисс... канд. юрид. наук. Абакан, 2004. С. 8. Պետք է նաև նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում որոշ իրավաբաններ հստակ տարբերակում էին իրավաբանական ենթադրությունները և ֆիկցիաները (տե՛ս Воложанин В. П. Юридические предположения в советском гражданском праве и процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Свердловск, 1953. С. 7, Тарбагаева Е. Б. Юридические предположения в гражданском процессе: исковое производство. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Л., 1983. С. 15-16):

յալ ենթադրություններ անելու անհրաժեշտություն չկա¹¹: Օրինակ՝ ՀՀ և ՌԴ քաղ. օր.-ում ամրագրված՝ «Մահացած ճանաչված քաղաքացու մահվան օր է համարվում նրան մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը» դրույթը ռուսական և հայկական իրավունքում առավելապես դիտվում է որպես իրավական ֆիկցիա¹², մինչդեռ հնարավոր չէ բացառել, որ անձն իրականում մահացել է հենց վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, ուստի անթույլատրելի է դա համարել իրավական ֆիկցիա (բացակայում է իրավական ֆիկցիայի պարտադիր պայմանը՝ «իրականում գոյություն չունեցող իրավիճակը»):

Կարծում ենք՝ անթույլատրելի է «լռությունը համարվում է համաձայնության նշան» ձևակերպումն in abstracto որակել որպես իրավական կանխավարկած՝ զուտ այն հիմնավորմամբ, որ իրավական կանխավարկածները պոզիտիվ իրավունքում արտացոլվում են «համարվում է», «ենթադրվում է» ձևակերպումներով, կամ այն պատճառով, որ իրավական կանխավարկածի հիմքում ընկած է պայմանականություն: Խնդիրն այն է, որ իրավական ֆիկցիաները պոզիտիվ իրավունքում նույնպես կարող են ձևակերպվել «համարվում է», «ճանաչվում է», «հավասարեցվում է», «դիտարկվում է» բառերի օգտագործմամբ¹³: Իրավական ֆիկցիան, ինչպես և իրավական կանխավարկածը, պայմանականություններ են: Ուստի արդարացված չէ զուտ դատողության պայմանականության կամ օրենքում օգտագործվող «համարվում է» ձևակերպման հիման վրա in abstracto պնդել, որ լռելյայն համաձայնությունն իրավական կանխավարկած է կամ ֆիկցիա է:

Լռելյայն համաձայնությունը որպես իրավական կանխավարկած կամ ֆիկցիա որակելու հարցը քննարկելիս, նախ՝ պետք է պարզել,

թե օրենսդիրը լռությանը վերաբերող իրավական նորմն ինչպես է ձևակերպել, այնուհետև՝ in concrete պարզել իրավական կանխավարկածի կամ ֆիկցիայի հետ իդենտիֆիկացնելու հարցը (այս մասին՝ հաջորդիվ):

(b) Լռելյայն համաձայնությունը և իրավական սուբստիտուցիան: Իրավագիտության մեջ ինչ-որ բան մեկ այլ բանով փոխարինելն անվանում են սուբստիտուցիա (լատիներեն՝ substituo – փոխարենը դնել, փոխարենը տալ): Ընդ որում՝ ժամանակակից գրականության մեջ իրավական կանխավարկածները և ֆիկցիաները ևս դիտարկվում են որպես փաստական հանգամանքների իրավաբանական փոխարինիչ (սուռոգատ)¹⁴:

Իրավաբանները, սուբստիտուցիա ասելով, հասկանում են հիմնականում երկու իմաստով՝ 1) ժառանգման իրավունքում դա ցույց է տալիս լրացուցիչ ժառանգին (սուբստիտուտին), եթե մինչև ժառանգության բացումը հիմնական ժառանգը մահանա կամ ժառանգությունը չընդունի, 2) միջազգային իրավունքում պետության պատասխանատվության ձև է, ռեստիտուցիայի տարատեսակ՝ ոչ իրավաչափորեն ոչնչացված կամ վնասված գույքի, շինության, տրանսպորտային միջոցի, գեղարվեստական արժեքների, անձնական գույքի և այլնի փոխարինում¹⁵:

Ա. Սմիռնովը շրջանառության մեջ է դրել «սուբստիտուցիա» բառի ևս մեկ ընկալում՝ «ապացուցողական սուբստիտուցիա», որն իրավաբանական գրականության մեջ առ այսօր չի նույնականացվել և չի ուսումնասիրվել: Սուբստիտուցիայի դեպքում մի փաստի փոխարեն ընդունվում է (դրվում է) ակնհայտորեն այլ փաստ, սակայն փոխարինող փաստը չի ներկայացվում որպես այլ փաստ՝ ինչպես ֆիկցիայի դեպքում է, այլև իրավակիրառման օպտիմալացման նպատակով բացահայտ (իր

¹¹ Հովհաննիսյան Գ. Իրավունքի ընդհանուր տեսություն և իրավաբանական մեթոդաբանություն (ձեռագիր), էջ 101-103:

¹² ՀՀ քաղ. օր.-ի 47-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության նորմը սխալմամբ համարել ենք ֆիկցիա՝ այն հիմնավորմամբ, որ չնչին է հավանականությունը, որ անձի փաստացի մահվան օրը և դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը կհամընկնեն, սակայն միաժամանակ ընդունել ենք, որ դա բացառել չի կարելի: Տես Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. Եր.: 2018, էջ 383: Եթե առկա է թեկուզ չնչին հավանականություն, որ անձը մահացել է վճիռն օրի մեջ մտնելու օրը, ապա իրավական ֆիկցիայի մասին խոսելն անթույլատրելի է:

¹³ Юридическая техника: учебник / Краснов Ю.К., Надвикова В.В., Шкатулла В.И. М.: Юстицинформ, 2014. С. 150.

¹⁴ Белов В. А. Юридические факты в гражданском праве: учебное пособие. М.: Изд. Юрайт, 2018. С. 44.

¹⁵ Большой юридический словарь. М.: Инфра-М. А. Я. Сухарев, В. Е. Крутских, А.Я. Сухарева. 2003.

անվամբ) կատարում է այդ փաստի գործառույթը:

Սուբստիտուցիայի առաջին տեսակն իրավաբանական կոնտամինացիան է (լատիներեն՝ *contaminatio* – խառնում): Իմաստաբանորեն կոնտամինացիան երկու տարբեր, սակայն ինչ-որ բանով միմյանց մոտ տարրերի միատեղումն է մեկ ամբողջում: Իրավաբանական կոնտամինացիան իրավաբանական ապացուցողական տեխնիկայի հնարք է, երբ մի իրավաբանական փաստը, առանց որևէ կոնկրետ ապացույցների, տեղակալվում է (*замещается*) այլ հարակից, սակայն իրավակիրառման համար առավել հարմար փաստով: Ընդ որում՝ իրավակիրառողն ակնհայտորեն անտեսում է դրանց միջև առկա տարբերությունները, այսինքն՝ տեղի է ունենում «կլորացում մինչև ամբողջը»¹⁶:

Ա. Սմիռնովը փորձում է սուբստիտուցիան տարբերակել ֆիկցիայից և կանխավարկածից: Նա նշում է, որ ֆիկցիայից տարբերությունն այն է, որ սուբստիտուցիայի դեպքում առկա է փաստացի հնարավորություն (ինչպես կանխավարկածի դեպքում է), որ փոխարինող փաստը կարող է համապատասխանել իրականությանը, այսինքն՝ լինել օբյեկտիվ, նյութական: Բայց, ի տարբերություն կանխավարկածի՝ սուբստիտուցիան ակնհայտորեն չի կարող հերքվել, հակառակ դեպքում վերանում է այլընտրանքի հարցը, քանի որ փոխարինման պայմանականության և դրա ենթադրյալ հատուկ-իրավաբանական բնույթի վերաբերյալ առկա են համընդհանուր ըմբռնումը և լռելյայն համաձայնությունը¹⁷:

Իրավունքի տեսությունը և դատավարագիտությունը դեռևս չեն ուսումնասիրել ապացուցողական սուբստիտուցիայի և իրավական կանխավարկածի ու ֆիկցիայի հարաբերակցությունը, առանց որի դժվար է քննարկել լռելյայն համաձայնությունը սուբստիտուցիա դիտելու հարցը: Ավելին՝ Ա. Սմիռնովը թեև փորձում է տարբերակել սուբստիտուցիան կանխավարկածից և ֆիկցիայից, սակայն «օրենքի չի-

մացությունը չի ազատում պատասխանատվությունից» մաքսիմը, մի կողմից, որակում է որպես կոնտամինացիայի դասական օրինակ (*սուբստիտուցիայի տեսակ՝ հեղ.*), մյուս կողմից՝ այդ մաքսիմը դիտում է որպես կանխավարկած:

Այսպիսով՝ իրավական պայմանականությունների (իրավական կանխավարկածի և ֆիկցիայի) տիրույթում ավելանում է ևս մեկ հասկացություն՝ ապացուցողական սուբստիտուցիա, ինչը էլ ավելի է դժվարացնելու այս կամ այն պայմանական եզրահանգումը նշված երեք դասից որևէ մեկի հետ նույնականացնելու աշխատանքը:

Եթե հիմք ընդունենք սուբստիտուցիայի վերաբերյալ Ա. Սմիռնովի ներկայացրած դատողությունները, ապա առաջին հայացքից կարող է թվալ, թե լռելյայն համաձայնությունն իրավական սուբստիտուցիա է, քանի որ իրավունքի ուժով մի փաստը՝ լռությունը, փոխարինվում է մեկ այլ փաստով՝ համաձայնությամբ: Սակայն այս պնդումը խոցելի է: Սուբստիտուցիան կիրառելի է, երբ իրականության մեջ գոյություն ունի երկու փաստ, որի դեպքում սուբստիտուտը պետք է փոխարինի հիմնական փաստը: Մինչդեռ լռելյայն համաձայնության դեպքում, լռությունը՝ որպես փաստ, օբյեկտիվ աշխարհում գոյություն ունի, իսկ լռությունից բխող պայմանական համաձայնությունն օբյեկտիվ աշխարհում գոյություն չունի, ուստի գոյություն չունեցող երևույթը (լռելյայն համաձայնությունը) չի կարող հանդիսանալ սուբստիտուտ և դրվել հիմնական փաստի (լռության) փոխարեն:

Բացի այդ՝ սուբստիտուցիայի դեպքում առարկաները, երևույթները պետք է ունենան նման հատկություններ, բովանդակություն, դեր, գործառույթ, որոնց առկայությունը թույլ է տալիս խոսել մեկը մյուսով փոխարինելու հնարավորության մասին¹⁸: Մինչդեռ այս դեպքում գործ ունենք էապես տարբերվող երևույթների հետ. մի կողմից՝ լռություն, մյուս կողմից՝ պայմանական համաձայնություն:

¹⁶ Смирнов А. В. Формальные средства доказывания в уголовном праве и процессе: монография. М.: Норма: ИНФРА-М. 2018. С. 218-219.

¹⁷ Смирнов А. В. Указ. соч. С. 218.

¹⁸ Самбор Н. А. Понятие субституции в теории права // Право. Экономика. Психология. 2016. №1 (4). С. 29.

(c) Ենթադրյալ կամ ֆիկտիվ համաձայնությունը: Լռելյայն (պայմանական) համաձայնությունը որպես իրավական կանխավարկած կամ ֆիկցիա որակելու համար սկզբունքային նշանակություն ունի այն, թե օրենսդիրը դրան վերաբերող իրավական նորմը ինչպես է ձևակերպել: Ինչպես նշվեց՝ առանց նորմի օրենսդրական ձևակերպման առանձնահատկությունները հաշվի առնելու, գործնականում անհնար է պայմանական համաձայնությունն *in abstracto* որակել որպես իրավական կանխավարկած կամ ֆիկցիա:

Իրավական նորմը ձևակերպելիս, եթե օրենսդիրը ելնում է այն տրամաբանությունից, որ լռող անձը ենթադրաբար համաձայն է, ապա գործ ունենք իրավական կանխավարկածի հետ: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը տրամաբանական վերլուծությամբ եզրակացնում է, որ լռության պարագայում բարձր է համաձայն լինելու հավանականությունը, հակառակ դեպքում անձն առարկություն կներկայացնեն (իրավական կանխավարկած): Օրինակ՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 314-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պարտապանի կողմից վճարման կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանում առարկություն չստացվելու դեպքում վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման»: Այս նորմը (իրավական կանխավարկածը) ձևակերպելիս օրենսդիրը հիմք է ընդունել այն ենթադրությունը, թե, սահմանված ժամկետում առարկություն չներկայացնելով՝ պարտապանն ամենայն հավանականությամբ համաձայնվում է վճարման կարգադրագրի հետ:

Իրավական նորմը ձևակերպելիս, եթե օրենսդիրը լռությունը դիտում է որպես կամքի *արտահայտություն (կամահայտնություն)*, ապա գործ ունենք իրավական ֆիկցիայի հետ: Ինչպիսիք այն է, որ լռության պայմաններում համաձայնության կամ անհամաձայնության մասին կամահայտնություն օբյեկտիվ աշխարհում գոյություն չունի, ուստի կամահայտնության մասին եզրահանգումները ֆիկտիվ են: Լռության

դեպքում մարդու սուբյեկտիվ աշխարհում պարփակված ցանկությունները և մտադրությունները քննարկվող հարցի տեսանկյունից որևէ նշանակություն չունեն: Գերմանացի առանձին մասնագետները նշում են, որ պետք է սահմանել այն սկզբունքը, որ լռությունը համաձայնության նշան է, եթե լռողը գիտակցել է, որ իր լռությունը կարող է հասկացվել որպես համաձայնության նշան և, երբ փաստացի այդպես էլ հասկացվել է: Այդ դեպքում նշանակություն չունի, որ անձը կարող է և «իր մեջ» ունեցել է հակառակ նպատակը¹⁹:

Իրավական ֆիկցիայի դասական օրինակ է ՀՀ քաղ. օր.-ի 294-րդ հոդվածի 3-րդ մասը. «Օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում *լռությունը համարվում է գործարք կնքելու կամքի արտահայտություն*» (ընդգծումը՝ հեղ.): Այս հոդվածում օրենսդիրը լռությունը համարել է գործարք կնքելու կամքի արտահայտություն, այն դեպքում, երբ գործարք կնքելու մասին որևէ մեկը կամք ուղղակիորեն չի արտահայտել:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե պայմանագիրը լուծելու առաջարկություն ստացած կողմն օրենքով նախատեսված ժամկետում չի ծանուցում պայմանագիրը լուծելու իր համաձայնության մասին, ապա աշխատանքային պայմանագրի լուծման մասին առաջարկը համարվում է մերժված»: Օրենսդրական այս ձևակերպման դեպքում նույնպես գործ ունենք իրավական ֆիկցիայի հետ, քանի որ պայմանագիրը լուծելու առաջարկի մերժում (անհամաձայնություն) որևէ մեկը չի հայտնել, մինչդեռ օրենսդիրը լռությունը դիտել է որպես անհամաձայնության մասին *կամահայտնություն*:

Օրենսդիրը լռությանը վերաբերող միևնույն դրույթը կարող է ձևակերպել ինչպես իրավական ֆիկցիայի (*ֆիկտիվ համաձայնության*), այնպես էլ իրավական կանխավարկածի (*ենթադրյալ համաձայնության*) միջոցով: Օրինակ՝ մեղադրյալի լռության պայմաններում քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը օրենսդիրը կարող է կարգավորել ստորև նշված տարբերակներից որևէ մեկով:

¹⁹ Эннекцерус Л. Курс германского гражданского права. Том I, полутом 2: Введение и общая часть; под ред. Д. М. Генкина и проф. И. Б. Новицкого. М.: 1950. С. 147.

Առաջին տարբերակ. «Քրեական հետապնդումը դադարեցնելուց հիմքերի մասին տեղեկացվելուց հետո, եթե մեղադրյալը առարկություն չի ներկայացնում, ապա համարվում է որ նա համաձայն է քրեական հետապնդումը դադարեցնելու հետ»։ Այս ձևակերպման դեպքում մեղադրյալի լուրջությունն իրավական հետևանք է առաջացնում ֆիկտիվ եզրահանգման (ֆիկտիվ համաձայնության) միջոցով, քանի որ օրենսդիրը համարել է, թե մեղադրյալը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին **կամք (համաձայնություն) է հայտնել**, մինչդեռ իրականում նա որևէ **կամք (համաձայնություն) չի հայտնել** (իրավական ֆիկցիա)։

Երկրորդ տարբերակ. «Քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի մասին տեղեկացվելուց հետո, մեղադրյալի կողմից 10 օրյա ժամկետում առարկություն չներկայացնելու դեպքում, քննիչը որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին»։ Այս ձևակերպման դեպքում մեղադրյալի լուրջությունն իրավական հետևանք է առաջացնում ենթադրյալ եզրահանգման (ենթադրյալ համաձայնության) միջոցով, քանի որ օրենսդիրը հիմք է ընդունել այն ենթադրությունը, թե մեղադրյալը, եթե դեմ լիներ քրեական հետապնդումը դադարեցնելուն, ապա առարկություն կներկայացներ, ուստի, առարկություն չներկայացնելով (լռելով)՝ նա համաձայնվել է քրեական հետապնդումը դադարեցնելու հետ (իրավական կանխավարկած)։

3. Եզրահանգում

Լռությունն իրավաբանական փաստ է, որը, մի դեպքում, անմիջապես է առաջացնում իրավական հետևանքներ, մեկ այլ դեպքում իրավական հետևանքներ է առաջացնում միջնորդավորված՝ ենթադրյալ կամ ֆիկտիվ կամահայտնության (համաձայնության կամ անհամաձայնության) միջոցով։

Իրավական նշանակություն ունեցող լռությունը կարելի է դասակարգել տարբեր հիմքերով։ Ըստ իրավաչափության՝ լինում է իրավաչափ և ոչ իրավաչափ լռություն, ըստ սուբյեկտների՝ լինում է մասնավոր անձանց և հանրային ծառայողի լռություն։

Լռությունը, որպես առեղծվածային երևույթ, իրավական կյանքում ավելի շատ ստեղծում է

անորոշություն, քան որոշակիություն, ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ է տալիս։ Ընդհանուր կանոնն այն է, որ լռությունն ինքնին որևէ կամք չի արտահայտում, ո՛չ «հա» է, ո՛չ «չէ»։ Բացառիկ դեպքերում լռությունը կարող է կամք արտահայտել՝ 1) պոզիտիվ իրավունքով նախատեսված դեպքերում, 2) գործարքով նախատեսված դեպքերում, կամ 3) կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններից ելնելով, երբ՝ ա) իրավունքը կամ գործարքը լռում է լռության մասին, և բ) կոնկրետ իրավիճակում լռությունը ենթադրաբար պետք է մեկնաբանել որպես համաձայնություն կամ անհամաձայնություն։ Այնուամենայնիվ, ժամանակակից կյանքում, որտեղ իրավական որոշակիությունը սահմանադրական արժեք է և օրեցօր ընդլայնում է իր գործողության ոլորտը, լռությունից բխող կամքի բովանդակությունը պետք է նախապես որոշել պոզիտիվ իրավունքով կամ գործարքով։

Լռելյայն համաձայնությունն անհրաժեշտ է տարբերակել *ուղղակի (պոզիտիվ)* համաձայնությունից։ Եթե նորմի կիրառման համար բավարար է անձի լռելյայն (պայմանական) համաձայնությունը, ապա օրենսդիրն օգտագործում է, օրինակ՝ «առարկություն (անհամաձայնություն) չներկայացնել» ձևակերպումը, իսկ եթե պահանջվում է անձի ուղղակի համաձայնությունը, ապա օգտագործում է, օրինակ՝ «համաձայնությամբ», «միջնորդություն ներկայացնել» ձևակերպումները։

Ուղղակի համաձայնություն ներկայացնելու ձևաչափով կամքի արտահայտումն ունի մեկ ճանապարհ, այն է՝ ուղղակի կամահայտնությամբ (գրավոր, բանավոր կամ կոնկլյուզենտ գործողությամբ)։ Ուղղակի (պոզիտիվ) համաձայնության բացակայությունը թեև լռություն է, սակայն լռելյայն համաձայնություն չէ։ Համաձայնության ակտի բացակայությունն անհամաձայնություն է։

Առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելու ձևաչափով կամքի արտահայտումը ունի երկու եղանակ՝ ուղղակի և լռելյայն կամահայտնություն։ Առաջին դեպքում՝ անձը, օրինակ՝ գրավոր, հայտնում է առարկություն չունենալու մասին, որից ուղղակիորեն տեսանելի է նրա կամքը, երկրորդ դեպքում՝ *իրավիճակի մասին տեղեկացված անձը* լռում է, այսինքն՝

որևէ եղանակով առարկություն չի ներկայացնում, որի դեպքում լռությունը դիտվում է որպես պայմանական համաձայնություն:

Լռելյայն համաձայնությունն իրավական սուբստիտուցիա չէ, քանի որ պայմանական համաձայնությունն իրական կյանքում գոյություն չունի և չի կարող կատարել սուբստիտուտի գործառույթ: Լռելյայն (պայմանական) համաձայնությունը որպես իրավական կանխավարկած կամ ֆիկցիա որակելու համար սկզբունքային նշանակություն ունի այն, թե օրենսդիրը դրան վերաբերող իրավական նորմն ինչպես է ձևակերպել: Իրավական նորմը ձևակերպելիս,

եթե օրենսդիրը տրամաբանական վերլուծությամբ եզրակացնում է, որ լռության պարագայում բարձր է անձի համաձայն լինելու հավանականությունը, հակառակ դեպքում նա առարկություն կներկայացներ, ապա գործ ունենք իրավական կանխավարկածի հետ: Իրավական նորմը ձևակերպելիս, եթե օրենսդիրը լռությունը դիտում է որպես կամքի *արտահայտություն (կամահայտնություն)*, ապա գործ ունենք իրավական ֆիկցիայի հետ, քանի որ լռության պայմաններում համաձայնության կամ անհամաձայնության մասին կամահայտնություն օբյեկտիվ աշխարհում գոյություն չունի:



ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ

ՀԱՆՏԵՑՄԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Քրեական արդարադատության նպատակը հանցագործություն կատարելու մեջ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելն է: Պատիժը բնավ ոչ միշտ է արդարադատության նպատակը¹: ՀՀ ՔՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խնդիրների շարքում նշված չէ կատարածի համար նշանակված պատիժը: Միանգամայն ակնհայտ է, որ դա դիտվում է որպես մասնավոր հարց և քրեական արդարադատություն իրականացնելիս բնավ ոչ բոլոր դեպքերում է առաջադրվում: Դա պայմանավորված է մի շարք սկզբունքների գործողությամբ, որոնք հռչակված են ՀՀ ՔՕ-ում: Նման սկզբունքներից են՝ անձնական պատասխանատվության սկզբունքը (ՀՀ ՔՕ-ի հոդվ. 8), ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը (ՀՀ ՔՕ-ի հոդվ. 9), մարդասիրության սկզբունքը (ՀՀ ՔՕ-ի հոդվ. 11): Հասարակության և պետության համար կարևոր է ոչ այնքան պատժելը, որքան համապատասխան անձի կողմից նոր հանցագործություն կատարելը կանխելը, ինչպես նաև հանցագործությամբ խաթարված արդարությունը վերականգնելը²: Դրանով հանդերձ՝ պետք չէ նաև նսեմացնել պատժի նշանակությունը քրեական արդարադատություն իրականացնելիս³: Հասարակության աչքում և առանձին անձանց ընկալմամբ՝ հանցագործությունն առանց պատժի սոցիալական անարդարության դրսևորում է, հատկապես՝ այն դեպքերում, երբ կատարվել է ծանր հանցագործություն, որը հասարակական լայն հնչեղություն է ստացել: Ըստ այդմ էլ պա-

տիժ նշանակելն ունի ոչ միայն անհատական, այլև սոցիալական նշանակություն: Այս առումով ՀՀ ՔՕ-ի 10-րդ հոդվածում արդարությունը պայմանավորված է պատժի նշանակմամբ, իսկ նշանակվելիք պատժի համապատասխանությունը՝ կատարված հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին և հանցավորի անձնավորությանը քրեական օրենսդրության սկզբունք է: Այսինքն՝ թեև քրեական օրենքը չի սահմանում պատժը որպես քրեական դատավարության նպատակ ու խնդիր, բայց և այնպես՝ դա արդարադատություն ապահովող կարևոր ինստիտուտ է: Այդպես են դա ընկալում պետությունը, հասարակությունը և անհատ անձինք: Պատիժն արդարության պսակն է. սա ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի բնակչության կարծիքն է: Հարկ է նշել, որ պատժի (ընդ որում՝ հաճախ բավականին խիստ) նշանակմանը հակված են դատավարական համակարգերից շատերը: Այդ երկրների մեջ կան այնպիսիք, որոնք աչքի են ընկնում տնտեսության բարձր մակարդակով և զարգացած ժողովրդավարական ինստիտուտներով: Մասնավորապես՝ նմանօրինակ երկիր է Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այստեղ գործում են ամենախիստ օրենքները (ցուցանիշն այն է, որ գործում են ազատագրկման մեծ ժամկետներ, և իրականացվում է մահապատիժ), ազատագրկումը որպես պատիժ կրող անձանց թիվն ամենամեծն է (2018 թ. դրությամբ ԱՄՆ-ում ազատագրկված մարդկանց թիվը 2121600 էր, այսինքն՝ 100000 մարդուց

● ՕՐԻՆԱԿԱՆՆԵՐՈՒՅՑՈՒՆ № 111 2019

¹ Տե՛ս Шамсудинов И.У. Теории наказания в доктрине уголовного права и дискуссия о его целях; альтернативы уголовному наказанию // Молодой ученый. 2016. №13 (117). С. 604-607.
² Տե՛ս Тепляшин П.В., Васильев Д.С. Эффективность гуманизма в профилактике преступлений // Российский следователь. 2013. №14. С. 36-39.
³ Տե՛ս Бозиев Т.О., Сипягина М.Н. Значение уголовного наказания для профилактики повторности преступлений несовершеннолетних // Уголовная политика Российской Федерации: проблемы формирования и реализации. Сборник материалов Всероссийской научно-теоретической конференции 19 мая 2017 г. – Ростов-на-Дону, Издательство: Ростовский юридический институт Министерства внутренних дел Российской Федерации, 2017. С. 37-42.

655-ն ազատագրված է): Համեմատության համար նշենք, որ Հայաստանն ազատագրվածն դատապարտված անձանց թվով պետությունների ցանկում միայն 101-րդ տեղում է⁴: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության համակարգը հակված չէ կիրառվող պատժի խստությանը: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում վերացված է այնպիսի պատժատեսակը, ինչպիսին մահապատիժն է:

Ավանդաբար պատժի հետ են կապում հետևյալ գործառույթների իրացումը. պատիժը կատարած հանցանքի համար, սոցիալական արդարության վերականգնում և նոր հանցագործությունների կանխարգելում (կանխում)⁵: ՀՀ ՔՕ-ի 48 հոդվածի 2-րդ մասում նշված է միայն երկու նպատակ, որոնց պետությունը ձգտում է հասնել պատժի կիրառմամբ՝ վերականգնել սոցիալական արդարությունը և կանխել (կանխարգելել) նոր հանցագործությունները: Պատժելու այնպիսի նպատակի մասին, ինչպիսին խստապատիժն է, ոչինչ ասված չէ: Սակայն դա բնավ չի նշանակում, թե պատիժը կատարածի համար քավություն չէ⁶: Պատիժը միշտ էլ որոշակի գրկանքներ է և սահմանափակումներ կատարած հանցանքի համար, պատժաչափը միշտ պետք է համապատասխանի կատարված հանցագործության ծանրությանը (ՀՀ ՔՕ-ի հոդվ. 10) և դրանում նշմարելի է անուղղակի ակնարկ առ այն, որ պատժի մեջ առկա է այնպիսի տարր, ինչպիսին քավությունն է: Առավել ևս, որ սոցիալական արդարությունը միշտ ենթադրում է հատուցում կատարած հանցանքի համար, ինչը նշանակում է պատժի համաչափություն այն հանցանքին, որը գործել է համապատասխան անձը: Պետությունը մշտապես իր տեսադաշտում է պահում պատժի խստապահանջության տարրը, թեև այդ մասին ոչ միշտ է բարձրաձայնում, քանի

որ դա ընկած է բռնաճնշումների հիմքում, այդ թվում և՛ քաղաքական: Հետխորհրդային տարածքի բոլոր պետությունները վճռականորեն հրաժարվեցին քաղաքական բռնաճնշումների գործելակերպից, որը կիրառվում էր Խորհրդային Միության պատմության տարբեր փուլերում: Համենայն դեպս՝ պաշտոնապես ու հրապարակայնորեն հրաժարվեցին բռնաճնշումների դիմելուց: Հավանաբար, հենց դրանով է բացատրվում այն, որ ՀՀ ՔՕ-ի 48 հոդվածի 2-րդ մասում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ նորմերում չի գործածվում քավել հասկացությունը՝ որպես պատժի որոշ կողմերը բացահայտող յուրահատկություն: «Պատժի հասկացությանը» համանման մոտեցում ենք տեսնում նաև այլ երկրների քրեական օրենսդրություններում, օրինակ՝ ՌԴ ՔՕ-ի 43 հոդվածի 2-րդ մասում նույնպես նշվում է երկու նպատակ՝ սոցիալական արդարության վերականգնում և հանցագործությունների կանխարգելում: Քավումը որպես պատժի նպատակ նշված չէ: Դա նշված չէ նաև որպես պատժին բնորոշ գործառույթներից մեկը: Թեպետ չի արտացոլում պատժի նշանակման պրակտիկայի իրողությունները, սակայն «պատիժ» հասկացության նման մեկնությունը քրեական օրենսդրությունում վկայում է պետության և քրեական արդարադատության համակարգի զարգացման դրական միտումների մասին: Սա ցույց է տալիս, որ արաքի համար քավումը չի դասվում այն գաղափարների շարքը, որոնց հիման վրա օրենսդիրը կցանկանար կառուցել քրեական իրավունքի համակարգը: Նրա համար ավելի ցանկալի կլիներ զարգացնել քրեական օրենսդրությունը մարդասիրական արժեքների գերակայության ուղղությամբ, որտեղ մարդը կլիներ կենտրոնում, որտեղ առաջնահերթը կլինեին նրա իրավունքներն ու ազատությունները⁷: Նշյալ միտումը բնութագրական է ոչ միայն Հայաստա-

⁴ Դատապարտվածների ցուցակն ըստ երկրների՝ // Википедия. Свободная энциклопедия. [Электронный ресурс].- Режим доступа: https://ru.wikipedia.org/wiki/Список_стран_по_количеству_заклочённых
⁵ Stiu Яковец И.С. Оптимизация процесса реализации кары при исполнении уголовных наказаний // Журнал научных публикаций аспирантов и докторантов. 2013. №6 (84). С. 76-79.
⁶ Stiu Жидков Э.В. К вопросу о проблеме «возмездия» и «кары» как составляющих уголовного наказания // Вестник Международного института информатизации и государственного управления им. П.А. Столыпина. 2015, №2, էջ 13-23:
⁷ Stiu Яхонтов В.И., Неверов А.Я. Наказание как индикатор уровня гуманности социума // Современное общество и власть. 2017. №3 (13), էջ 180-184:

նի Հանրապետությանը, այլև ամբողջ աշխարհին, որտեղ մարդասիրությունը ժողովրդավարության ու առաջընթացի ցուցանիշ է:

Մարդասիրության սկզբունքը կյանքի կոչելու ընդհանուր միտումը քրեական իրավունքի բոլոր ինստիտուտներում հանգեցնում է քրեական իրավունքի համակարգի, դրա հիմնական դրույթների և այն գաղափարների վերահաստատվումն, որոնցով պետք է առաջնորդվել նոր նորմեր ու դրույթներ ձևակերպելու⁸: Դա, մասնավորապես, ազդում է քրեական իրավունքում պատժի ինստիտուտի նշանակությունը սահմանելու վրա՝ մյուս ինստիտուտների հետ դրա հարաբերակցության մեջ: Ներկայումս պատիժը չի դիտվում որպես հանցանք կատարելու մեջ մեղավոր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու միակ հնարավոր հետևանք: Այսպես՝ ՀՀ ՔՕ-ի 7-րդ հոդվածի 1-ին մասում պատժի անխուսափելիությունը սահմանվում է ոչ միայն որպես պատժի նշանակում հանցանք կատարած անձի նկատմամբ, այլև որպես նման անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառում: Այսինքն՝ պատիժը չի դիտվում որպես անձին քրեական պատասխանատվության ենթարկելու միակ հնարավոր հետևանք: Ավելին՝ ՀՀ ՔՕ-ի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հնարավորություն օրենքով սահմանված դեպքերում: Դրանով դրսևորվում է պետության կամեցողությունը հրաժարվելու մեղավորների նկատմամբ ներգործության խիստ միջոցներից այն դեպքերում, երբ հնարավոր է առանց դրանց բավականին արդյունավետորեն հարթել խնդիրը: Նման մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ սոցիալական արդարությունն արդարադատությունում կարող է և չհանգել պատժի: Դրան կարելի է հասնել նաև պատժից հրաժարվելու միջոցով: Նշյալ գաղափարը, ըստ էության, նշանակում է հրաժարվել այն պարադիգմից, որ հարյուրամ-

յակներ շարունակ ընկած էր քրեական օրենսդրության հիմքում, պարադիգմ, որի համաձայն՝ միայն պատիժը կարող է լուծել այն խնդիրները, որոնք ծագել են հանցագործության կատարման հետևանքով: Այդ պարադիգմի համաձայն՝ համարվում է, որ խախտված իրավակարգը վերականգնվում է համապատասխան պատժի կիրառմամբ⁹: Այստեղ կարևոր են հարաբերությունները պետության՝ ի դեմս արդարադատության մարմինների, և անձի միջև, որը ենթարկվում է քրեական պատասխանատվության իր կատարած հանցանքի համար: Տուժողը, չնայած տուժել է կատարված հանցանքից, տվյալ պարադիգմի առումով չունի էական նշանակություն: Նա հետաքրքրություն է ներկայացնում լոկ այն վնասը պարզելու տեսանկյունից, որը պատճառվել է իրեն, քանի որ դա կարևոր է արարքը որակելու, հետևաբար և՛ համապատասխան հանցանքը կատարած անձի մեղավորության աստիճանը պարզելու համար: Ակնհայտ է, որ նման պարադիգմը չի կարող արդեն լիովին ձեռնտու լինել ոչ ժամանակակից հասարակությանը, ոչ ժամանակակից պետությանը, ոչ կոնկրետ մարդկանց, քանի որ այդ հարացույցի վրա հիմնված արդարադատությունը բավարար չափով չի պաշտպանում տուժողին: Վերոնշյալ պարադիգման ձևավորում է երկրորդային վիկտիմիզացիայի¹⁰ վիճակ, որի էությունն այն է, որ նախկինում արդեն հանցագործությունից տուժած անձը, որը դրա պատճառով բարոյական և այլ բնույթի ոչ քիչ տառապանքներ է կրել, կրկին հայտնվում է մի իրավիճակում, երբ ստիպված է կրկին համանման ապրումներ ունենալ, բայց արդեն՝ համապատասխան հանցագործության նախաքննության և դատական քննության փաստով: Տուժողն ստիպված է նորից անհարմարություն ապրել և նույնիսկ բարոյական տառապանքներ կրել՝ կատարված հանցանքի վերաբերյալ ցուցմունքներ տալու անհրաժեշտությամբ պայմանավորված: Քննչական և այլ դատավարական գործողությունները նման դեպքերում տու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

⁸ Sfin Звонов А.В. Критерии уголовного наказания: требования современности // Человек: преступление и наказание. 2017. Т. 25. №4, էջ 597-602:

⁹ Sfin Лысова А.В., Кури Х. Препятствия на пути развития восстановительного правосудия: сравнительный анализ России, Канады и Германии // Всероссийский криминологический журнал. 2018, Т. 12. №6, էջ 806-816:

¹⁰ Sfin Емельянов И.Л. Виктимность и виктимизация: понятие, виды, проблемы профилактики // Известия Алтайского государственного университета. 2013. №2-1 (78), էջ 241-246:

ժողին տառապանքներ պատճառելու միջոց են: Այս առումով՝ պատժի պարադիգմը չի համապատասխանում մարդասիրության հռչակված սկզբունքին, ըստ որի՝ պետք է ապահովվի մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունը (ՀՀ ՔՕ-ի 11-րդ հոդվածի 1-ին մաս): Ուստի նշյալ պարադիգմը ներկայումս թեև ոչ ամբողջովին է մերժվել, սակայն աստիճանաբար զիջում է իր դիրքերը քրեական իրավունքում:

Ներկայումս քրեական իրավունքի համակարգի վրա ավելի մեծ ազդեցություն է ձեռք բերում մեկ այլ պարադիգմ՝ վերականգնման պարադիգմը¹¹: Նշյալ պարադիգմի էությունն այն է, որ տուժողն այլևս քրեական արդարադատությունում երկրորդական գործող անձ չէ, որն ինքնուրույն ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում: Տուժողը մի սուբյեկտ է, որին պետք է ականջալուր լինել, և որից մեծապես կախված է այն, թե ինչպե՞ս կիրականացվի արդարադատությունը: Տուժողն այն անձն է, որի նկատմամբ կատարված հակաիրավական գործողությունների հետևանքով պատճառվել է որոշակի վնաս: Հետևաբար՝ հակաիրավական գործողություններից վնաս կրած անձը կարող է հանդես գալ ինչպես քրեական դատավարությունում, այնպես էլ իրավունքի մյուս ճյուղերում¹²: Հասարակության և պետության շահերն ըստ այդ պարադիգմի երկրորդային են և ածանցյալ են ինքնին տուժողի շահերից: Պետք է նշել, որ նշյալ պարադիգմը անցյալում քրեական դատավարության նախնական ձևի՝ մրցակցային քրեական դատավարության առաջացման հիմնական պատճառն է: Տուժողի խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը հանգեցրեց կատարված հանցագործության հետևանքով ստեղծված կոնֆլիկտի արդարացի լուծման հրամայականին: Նման կոնֆլիկտի լուծման ձևը դարձավ մրցակցության սկզբունքի վրա հիմնված դատական քննությունը: Այդպիսով՝ տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտ-

պանության անհրաժեշտությունը պատճառ դարձավ արդարադատության՝ որպես հասարակության մեջ կոնֆլիկտային իրավիճակների լուծման ձևի, կատարված հանցագործության հետևանքով խախտված սոցիալական արդարության վերականգնման միջոցի ձևավորմանը: Ըստ այդմ՝ հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնման պարադիգմին դիմելով՝ ժամանակակից քրեական իրավունքը վերադառնում է ակունքներին՝ քրեական արդարադատության պատմական հիմքերին¹³: Տվյալ դեպքում դա լավ մոռացված հիմն է: Ընդ որում՝ անշուշտ, այդ հիմքը բնավ չի ենթադրում կիրառել դա իր արխայիկ ձևերով, որոնք գոյություն ունեին մարդկության պատմության արշալույսին: Թեպետ վերականգնման հարացույցին դիմելը պատմական շրջապատույտ է, սակայն այդ շրջապատույտն իրականացվում է արդեն ավելի բարձր մակարդակում: Ուստի վերոնշյալ հարացույցը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով այն իրողությունները, որոնք ձևավորվել են արդի փուլում հասարակության մեջ, պետության մեջ և արդարադատության համակարգում: Մասնավորապես՝ դա պետք իրականացվի այնպիսի սկզբունքների հաշվառմամբ, ինչպիսիք են մարդասիրության, կողմերի հավասարության և մի շարք այլ սկզբունքներ, որոնք հասարակության մեջ այն պատկերացումների հիմքն են, թե ինչպիսի՞ն պետք է լինի արդարությունը քրեական դատավարությունում: Բացի այդ՝ նշյալ հարացույցը պետք է հաշվի առնի այն հարաբերությունների կառուցվածքը, որոնք հաստատված են ներկա պահին հասարակության մեջ և այդ հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկություններն իրավունքի տեսանկյունից:

Ներկայումս վերականգնման հարացույցի իրականացման ձևերից է հաշտարարությունը (մեդիացիան), որը ենթադրում է վեճերի ու կոնֆլիկտների հարթում հենց դրանց կողմերի

¹¹ Տե՛ս Корсаков К.В. Восстановительная юстиция как альтернатива традиционному уголовному правосудию // Викимимология. 2018. №3 (17), էջ 29-35:
¹² Տե՛ս Դիլբանդյան Ս.Ա. Տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 1998թ., էջ 6:
¹³ Տե՛ս Зюков А.М., Любишкин Д.Е. Восстановительное правосудие (на примере защиты прав потерпевшего от преступления) // Вестник Владимирского юридического института. 2011. №1 (18), էջ 106-110:

մասնակցությամբ՝ արտադատական կարգով¹⁴: Հաշտարարությունն առաջարկում է կիրառել սոցիալական տեխնոլոգիաներ, որոնք ոչ միշտ են սահմանվում օրենսդրորեն, բայց պետք է համապատասխանեն որոշակի պահանջների, որոնք ամրագրված են գործող օրենսդրությունում: Հաշտարարությունը կարող է տարածվել ընդհատյա բոլոր տիպի վեճերի և կոնֆլիկտների լուծման վրա¹⁵: Վերջին շրջանում հաշտարարությունն առավել շատ տարածում է գտնում քաղաքացիական դատավարությունում: Քաղաքացիական իրավահարաբերություններից բխող վեճերի այլընտրանքային եղանակով կարգավորման նկատառումներից ելնելով՝ 2015 թվականի մայիսի 7-ի ՀՕ-45-Ն օրենքով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացվել է 31.1-րդ գլխով, որը նվիրված է հաշտարարների իրավական կարգավիճակին: Մասնավորապես՝ նշված գլխով տրված են հաշտարար և հաշտարարություն հասկացությունների սահմանումները, հաշտարարության սկզբունքները, հաշտարարի վարքագծի կանոնները, իրավունքները և պարտականությունները, հաշտարարության վարման վերաբերյալ դրույթներ և այլն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (2018թ.) ընդունմամբ սահմանվեց, որ նորընտիր Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգիրքը, իսկ վկայակոչված օրենքում Սահմանադրության 103-րդ հոդվածի ուժով չնախատեսվեցին հաշտարարությանն առնչվող կարգավորումներ:

Միաժամանակ՝ 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը, որի՝ հաշտարարության վերաբերյալ դրույթների գործնական կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունը պահանջում է հաշտարարության ինստիտուտի օրենսդրական ամրագրում:

Պետք է նշել, որ հաշտարարության մասին օրենսդրություն ընդունվել է Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսի Հանրապետությունում, Վրաստանում, Ղազախստանում: Հայաստանի Հանրապետությունում չկա հատուկ օրենսդրություն, որով սահմանվի և կարգավորվի հաշտարարությունը: Ընդ որում՝ հարկ է նշել, որ այդ պետություններում հաշտարարությունը ներմուծվել է համեմատաբար վերջերս (2010 թ.): Ավելին՝ հաշտարարությունն օրենսդրորեն սահմանված է միայն քաղաքացիական վեճերի քննության համար: Հաշտարարություն (մեդիացիա) հասկացությունը, որպես կանոն, օրենսդրական մակարդակում չի կիրառվում այն կոնֆլիկտների առնչությամբ, որոնք առաջացել են կատարված հանցագործության հետևանքով: Հաշտարարությունն ընդունելը պայմանավորված է բազմաթիվ պատճառներով, որոնց թվում են, առաջին՝ այն, որ հաշտարարությունը, ըստ էության, վիճող կողմերի միջև փոխհամաձայնության հասնելն է, ուստի և ձեռք բերված լուծումն արդարացի կլինի վեճի երկու կողմի տեսանկյունից, երկրորդ՝ հաշտարարությունը տնտեսապես ավելի շահավետ է, քանի որ չի ենթադրում դրա իրականացման համար պահանջվող ծախսեր և նույնիսկ թեթևացնում է դատավորների ծանրաբեռնվածությունը, ովքեր հակառակ պարագայում հարկադրված կլինեն քննել համապատասխան վեճը, երրորդ՝ հաշտարարության ներդրումը կարող է նպաստել արդարադատության մարմինների ապարատի կրճատմանը: Ներկայումս քաղաքացիական դատավարությունում հաշտարարությունը ներմուծելը վեճերի լուծման նշյալ ընթացակարգերի կիրառման լրկ առաջին քայլն է: Քաղաքացիական դատավարությունում տվյալ քայլն արվում է այն նկատառումով, որ այստեղ վեճերը լուծելիս հասարակական արձագանքը ավելի զուսպ է, քան քրեական դատավարությունում, հետևաբար՝ թույլ տրված սխալներն այստեղ կարելի է վերացնել ընթացիկ, այլ ոչ թե հրատապ ռեժիմով՝ հասարակայնության լայն ուժերի ներգրավմամբ, ինչը կարող է հղի լինել անգամ սոցիալական պայթյունի վտան-

¹⁴ Տե՛ս Мусаев М.А. Восстановительное правосудие и проблемы медиации // Современное право. 2011. №9, էջ 52-55:

¹⁵ Տե՛ս Булкин Е.П., Железняков А.М. Восстановительное правосудие: медиация в уголовном процессе // Актуальные проблемы права. 2018, №5, էջ 23-30:

գով: Ինչպես ցույց է տալիս հաշտարարության մասին օրենսդրության կիրառման պրակտիկան այն երկրներում, որոնցում դա ընդունված է, ծագող վեճերն ու կոնֆլիկտները լուծվում են բավականին արդյունավետորեն: Քաղաքացիական դատավարությունում հաշտարարության ընթացակարգերի միջոցով վեճերի լուծման արդյունավետությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք կարող են բավականաչափ հաջողությամբ կիրառվել նաև քրեական դատավարությունում:

Հարկ է նշել, որ, հաշտարարությունից զատ՝ գոյություն ունեն վեճերի կարգավորման արտադատական այլ ընթացակարգեր: Սակայն վերոնշյալ ընթացակարգերը նաև ապահովում են վեճերն արդարաբար լուծելու բնակչության պահանջարկը և դրա հետ մեկտեղ բեռնաթափում են երկրի դատական համակարգը: Մատնանշված ընթացակարգերը դրսևորում են իրենց արդյունավետությունը, ինչը գրավում է դրանց նկատմամբ ոչ միայն հասարակ ժողովրդի, այլև իշխանությունների ուշադրությունը: Դա ստիպում է պետության օրենսդիր իշխանությանը մտորել տվյալ ընթացակարգերն օրինակարգելու մասին՝ որպես դատական ընթացակարգերի այլընտրանքներ: Ընդունվում են համապատասխան նորմատիվ ակտեր, որոնցով ճանաչվում են այլընտրանքային ընթացակարգերը: Դրանց վերաբերող որոշումները ճանաչվում են պետության մարմինների, հասարակական կազմակերպությունների և բոլոր այլ անձանց կողմից: Ընդ որում՝ պետությունը երաշխավորում է դրանց ճանաչումը: Չենք կարծում, թե այսօր Հայաստանի Հանրապետության համար ընդունելի կլինեն վեճերի լուծման այլընտրանքային հին ստիտուտները, քանի որ մեզանում վաղուց հաղթահարված են բնակչության ինքնակազմակերպման համայնական ձևերը: Ուստի հազիվ թե իմաստունի Հայաստանի Հանրապետությունում վերածնել ինչ-ինչ հնացած ինստիտուտներ և դարձնել դրանք այլընտրանքներ դատական համակարգին: Ավելի հեռանկարային է հաշտարարության՝ որպես վեճերի քննության այլընտրանքային համակարգի ներդրումը: Ընդ

որում՝ սկզբում հարկավոր է կիրառել հաշտարարությունը քաղաքացիական վեճերում, գնահատել դրա արդյունավետությունը և միայն դրանից հետո լուծել հաշտարարությունը քրեական դատավարություն ներմուծելու հարցը:

Ընդգծելով կատարված հանցանքի հետևանքով խախտված իրավունքների ու շահերի վերականգնման հարացուցի նշանակությունը՝ հարկավոր է նշել, որ տվյալ հարացուցն արտացոլվել է ոչ միայն հաշտարարության ընթացակարգում, այլ՝ տեղ է գտել նաև ուրիշ ընթացակարգերում: Այդ ընթացակարգերից շատերը հաստատվել են արդեն վաղուց և բավականաչափ լավ են դրսևորել իրենց: Նման ընթացակարգերին կարելի է դասել արբիտրաժային դատարաններն, որոնք ստեղծվել են պատմական տարբեր ժամանակահատվածներում տարբեր երկրներում¹⁶: Սակայն պետք է նշել, որ այդ դատարանները ստեղծվում են քաղաքացիական-իրավական վեճերը լուծելու համար: Դրանք կարող են լինել ներպետական և միջպետական: Դրանց որոշումները ճանաչվում են օրենքի ուժով, ուստի և պարտադիր են կատարման համար այն երկրների տարածքում, որոնցում գործում են այդ արբիտրաժային դատարանները: Արբիտրաժային դատարաններ գոյություն ունեն աշխարհի երկրների գերակշիռ մասում: Դրանք դրականորեն են դրսևորել իրենց Ֆրանսիայում, Գերմանիայում և տնտեսապես զարգացած մի շարք այլ երկրներում:

Հայաստանի Հանրապետությունում 2006թ. ընդունվեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, որի հիման վրա Հայաստանում գործում է արբիտրաժային տրիբունալ: Պետք է նշել, որ արբիտրաժային տրիբունալին բնորոշ են հաշտարարության որոշ հատկանիշներ: Մասնավորապես՝ նշված օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե արբիտրաժի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային տրիբունալը դադարեցնում է գործի քննությունը և կողմերի խնդրանքով արբիտրաժային տրիբունալի կողմից առարկությունների բացակայության դեպքում համաձայնեցված պայմաններ

¹⁶ Стів Габов А.В. Третьейские суды: история и современность (в свете дискуссий о реформе законодательства о третейских судах) // Вестник гражданского процесса. 2015. №2, էջ 11-77:

րով կայացնում է վճիռ՝ հաշտության համաձայնության մասին»:

Իհարկե, արբիտրաժային դատարաններն ունեն նաև որոշ էական տարբերություններ, որոնք դրսևորվում են պետության կողմից ստեղծված դատական համակարգի հետ փոխհարաբերություններում: Նշյալ դատարանների համակարգը բավականին երկար պատմություն ունի, սակայն տվյալ պատմությունը քաղաքացիական և տնտեսական վեճերի քննության պատմություն է¹⁷: Արբիտրաժային դատարանները պիտանի չեն քրեական դատավարությանը: Թեպետ միանգամայն հնարավոր է, որ վատ չէր լինի մտորել դրանց գործունեության որոշ առանձնահատկությունների շուրջ՝ քրեական դատավարության բարեփոխումների կարիքների համար փոխառելու նպատակով: Արբիտրաժային դատարաններից զատ՝ գոյություն ունեն վեճերի ու կոնֆլիկտների արտադատական քննության այլ ձևեր: Տվյալ ձևերը գլխավորապես համապատասխան հասարակությունների ու պետությունների պատմական զարգացման արդյունք են, արդյունք թե՛ որ գաղափարներն են հիմնականում տարածում գտել համապատասխան հասարակությունում, ինչ են հասկանում այնտեղ՝ արդարություն ասելով: Օրինակ՝ իսլամադավան աշխարհի առանձին երկրներում պետության ստեղծած դատական համակարգի այլընտրանքը շարիաթական դատարաններն են: Դրանք գործում են շարիաթի նորմերին համապատասխան: Այդ դատարանների իրավասության ներքո են ընտանեկան վեճերը, ինչպես նաև առանձին քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ վեճերը: Սակայն որոշ պետություններում այդ դատարանները զուգադիր դատական համակարգ են, որը լուծում է բավականին բարդ վեճեր և կոնֆլիկտներ: Շարիաթական դատարաններ են գործում հետևյալ երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Իրանում, Հորդանանում, Եմենում, Օմանում, Լիբիայում, Մալայզիայում, Պակիստանում, Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում, Լիբանանում, ԱՄԷ-ում,

Քուվեյթում, Կատարում, Բրունեյում, Բահրեյնում, Ջիբութիում, Եգիպտոսում, Թունիսում, Մավրիտանիայում: Այդ երկրներում շարիաթի նորմերը կիրառվում են մյուս իրավական նորմերին համահավասար: Բանգլադեշի, Նիգերիայի, Սուդանի և Սոմալիի մի շարք տարածաշրջաններում հիմնականը շարիաթական դատարաններն են¹⁸:

Անդրադառնալով կատարված հանցագործության հետևանքով խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հարացույցին՝ հարկավոր է ուշադրություն դարձնել արդեն գոյություն ունեցող և ներկայումս տարածում գտած քրեական դատավարության ինստիտուտներին, որոնք առավելագույնս արտացոլում են բոլոր պահանջները, որ ներկայացվում են ժամանակակից արդարադատությանը: Նման պահանջներից է այն, որ վերականգնվեն կատարված հանցագործությունից տուժած անձանց իրավունքներն ու ազատությունները: Քրեական գործով արդարադատություն իրականացնելիս անպայման պետք է հաշվի առնվեն տուժողի կարծիքները, քանի որ հանրորեն վտանգավոր արարքն առաջին հերթին ուղղված է եղել նրա շահերին: Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը ենթադրում է ապահովել տուժողի ակտիվ մասնակցությունն արդարադատության իրականացմանը, որը կարող է արտահայտվել ինչպես հանցագործության բացահայտմանն աջակցելով, այնպես էլ հաշտեցման գործընթացին մասնակցելով:

Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ պահպանվեն կամովիության, գաղտնիության, փոխադարձ հարգանքի, կողմերի իրավահավասարության, ընթացակարգի թափանցիկության սկզբունքները: Անհրաժեշտ է նաև պահպանել այն պայմանները, որոնք կապահովեն արդարությունը վեճի լուծման համապատասխան ընթացակարգում որոշումներ կայացնելիս: Նման ինստիտուտ է քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում¹⁹: Քրեական պատասխանատվություն

¹⁷ Shtu Хусейнов А.М. История законодательства о третейских судах и результаты реформы третейских судов в России // Вестник Российского экономического университета им. Г.В. Плеханова. 2018. №2 (98), էջ 200-207:

¹⁸ Shtu Мухаметзарипов И.А. Религия и светское законодательство: применение института медиации при разрешении споров с элементом религиозных норм (на примере ислама) // Исламоведение. 2014. №4 (22), էջ 18-28:

նից ազատման տվյալ հիմքը նախատեսված է ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածով: Այստեղ որպես քրեական պատասխանատվությունից ազատման հիմք նշված է ոչ մեծ ծանրության հանցանք գործած անձի հաշտվելը տուժողի հետ: Հարկ է նշել, որ քրեական պատասխանատվությունից ազատվելու նման հիմքեր նախատեսված են նաև այլ երկրներում:

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում նախատեսված է նաև այլ երկրներում: Այս նորմը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելորդ է համարվում քրեական ներգործության միջոցներ կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր գիտակցել են իրենց մեղքը կատարված հանցանքում, և դա հիմք է դարձել հաշտվելու տուժողի հետ: Նման դեպքում պատիժն ավելորդ է, քանի որ դրա հիմնական խնդիրը՝ կանխարգելումը, լուծված է, քանի որ մեղավորը գիտակցել է իր մեղքը և հետագայում չի գործի նոր հանցանք, իսկ հասարակությունը կարող է վստահ լինել, որ տվյալ անձն այլևս վտանգա-

վոր չէ իր համար²⁰: Այդ պատճառով բազմաթիվ պետություններ նախընտրում են շարժվել միջոցների տնտեսման ճանապարհով և չվատնել ավելորդ ռեսուրսներ ու ջանքեր այն անձանց պատժելու համար, որոնց առնչությամբ արդեն իսկ ձեռք է բերվել նախականիման դրական արդյունք: Առավել ևս, որ պատժի կիրառումը զղջացողների նկատմամբ կարող է չափից դուրս խիստ լինել, ինչը կհանգեցնի բացասական հետևանքների. մարդը կչարանա, և շատ ավելի դժվար կլինի ներգործել նրա վրա:

Վերը նշվածը, ինչպես նաև քրեական օրենսդրության վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգելու այն հետևություն, որ քրեական օրենքի պաշտպանության տակ գտնվող որոշակի խումբ հարաբերությունները, որոնք նախկինում պաշտպանվում էին միայն քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի միջոցով, այսօր դրանց պաշտպանությունն ապահովվում է նաև պատասխանատվությունից ազատելու միջոցով:



¹⁹ Տե՛ս Благов Е.В. Об освобождении от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Юридическая мысль. 2018, №3 (107), էջ 80-87:

²⁰ Տե՛ս Ишмухаметов Я.М., Ефремова А.С. Освобождение от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим // Аллея науки. 2018, Т. 2. №1 (17), էջ 443-445:

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
Հայաստանի Ամերիկյան համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

**CERTAIN ISSUES REGARDING NON-CONVICTION BASED
CONFISCATION OF ASSETS**

Characteristics of NCB Confiscation

Over the past few years the topic of asset confiscation mechanisms has become one of the most debated in framework of multiple international organizations and countries. Certain sources claim asset confiscation “to be one of the most effective tools to tackle profit-based crime”.¹ With several jurisdictions across the world implementing this measure within their legislation, to comply with the international standards, the confiscation has become “a global phenomenon as an instrument to recover instrumentalities and proceeds of crime”.²

NCB asset confiscation mechanism offers the necessary tools and measures to combat corruption offences and stop the circulation of proceeds of corruption, depriving offenders of illicit gains.³ However, the person, who committed a crime and illegally acquired assets, is not the main actor and the centre of criminal persecution, rather pursuit is circled around the property that has tainted origin. Simultaneously, NCB confiscation mechanism presents certain concepts unfamiliar to Armenian legal system.

Concerning the definition of NCB confiscation, international conventions do not provide the exact definition thereof. Notwithstanding, it can be described as “confiscation for which a criminal conviction is not required”.⁴

During the recent decade, a growing number of jurisdictions have adopted NCB asset forfeiture regimes. Certain sources claim that NCBC can be established in both civil and common law jurisdictions, as it “transcends the differences that exist between systems”.⁵

From common law countries, the most vivid examples are United States and United Kingdom, which have enacted NCBC laws. Meanwhile, civil law jurisdictions, such as Italy and Slovenia, also adopted civil confiscation mechanisms, that are unique to specific country.⁶ However, in some countries, including Armenia, Belarus, Latvia asset confiscation still performs a punitive function. Thus, those countries abstained from incorporating civil confiscation measures.⁷

NCBC mechanism has also been recommended at regional and multilateral levels by a number of organizations.⁸

¹ Adriano Martufi, *Confiscating assets without a prior conviction violates fundamental rights?*, Leiden University Press (2018), available at <https://leidenlawblog.nl/articles/confiscating-assets-without-a-prior-conviction-violates-fundamental-rights#> last visited 10 May, 2019.

² Ibid.

³ OECD, “Confiscation of instrumentalities and proceeds of corruption crimes in Eastern Europe and Central Asia”, *Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia* (2018), p. 6-7, available at <http://www1.oecd.org/corruption/acn/OECD-Confiscation-of-Proceeds-of-Corruption-Crimes-ENG.pdf> last visited 10 May, 2019.

⁴ EUROJUST, *News, Issue No. 13, June 2015*, p. 2, available at [http://www.eurojust.europa.eu/doclibrary/register/documents/eurojust%20news%20issue%2013%20\(june%202015\)%20on%20the%20freezing%20and%20confiscation%20of%20the%20proceeds%20of%20crime.pdf](http://www.eurojust.europa.eu/doclibrary/register/documents/eurojust%20news%20issue%2013%20(june%202015)%20on%20the%20freezing%20and%20confiscation%20of%20the%20proceeds%20of%20crime.pdf) Last visited 10 May, 2019.

⁵ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “*Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture*”, *The International Bank for Reconstruction and Development / The World Bank*, (2009), p. 17 Last visited 10 May, 2019.

⁶ OECD *Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia* “Confiscation of instrumentalities and proceeds of corruption crimes in Eastern Europe and Central Asia”, 2018, p. 50-64, available at <https://www.oecd.org/corruption/acn/OECD-Confiscation-of-Proceeds-of-Corruption-Crimes-ENG.pdf> Last visited 10 May, 2019.

⁷ Ibid, p. 7-9.

For example, the United Nations Convention against Corruption (UNCAC) under Article 54(1) © urges countries to consider permitting NCB asset forfeiture of stolen assets **when the offender cannot be prosecuted**, by reason of death, flight or absence or in other appropriate cases.⁹

What is more, the Financial Action Task Force, in the scope of its Recommendations requires the countries to consider adopting measures that allow illicit proceeds or instrumentalities to be confiscated **without requiring a criminal conviction** (NCBC) or **which require an offender to demonstrate the lawful origin of the property** alleged to be liable to confiscation.¹⁰

As it can be noticed, the mentioned two international instruments urge member states to consider adopting NCBC mechanisms.¹¹

When examining the conventional requirements of UNCAC and FATF, we see that in case of UNCAC the grounds which make the prosecution of the person impossible within criminal procedures are mentioned. The list of those grounds, however, is not exhaustive. Hence, we may conclude, that UNCAC recommends model of confiscation that allows forfeiting property without prior criminal conviction.

As for FATF recommendation, it suggests two possible models: first, confiscation without prior accusatory verdict of the court, second, shifting of burden of proof. These, two models are to be differentiated, as they require two different procedures. In case of shifting the burden of proof, there will still be requirement for prior conviction. However, if the States adopt the first model, putting an obligation on the offender to prove

lawfulness of his assets' sources can be used as an additional procedural tool. This means, that the first model may include the second one and transfer the burden to the offender, but not vice versa.

Besides the international requirements, the need for the incorporation of the mechanism by countries may mainly rise because of the impasse that might be created because of lack of relevant domestic regulations. This means that there can occur situations making the criminal liability of a person impossible. As mentioned in UNCAC, certain circumstances can make the prosecution impossible and allow the States to confiscate the tainted assets of perpetrators. Those may include cases when an offender has died, or when the person, who committed the crime, is immune, is hiding, the property acquired through the criminal offence has been found under the possession of a person other than the offender or statute of limitation for the crime has expired. The cases when there is insufficient evidence to proceed with criminal prosecution¹², are often considered as proper grounds to apply NCBC, however, these grounds are controversial. Namely, the lack of evidence in criminal procedure is an indicative of person's innocence, thus when the authorities do not find sufficient evidence to incriminate the person within criminal procedure, the application of an alternative measure may raise human rights issues.

Additionally, EU Directive 2014/42 asserts that when confiscation on the basis of a final conviction is not possible, it should still be possible under certain circumstances to confiscate instrumentalities and proceeds, at least in the cases of

⁸ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, "Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture", The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 1-2, available at http://siteresources.worldbank.org/FINANCIALSECTOR/Resources/Stolen_Asset_Recovery.pdf Last visited 10 May, 2019.

⁹ United Nations Convention Against Corruption (2004), Article 54(1)(c), available at https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf Last visited 10 May, 2019.

¹⁰ International Standards on Combating Money Laundering and the Financing of Terrorism and Proliferation, The FATF Recommendations, October 2018, p.10 available at <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF%20Recommendations%202012.pdf> Last visited 10 May, 2019.

¹¹ Nevertheless, the Conventions themselves do not constitute an obligatory requirement for the States. Instead, those as part of so called "soft law" only make recommendations for the States, which means that there can be no legal or political consequences, if the States do not implement the NCB confiscation as a tool against corruption.

¹² Another ground can considered to exist when the evidence is not satisfactory to overcome the provisional proof threshold applicable in criminal proceedings.

illness or absconding of the suspected or accused person.¹³

However, NCB asset confiscation should never be a substitute for criminal prosecution. While NCB asset forfeiture can be an effective tool to recover assets connected to crime, it should not be used as an alternative to criminal prosecution when a jurisdiction can prosecute the violator. However, NCBC should precede a criminal indictment or parallel criminal proceedings. And it will still be necessary to prove that the assets are tainted.¹⁴ If the legislator is ruled by this principle, no issue of double jeopardy will rise, as the tainted assets of accused person are confiscated if criminal proceedings fail.

Main Types of NCB Confiscation

NCBC itself has two main **types**, which are preventive confiscation and extended confiscation.

The *preventive* confiscation mechanism, which is adopted by countries such as Italy, seeks to remove from the legal economy those assets which were acquired illegally and thus “contaminate healthy economic relations”.¹⁵ Here, **owner of the assets is not punished at the personal level** since the objective is to prevent him from using those assets to commit further crimes. Hence, the preventive confiscation is a measure that aims at limiting the danger posed by the person who expresses his danger to society, using the illicitly gained assets, and corrupts the healthy state of the economy.¹⁶

The main feature of preventive confiscation is that competent tribunal has to ascertain the degree of danger posed by a person and, in particular, the high probability of being found guilty through a separate fact-based (and not suspicion-based) inquiry, even though the person might have already received a conviction for a related crime. Hence, a previous conviction is not a fundamental requirement.¹⁷

As for the *extended* confiscation, it applies where a person has been convicted of an offence that produces an economic benefit. Assets may be confiscated even if they are not proceeds of crime for which the offender has been convicted.¹⁸

Article 5(1) of EU Directive 2014/42¹⁹ provides that “Member States shall adopt the necessary measures to enable the confiscation, (...) of property belonging to a person convicted of a criminal offence which is liable to give rise, directly or indirectly, to economic benefit, where a court (...) is satisfied that the property in question is derived from criminal conduct.”²⁰

Further, Para. 19 of the mentioned Directive states that “In order to effectively tackle organized criminal activities there may be situations where it is appropriate that a criminal conviction be followed by the confiscation not only of property associated with a specific crime, but also of additional property which the court determines constitutes the proceeds of other crimes. This approach is referred to as extended confiscation.”²¹

¹³ Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the Freezing and Confiscation of Instrumentalities and Proceeds of Crime in the European Union, Paragraph 15, available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0042&from=FR> Last visited 10 May, 2019.

¹⁴ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 29 Last visited 10 May, 2019.

¹⁵ “The Italian experience in the management, use and disposal of frozen, seized and confiscated assets”, CAC/COSP/WG.2/2014/CRP.3, (Open-ended Intergovernmental Working Group on Asset Recovery) Eighth meeting Vienna, 11-12 September 2014, p. 6, available at https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/workinggroup2/2014-September-11-12/Combined_CacCosp-Wg2-2014-CRP3.pdf Last visited 10 May, 2019.

¹⁶ Ibid, p. 4-6.

¹⁷ Ibid, p. 6-7.

¹⁸ M. Simonato, “Confiscation and fundamental rights across criminal and non-criminal domains”, Vol. 18, Issue 3, 2017, p. 366, available at <https://link.springer.com/content/pdf/10.1007%2Fs12027-017-0485-0.pdf> Last visited 09 May, 2019.

¹⁹ Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the Freezing and Confiscation of Instrumentalities and Proceeds of Crime in the European Union, Article 5(1), available at <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0042&from=FR> Last visited 10 May, 2019.

²⁰ OECD (2018), Review of Legal and Regulatory Asset Recovery Framework in Greece, p.25 Last visited 10 May, 2019.

²¹ Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the Freezing and Confiscation of Instrumentalities and Proceeds of Crime in the European Union, paragraph 19.

What regards standard of proof, the Directive sets forth the criteria of “balance of probabilities” providing, that it must not be established that the property is derived from criminal conduct. So, it could be sufficient for the court to consider on the **balance of probabilities, or to reasonably presume** that it is substantially more probable, that the property has been obtained from criminal conduct than from other activities. Also, the fact that the property of the person is disproportionate to his lawful income could be among those facts giving rise to conclusion of court that the property derives from criminal conduct.²²

Additionally, the Directive under Article 8(6), (7) provides certain safeguards for the person whose property is affected by a confiscation order. Among such safeguards are the right of access to a lawyer throughout the confiscation proceedings and the right to challenge the order before a court. Also, reasons for confiscation order need to be given and the order needs to be communicated to the person affected.²³

In this situation, a court convicts a particular person of a crime and also awards a decision on the confiscation of property, when either the national court believes that the property was obtained through similar unlawful conduct of the person convicted, committed before the actual conviction. Establishing a direct link between the property and the offence is not necessary if the court concludes that part of the person’s property was obtained through other unlawful conduct, for which the court finds the person guilty.²⁴

It can be concluded, that the preventive and extended confiscations both do not instigate punishment in personal level, rather the mechanisms pursue the property. The difference between the two types of NCBC is, firstly, in their sphere of application. Namely, the extended confiscation is very much linked to the parallel **criminal proce-**

dure. Its aim is to deprive an offender of the property that has not been proved to be proceeds of crime in scope of criminal procedure; however, the offender has been convicted for committing a corruption crime. On the other hand, preventive confiscation a clear-cut example of confiscation held under **civil procedures**. Here, the burden of proof may shift to the offender and evidentiary standards may be lowered. The main purpose of this type of confiscation is to remove the illicit property from economic circulation. It is aimed against the property and does not require for a final judicial verdict.

However, the international practice shows that foreign states are more inclined to adopt the extended confiscation regime, rather than preventive.²⁵ This tendency of states can be explained with the safeguards that extended confiscation ensures, such as presumption of innocence, while preventive confiscation as a civil procedure does not provide such guarantees and is relatively more independent from criminal procedures than extended confiscation, which is more likely to raise human rights issues.

Conviction Based Confiscation and Non-Conviction Based Confiscation of Assets: Similarities and Differences

Two main confiscation mechanisms can be distinguished as **conviction based confiscation** and **non-conviction based confiscation**.

Both CBC and NCBC mechanisms share the same objective for the states, which is to forfeit the proceeds and instrumentalities of crime. Secondly, in both cases proceeds should be confiscated and used to compensate the victim, whether it is the state or an individual. Confiscation of instrumentalities ensures that such assets will not be used for further criminal purposes.²⁶ Lastly, crime serves as a ground for initiating both CBC and NCBC procedures, which are the procedural con-

²² Ibid, Para. 21.

²³ Ibid, Article 8(6), (7).

²⁴ EUROJUST, (General Case 751/NMSK – 2012): Report on Non-Conviction-Based Confiscation, (2013), p. 10 Last visited 10 May, 2019.

²⁵ Only Italy has adopted preventive confiscation mechanism in pursuit against Mafia. While most part of civil law jurisdictions, such as Greece, preferred to incorporate extended confiscation.

²⁶ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 13-16 Last visited 10 May, 2019.

tinuation of criminal investigations held to discover those crimes.

Where these asset forfeiture regimes differ is, firstly, in the **procedure used** to confiscate the tainted assets. CBC is otherwise known as confiscation **in personam**, as it is an **action against the person** and part of criminal charge.²⁷ So, CBC requires a **criminal trial and conviction**.

Conversely, NCBC (otherwise: **confiscation in rem**) is considered an **action against the asset** itself and not against an individual. NCBC targets profits deriving from an offence, rather than individuals who allegedly committed the offence.²⁸ It is a **separate action from any criminal proceeding** and requires proof that the property is tainted or is proceed or an instrumentality of crime. Additionally, certain States, who apply the NCB confiscation of property, consider it to be “an ancillary measure, rather than a sentence”.²⁹

Secondly, the CBC can only be imposed as **part of sentence** in criminal case and requires a prior conviction. Reversely, the NCBC can be filed **before, during, or after criminal conviction** or even if there is **no criminal charge** against a person.³⁰

Thirdly, in case of criminal conviction only the property that belongs to a criminal can be forfeited, while in case of NCBC mechanism the property can also be confiscated if it is transferred to or acquired by third parties (ex. affiliated

person or company).³¹ Additionally, EU Directive 2014/42/ stresses the importance to confiscate the property of third parties who at least knew or ought to have known that the purpose of the transfer or acquisition was to avoid confiscation.³²

Finally, the **standard of proof** applied during CBC and NCBC procedures is another difference between these regimes. Namely, in case of CBC, the confiscation is merely the continuation of the prior criminal procedure, where the standard of “**beyond a reasonable doubt**” is applicable. Whereas, the NCBC is a simplified approach, as it applies a lower standard of proof, than the one used in criminal proceedings.³³ According to the general approach, the criminal conduct must be established on a “**balance of probabilities**” standard of proof, which, in comparison with “proof beyond reasonable doubt standard, requires a lower degree of satisfaction”.³⁴ Applying the balance of probabilities standard creates an obvious advantage of easing the burden of proof for the government.³⁵ In case of balance of probabilities “a presumption, is an inference of the truth of proposition or fact drawn by process of probable reasoning in the absence of actual certainty. If a presumption is raised, the party against whom presumption exists has burden to overcome the presumption by balance of probabilities. Failing this, the *prima facie* presumption is converted to an uncontroverted fact. For example, a statute

²⁷ Ibid.

²⁸ Adriano Martufi, Confiscating assets without a prior conviction violates fundamental rights?, Leiden University Press (2018). Last visited 10 May, 2019.

²⁹ EUROJUST, (General Case 751/NMSK – 2012): Report on Non-Conviction-Based Confiscation, (2013), p.12, available at http://www.procuracassazione.it/procuragenerale-resources/resources/cms/documents/EUROJUST_20130402_NCBC_Report.pdf Last visited 10 May, 2019.

³⁰ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 14 Last visited 10 May, 2019.

³¹ However, these regulations shall not be so construed as to prejudice the rights of bona fide third parties.

³² Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the Freezing and Confiscation of Instrumentalities and Proceeds of Crime in the European Union, Article 6. Last visited 09 May, 2019.

³³ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 58-63 Last visited 07 May, 2019.

³⁴ LawTeacher, Criminal or civil standard of proof [Internet], November 2013, Available at <https://www.lawteacher.net/free-law-essays/criminal-law/criminal-or-civil-standard-of-proof-law-essays.php?vref=1>. Last visited 10 May, 2019.

³⁵ In case of NCB confiscation proceedings only the illegitimacy of the sources of property, that is, property is proceeds or an instrumentality of crime, needs to be established, while in case of CBC proceedings, the authorities need to prove that a person has committed a crime, his guilt and the link between the crime committed and the property that is to be confiscated.

may create a rebuttable presumption that unexplained wealth accumulated during a period of service as a public official was attributable to corruption that results in forfeiture of increased wealth, unless the official can sufficiently explain how the increase in wealth occurred through legitimate means.”³⁶

Even UNCAC, under Article 31(8), calls upon States Parties to consider the possibility of requiring an offender to demonstrate the lawful origin of alleged proceeds of crime or other property liable to confiscation.³⁷ In other words, “the burden must remain on the prosecution to establish the case and the basis for the presumption, and the claimant must be permitted to offer a reasonable or credible explanation to rebut the presumption.”³⁸

However, the differences between the common law and civil law countries’ legal systems are very crucial factors to consider, as evidentiary standard of “balance of probabilities” is mostly used in common law jurisdictions and is quite unfamiliar to civil law countries like Armenia. Therefore, from this perspective, while determining the standard of proof for specific country, **peculiarities of its legal system need to be taken into account.**

In this context, it is important to also understand the correlation between *NCBC and illicit enrichment regulations*. Namely, unexplained

wealth orders (otherwise: UWOs) are sometimes considered to be a part of NCBC. These UWOs combine all of the characteristics of NCBC regime with illicit enrichment regulations by shifting the burden of proof to the asset owner who needs to provide evidence that the assets were legally acquired. However, the prosecutor or other authorized body has to show the nexus between criminal offence and the property when making an UWO request to the court.³⁹ UWO mechanism applies merely within civil proceedings, where a comparison of the actual property of a person is made against the income declared by the person to establish a clear disproportion between the actual and declared property.⁴⁰

Nonetheless, UWO and illicit enrichment regulations differs mainly because the illicit enrichment is fully regulated in the criminal limb, it is considered as a separate offence and the consequences of committing that offence is criminal punishment and conviction of a person. Hence, in this case person is convicted in a personal level. Meanwhile, the difference between illicit enrichment and other offences is that at certain point burden of proof may be shifted to the offender, which has to prove the legitimacy of his sources. Notably, the offence of illicit enrichment itself raises doubts concerning its constitutionality⁴¹, as some regard it as derogation from presumption of innocence.⁴²

Conversely, UWO is demonstration of NCBC

³⁶ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 58-60 Last visited 10 May, 2019.

³⁷ United Nations Convention Against Corruption (2004), Article 31(8) Last visited 10 May, 2019.

³⁸ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, “Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture”, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 61 Last visited 10 May, 2019.

³⁹ Maíra Martini, Unexplained wealth order as an anti-corruption tool, Transparency International , November 2015, p. 1-2, available at https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/Unexplained_wealth_order_as_an_anti-corruption_tool_2015.pdf Last visited 10 May, 2019.

⁴⁰ EUROJUST, (General Case 751/NMSK – 2012): Report on Non-Conviction-Based Confiscation, (2013), p.10, available at http://www.procuracassazione.it/procuragenerale-resources/resources/cms/documents/EUROJUST_20130402_NCBC_Report.pdf Last visited 10 May, 2019.

⁴¹ Transparency international article “The Unconstitutional Nature of “Illicit Enrichment” means amnesty for all officials” 10 May, 2019, available at <https://ti-ukraine.org/en/news/the-unconstitutional-nature-of-illegal-enrichment-means-amnesty-for-all-officials/>, Last visited 10 May, 2019.

⁴² On February 26 the Constitutional Court of Ukraine recognized as unconstitutional the Criminal Code article 368-2 that criminalizes illicit enrichment of public officials. Certain sources claim that decriminalization of illicit enrichment will mean complete amnesty for absolutely all public officials with questionable wealth. Recent developments show that certain states started to annul the crime of illicit enrichment, questioning its correspondence with human rights.

confiscation mechanism, which means that there can be no prior conviction and the procedure is outside the criminal limb.

It is also important to stress, that despite the fact that NCBC itself does not require a prior conviction and the assets of a criminal can be forfeited even without court decision which declares the perpetrator guilty, nonetheless, the civil confiscation has to be based on prior criminal investigation. In other words, a minimum threshold needs to be established for the authorized bodies to initiate a financial investigation, to find necessary bases for confiscation. This means, that states cannot have limitless discretion in commencement of confiscation procedures. States cannot arbitrarily and even randomly point out a certain person as an offender and put a burden on the latter to prove the lawfulness of the source he acquired his property from. Thus, there has to be certain link between the criminal offence committed by a person and civil confiscation initiated against his property. Either criminal persecution or prior criminal proceedings against the person should be established to have certain bases for further confiscation proceedings. This is to verify that the civil confiscation cannot be absolutely independent from criminal conviction, since the authorized bodies need to have lawfully obtained evidence, based on certain minimum evidentiary standard, which proves the illegitimacy of the property source. In those cases, when perpetrator dies or

has absconded, the State has the opportunity to, at least, track and forfeit his illicit assets. However, civil confiscation cannot be initiated and conducted without causal link to the criminal procedures, as mentioned above.

Summarizing, we may conclude, while implementing NCBC mechanism, states should guarantee that at least the following safeguards are preserved:

1. Relationship between NCBC case and any criminal proceedings, including a pending investigation, should be defined. Thus, NCBC should be available when criminal prosecution is unavailable or unsuccessful.

2. Applicable evidentiary and procedural rules should be as specific as possible. Mainly, fundamental concepts such as the standard (burden) of proof and use of rebuttable presumptions should be defined by law.

3. Assets derived from the widest range of criminal offenses should be subject to NCBC. Thus, the specific list of corruption crimes should be stipulated by law.

4. Preservation and investigative measures taken without notice to the asset holder should be authorized when notice could prejudice the ability of the jurisdiction to prosecute the forfeiture case. On the other hand, persons having a potential legal interest in the property subject to confiscation are entitled to notice of the proceedings.⁴³



Meanwhile, ECHR in its case of *Salabiaku v France* (10519/83) reiterated that illicit enrichment legislation is consistent with the presumption of one's innocence as long as 1) the prosecution is responsible for proving that criminal activities led to the change in one's assets, and 2) the presumed activities can be rebutted and contested. The same approach can be adopted in case of NCBC, where again reversal of burden of proof is applied and the offender takes the obligation to prove the lawful origin of his property.

⁴³ Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, Larissa Gray, "Stolen Assets Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture", The International Bank for Reconstruction and Development / The World Bank, (2009), p. 27-105 Last visited 10 May, 2019.

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական
վարչության գլխավոր մասնագետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՆԻՆԴՐՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԶԵՎԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկը կառավարության (cabinet) ներքին և արտաքին քաղաքականության հեռահար պլանավորումն ու կենսագործումն է, ինչը կարող է իրականացվել կառավարության կողմից երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրագործման միջոցով: Կառավարության երկարաժամկետ ծրագրերը, որպես կանոն, կարող են կյանքի կոչվել միայն երկարաժամկետ կտրվածքով գործող և գործունեության որոշակի կայունություն ունեցող կառավարությունների կողմից:

Պետությունում կարճաժամկետ կտրվածքով գործող կառավարությունները ևս կարող են մշակել երկարաժամկետ ծրագրեր, սակայն կարճաժամկետ գործունեության պատճառով հնարավորություն չեն ունենում այդ ծրագրերը կենսագործելու, իսկ հաջորդող կառավարությունները, որպես կանոն, չեն շարունակում նախորդ կառավարությունների քաղաքական կուրսը: Այդ պայմաններում կարճաժամկետ կտրվածքով գործող կառավարությունների գործունեությունն ունի հատվածական և թիրախավորված բնույթ, իսկ երկարաժամկետ ծրագրերի կենսագործումը «մնում է օդում կախված», ինչը երկարաժամկետ կտրվածքով չի ապահովում պետության հեռահար քաղաքականության մշակման և կենսագործման արդյունավետությունը:

Կառավարությունների գործունեության հիմքում ընկած հիմնական ծրագրային փաստաթուղթը կառավարության գործունեության ծրագիրն է: Կառավարության գործունեության ծրագիրն ուղենշային փաստաթուղթ է, որի հիման վրա կառավարությունը մշակում և իրականացնում է կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: Կառավարության գործունեության ծրագիրը, որպես կանոն, մշակվում է մեկ ընտրական շրջափուլի համար՝ քառամյա կամ հնգամյա կտրվածքով: Կառավարության գործունեության ծրագրի հիման վրա մշակվում են նաև ոլորտային զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:

Հետևաբար՝ «կայունությունը» (անգլերեն՝ stability, ռուսերեն՝ стабильность) կառավարության երկարաժամկետ և հեռահար ծրագրերի արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից է: Սույն հոդվածում «կայունություն» եզրույթն առավելապես օգտագործվում է կառավարությունների գործունեության տևողությունը բնորոշելու և ոչ թե որակական առումով կառավարության որոշում ընդունելու կարողությունը բնութագրելու համար:

Կառավարությունների այսպես կոչված «հաճախակի» փոփոխությունը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն կառավարության հեռահար ծրագրերի մշակման ու կենսագործման, այլ նաև ամբողջ պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության վրա: Քանի որ նոր ձևավորվող կառավարությունները, որպես կանոն, պետական կառավարման համակարգում սկսում են իրականացնել նաև կառուցվածքային փոփոխություններ, ինչը, լայն առումով, առնվազն կարճաժամկետ կտրվածքով, բացասական ազդեցություն է ունենում պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

¹ Աշխատանքը կատարվում է ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտեի նախագահի «04» սեպտեմբերի 2018 թ. N 36-Ա/Ք հրամանով հաստատված 18T-5E130 գիտական հետազոտական թեմայի շրջանակներում

արդյունավետության վրա: Պետական կառավարման համակարգում յուրաքանչյուր դեպքում կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, ըստ էության, պահանջում է որոշակի տևական ժամանակ՝ կատարված փոփոխություններին «հարմարվելու» և պետական իշխանության մարմինների միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների մեխանիզմների ներդաշնակ գործարկման համար:

Կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրն առավել հրատապություն է ձեռք բերում կառավարման խորհրդարանական ձևի պետությունների դեպքում, որտեղ կառավարությունների գործունեությունը, որպես կանոն, կարճաժամկետ բնույթ ունեն և կառավարություններին չի հաջողվում գործել միջև ընտրական շրջափուլի ավարտը:

Նշվածն առավել առարկայական դարձնելու նպատակով դիտարկենք կառավարման խորհրդարանական ձևի մի շարք պետությունների փորձը, այսպես, օրինակ՝ ա) Մոլդովայում 1990-2016 թթ. ձևավորվել է 18 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 1,44 տարի, բ) Բուլղարիայում 1991-2017 թթ. ձևավորվել է 17 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 1,5 տարի, գ) Հունաստանում 1989-2018 թթ. ձևավորվել է 18 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 1,6 տարի, դ) Իտալիայում 1990-2018 թթ. ձևավորվել է 17 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 1,64 տարի, ե) Խորվաթիայում 1990-2016 թթ. ձևավորվել է 13 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 2 տարի, զ) Դանիայում 1990-2018 թթ. ձևավորվել է 13 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 2,13 տարի, է) Ալբանիայում 1991-2018 թթ. ձևավորվել է 12 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 2,25 տարի, ը) Բելգիայում 1991-2018 թթ. ձևավորվել է 12 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 2,25 տարի, թ) Ֆինլանդիայում 1987-2015 թթ. ձևավորվել է՝ 12 կառավարություն,

որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 2,33 տարի, ժ) Գերմանիայում 1991-2018 թթ. ձևավորվել է 8 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 3,37 տարի, ի) Իսպանիայում 1986-2018 թթ. ձևավորվել է 9 կառավարություն, որոնց գործունեության միջին տևողությունը եղել է 3,55 տարի:

Վերը նշվածից բխում է, որ առավել կարճաժամկետ կտրվածքով կառավարություններ գործում են Մոլդովայում, Բուլղարիայում, Հունաստանում, Իտալիայում, Խորվաթիայում, որոնց գործունեության միջին տևողությունը չի գերազանցում 2 տարին, իսկ առավել երկարաժամկետ կտրվածքով կառավարություններ գործում են Գերմանիայում և Իսպանիայում, որոնց գործունեության միջին տևողությունը գերազանցում է 3 տարին:

Կառավարման խորհրդարանական ձևի պետություններում կառավարության գործունեության կարճաժամկետ բնույթը պայմանավորված է կառավարման այս ձևին բնորոշ առանձնահատկություններով: Մասնավորապես՝ խորհրդարանական կառավարման ձևի պետություններում կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից և իր գործունեության համար քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև, ուստի գործում է այնքան ժամանակ քանի դեռ վայելում է պառլամենտի վստահությունը²: Նշվածից բխում է, որ կառավարման խորհրդարանական ձևի դեպքում կառավարության գործունեության տևողությունը, ըստ էության, պայմանավորված է պառլամենտական մեծամասնության քաղաքական կամքից:

Համեմատության համար նշենք, որ կառավարման նախագահական ձևի պետություններում գործադիր իշխանությունն առավել կայուն է, դրանով պայմանավորված՝ գործադիր իշխանությունը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկը «կարծրությունն» է: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարման նախագահական ձևի դեպքում գործադիր իշխանությունը՝ ի դեմս հանրապետության նախագահի, ձևավորվում է ժողովրդի

² Տե՛ս Հոլանդիայի Սահմանադրության 42.1-րդ հոդված, Դանիայի Սահմանադրության 2-րդ հոդված, Ճապոնիայի Սահմանադրության 66-րդ հոդված, Իռլանդիայի Սահմանադրության 28-րդ հոդված.

կողմից և օժտված է անմիջական մանդատով, ինչի հետևանքով գործադիր իշխանության գործունեությունը կախված չէ պառլամենտական մեծամասնության վստահությունից: Կառավարման նախագահական ձևի դեպքում, եթե նույնիսկ գործադիր իշխանության վարած քաղաքականությունն անարդյունավետ է, օրենսդիր իշխանությունը լիազորություն չունի անվստահություն հայտնել գործադիր իշխանությանը: Գործադիր իշխանությանը պատասխանատվության ենթարկելու միակ մեխանիզմ հանրապետության նախագահի պաշտոնանկության ինստիտուտն է, սակայն նույնիսկ հանրապետության նախագահի պաշտոնանկությունը կարող է չբավարարել օրենսդիր իշխանությանը, քանի որ հանրապետության նախագահի պաշտոնանկության դեպքում հանրապետության նախագահի նոր ընտրություն չի անցկացվում, այլ՝ վերջինիս լիազորությունները փոխանցվում են փոխնախագահին, ով կարող է շարունակել պաշտոնանկ արված հանրապետության նախագահի վարած քաղաքականությունը: Նշվածից բխում է, որ կառավարման նախագահական ձևի պետություններում գործադիր իշխանության գործունեությունն առավել կայուն է, և գործադիր իշխանությունը՝ ի դեմս հանրապետության նախագահի, որպես կանոն, գործում է մինչև ընտրական շրջափուլի ավարտը:

Խորհրդարանական կառավարման ձևի պետություններում կառավարության գործունեության կայունության վրա ազդող հիմնական գործոնը պառլամենտում քաղաքական ուժերի դասավարվածությունն է: Այսինքն՝ կառավարության գործունեության կայունությունը, որպես կանոն, պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպիսի կազմ ունի ձևավորված պառլամենտը՝ միակուսակցական է, կոալիցիոն, թե՛ փոքրամասնության: Դիտարկենք կառավարության գործունեության կայունության ապահովման հիմնախնդիրը՝ պառլամենտում քաղաքական ուժերի տարբեր դասավորությունների պայմաններում:

Եթե պառլամենտում մեկ քաղաքական ուժի հաջողվում է ձևավորել մեծամասնություն, ապա ձևավորվում է միակուսակցական կառա-

վարություն: Այս պարագայում պառլամենտական մեծամասնության կողմից ձևավորված կառավարությունները, որպես կանոն, առավել կայուն են³: Սակայն միակուսակցական կառավարությունների դեպքում չի բացառվում, որ պառլամենտում ձևավորված մեծամասնությունը կարող է տրոհվել՝ հանգեցնելով կառավարությանն անվստահություն հայտնելուն:

Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման ձևի պետություններում հազվադեպ են ձևավորվում միակուսակցական պառլամենտներ, որպես արդյունք նաև՝ միակուսակցական կառավարություններ: Այդուհանդերձ՝ այդ երևույթը խորհրդարանական կառավարման ձևի որոշ պետությունների բնորոշ է, օրինակ՝ Բուլղարիանում 1991-2017 թթ. ձևավորվել է 17 կառավարություն, որոնցից 15-ը եղել են միակուսակցական, միակուսակցական կառավարություններ հաճախ ձևավորվում են նաև Հունաստանում և Լատվիայում:

Հաջորդ իրավիճակն այն է, երբ պառլամենտում մեծամասնությունը ձևավորվում է քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով, որի հետևանքով ձևավորվում է կոալիցիոն կառավարություն: Այս պարագայում կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրն առավել հրատապություն է ձեռք բերում, քանի որ պառլամենտում ձևավորված քաղաքական կոալիցիայի փլուզման հավանականությունն առավել մեծ է, իսկ քաղաքական կոալիցիայի փլուզումը, որպես կանոն, կհանգեցնի նաև կառավարության հրաժարականի:

Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման ձևի պետություններում առավել հաճախ ձևավորվում են հենց կոալիցիոն կառավարությունները, օրինակ՝ 1989-2015 թթ. Իտալիայում, Ֆինլանդիայում և Գերմանիայում ձևավորված բոլոր կառավարությունները եղել են կոալիցիոն, կոալիցիոն կառավարություններ առավել հաճախ ձևավորվում են նաև Բելգիայում, Իսլանդիայում, Ավստրիայում և Մոլդովայում:

Խորհրդարանական կառավարման ձևը բնութագրող հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ պառլամենտում ձևավորված քաղա-

³ Առավել մանրամասն տե՛ս Lijphart, Arend, «Patterns of democracy. Government forms and performance in thirty-six countries» New Haven: Yale University Press, 1999.

քական կոալիցիայի տրոհման հետևանքով պառլամենտում կարող է ձևավորվել նոր պառլամենտական մեծամասնություն կազմող կոալիցիա, ինչի պատճառով պառլամենտական մեծամասնություն ձևավորած իշխանությունը հանկարծակի կարող է դառնալ պառլամենտական ընդդիմություն, իսկ պառլամենտական ընդդիմությունը՝ նոր քաղաքական կոալիցիայի ձևավորման հետևանքով՝ իշխանություն:

Հաջորդ իրավիճակն այն է, երբ պառլամենտում որևէ կուսակցության կամ քաղաքական կոալիցիայի չի հաջողվում ձևավորել պառլամենտական մեծամասնություն, ուստի ձևավորվում է *փոքրամասնության կառավարություն*: Փոքրամասնության կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրն առավել հրատապություն է ձեռք բերում, քանի որ ցանկացած պահի պառլամենտական ուժերի միջև ձևավորված «փխրուն» փոխհամաձայնությունը (consensus) կարող է խաթարվել, ինչը կարող է հանգեցնել քաղաքական անկայունության և ճգնաժամի:

Փոքրամասնության կառավարություն ձևավորելու հնարավորություն նախատեսված է խորհրդարանական կառավարման մի շարք պետություններում (Հունաստան, Բուլղարիա, Նորվեգիա, Լիտվիա, Էստոնիա)⁴: Միաժամանակ՝ խորհրդարանական կառավարման ձևի մի շարք պետություններում (Բելգիա, Խորվաթիա, Չեխիա, Իսպանիա, Հայաստան) փոքրամասնության կառավարություն ձևավորելու հնարավորություն նախատեսված չէ: Նշված պետությունների օրենսդրությամբ նախատեսված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք միտված են պառլամենտում մեծամասնության ձևավորմանը: Խորհրդարանական կառավարման ձևի հանրապետություններում պառլամենտում մեծամասնության ձևավորման հիմնական մեխանիզմն այն է, որ պառլամենտում առավելագույն ճայներ ստացած կուսակցությանը կամ կոալիցիային տրամադրվում են լրացուցիչ մանդատներ (surplus mandates) պառլամենտում մեծամասնություն ձևավորելու համար:

Նշվածից բխում է, որ խորհրդարանական կառավարման ձևի պետություններում *կառավարության գործունեության կայունության ապահովման խնդիրը միակուսակցական, կոալիցիոն և փոքրամասնության կառավարությունների դեպքում տարբեր է*⁵: Սակայն, վերը նշվածով հանդերձ՝ անհրաժեշտ է նշել, որ կոնկրետ դեպքերում կառավարության գործունեության կայունության վրա ազդում են նաև մի շարք այլ գործոններ⁶, ուստի որոշ դեպքերում փոքրամասնության կառավարությունները կարող են առավել երկար կյանք ունենալ, քան միակուսակցական կառավարությունները:

Հաշվի առնելով կառավարման խորհրդարանական ձևի պարագայում կառավարության գործունեության անկայունության վտանգը՝ խորհրդարանական կառավարման ձևի մի շարք պետությունների օրենսդրությամբ նախատեսվել են այնպիսի մեխանիզմներ, որոնք միտված են կառավարության գործունեության կայունության ապահովմանը:

Խորհրդարանական կառավարման ձևի պետություններում կառավարության գործունեության կայունության ապահովման հիմնական մեխանիզմներից մեկը վարչապետին

⁴ Բուլղարիայում հանրապետության նախագահը պառլամենտական խմբակցությունների հետ խորհրդակցությունների արդյունքով պառլամենտում ամենաբարձր տեղ զբաղեցրած կուսակցության կողմից առաջադրված թեկնածուին նշանակում է վարչապետ՝ կառավարություն ձևավորելու համար: Եթե նշանակված վարչապետը յոթօրյա ժամկետում չի կարողանում ձևավորել կառավարությունը և ստանալ պառլամենտի վստահությունը, ապա հանրապետության նախագահը պառլամենտում երկրորդ ամենամեծ խմբակցության առաջարկած թեկնածուին նշանակում է վարչապետ՝ կառավարություն ձևավորելու համար: Եթե սահմանված ժամկետում նշանակված վարչապետը չի կարողանում ձևավորել կառավարությունը և ստանալ պառլամենտի վստահությունը, ապա հանրապետության նախագահը պառլամենտում ներկայացված ամենամեծ ընդդիմադիր խմբակցության ներկայացրած թեկնածուին նշանակում է վարչապետ՝ կառավարությունը ձևավորելու և պառլամենտի վստահությունը ստանալու համար, եթե, ի վերջո՝ չի հաջողվում կառավարություն ձևավորել, ապա պառլամենտը լուծարվում է (Սահմանադրության 99-րդ հոդված): Նմանատիպ իրավակարգավորում նախատեսված է նաև Հունաստանի Սահմանադրության 37-րդ հոդվածով:

⁵ Sŋu Svenja Krauss, «Stability through control? The influence of coalition agreements on the stability of coalition cabinets», Paper for presentation at the 6th ECPR Graduate Student Conference, Tartu, 10-13 July 2016, հասանել էր՝ <https://ecpr.eu/Filestore/PaperProposal/82f17383-bd0f-4590-bf63-1892254dafa0.pdf>

⁶ Sŋu Paul V. Warwick, «The durability of coalition governments in parliamentary democracies», Comparative Political Studies, 11 (1979), 465–98.

անվստահություն հայտնելու կոնստրուկտիվ անվստահության քվեի նախատեսումն է: Կոնստրուկտիվ անվստահության քվեի պարագայում՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելուն զուգահեռ անհրաժեշտ է ներկայացնել նաև նոր վարչապետի թեկնածու: Այսպիսի մեխանիզմն էականորեն բարդացնում է վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը, ինչը նպաստում է կառավարության գործունեության կայունությանը (Սլովակիա, Հունգարիա, Գերմանիա):

Խորհրդարանական կառավարման ձևի պետություններում կառավարության գործունեության կայունության ապահովման հաջորդ մեխանիզմը **վարչապետին անվստահություն հայտնելու նախաձեռնության համար ժամանակային առումով սահմանափակման նախապետումն է, որի պարագայում** վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան, օրինակ՝ մեկ տարի կամ վեց ամիս հետո, կամ վարչապետին անվստահություն հայտնելու մասին պառլամենտի որոշման նախագիծը եթե չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել որոշ ժամանակ, օրինակ՝ մեկ տարի հետո: Այս մեխանիզմը ևս միտված է ապահովելու կառավարության գործունեության կայունությունը:

Կառավարության գործունեության կայունության երաշխավորման հաջորդ մեխանիզմը կառավարության առաձին անդամին անվստահություն հայտնելու հնարավորության նախապետումն է⁷: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս խուսափելու կառավարության ամբողջ կազմին անվստահություն հայտնելուց այն դեպքում, երբ, օրինակ՝ պառլամենտը դժգոհ է կառավարության առանձին անդամների գործունեությունից:

Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման ձևի որոշ պետություններում նախատեսված են նաև կառավարության գործունեության կայունության ապահովման այլ կա-

ռուցակարգային մեխանիզմներ: Օրինակ՝ Էստոնիայում, եթե պառլամենտը կառավարությանն անվստահություն է հայտնում, ապա հանրապետության նախագահը կառավարության առաջարկով կարող է լուծարել պառլամենտը (97-րդ հոդված): Եվս մեկ օրինակ՝ Հունաստանում, եթե երկու կառավարություն հրաժարական են տալիս կամ անվստահության քվե են ստանում, ապա դա հանգեցնում է պառլամենտի լուծարման (41-րդ հոդված):

Ամփոփելով՝ կատարված վերլուծության արդյունքով կարող ենք վեր հանել հետևյալ հիմնադրույթները՝ ա) կառավարության գործունեության «կայունության» ապահովումը կառավարության երկարաժամկետ և հեռահար ծրագրերի մշակման ու իրագործման արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից է, բ) կառավարության գործունեության կայունության ապահովման հիմնախնդիրն առավել հրատապություն է ձեռք բերում կառավարման խորհրդարանական ձևի պետություններում, որտեղ կառավարությունները, որպես կանոն, գործում են կարճաժամկետ կտրվածքով, գ) կառավարման խորհրդարանական ձևի պետություններում կառավարության գործունեության տևողությունը, որպես կանոն, պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպիսի կազմ ունի պառլամենտը՝ միակուսակցական է, կոալիցիոն, թե փոքրամասնության, դ) չնայած կառավարման խորհրդարանական ձևի՝ մի շարք պետություններում նախատեսված են կառավարության գործունեության կայունության ապահովմանը միտված լրացուցիչ մեխանիզմներ, այդուհանդերձ՝ կառավարման խորհրդարանական ձևի պետություններում կառավարությունների գործունեության կարճաժամկետ բնույթը բացասական ազդեցություն է ունենում երկարաժամկետ ծրագրերի մշակման ու կենսագործման և այդպիսով նաև՝ ամբողջ պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության վրա:

⁷ Էստոնիայի Սահմանադրության 97-րդ հոդված, Սլովենիայի Սահմանադրության 118-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 159-րդ հոդված, Լատվիայի Սահմանադրության 59-րդ հոդված:

ՆԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
 ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
 փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄ»
 ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պետական կարիքների բավարարումը պետության հիմնական գործառույթներից մեկն է: Դրա իրականացման եղանակներից մեկն էլ պետական գնումներն են, որոնց համակարգային ուսումնասիրությունն անհրաժեշտ է պետության բնականոն և արդյունավետ գործունեության ապահովման համար:

Գնումների գործընթացում պետական կարիքն արտացոլվում է պետական պատվերում: Պետական պատվերի հիմքում հենց պետական կարիքն է, սակայն վերջինս ավելի լայն հասկացողություն է, քան պետական պատվերը: Պետական պատվերն ամբողջությամբ ներառվում է պետության կարիքների մեջ, սակայն ոչ բոլոր պետական կարիքներն են ամփոփվում պետական պատվերի կազմում: Պատճառն այն է, որ պետության կարիքները կարող են բավարարվել նաև այլ եղանակով (օրինակ՝ ազգայնացումը, հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը և այլն), մինչդեռ պետական պատվերը միշտ ուղղված է պետական կարիքների բավարարմանը:

«Պետական պատվեր» եզրույթը միանշանակ բնորոշում չունի ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ իրավական ակտերում, և դա այն դեպքում, երբ պետական պատվերի բացահայտումը գնման գործընթացում ունի առանցքային նշանակություն՝ նկատի ունենալով, որ պետական պատվեր եզ-

րույթն ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործվում է բազմաթիվ իրավական ակտերում և գրականության մեջ:

«Պատվեր» բառը բացատրվում է որպես որևէ բան պատրաստելու, արտադրելու, տրամադրելու հանձնարարություն¹:

Տնտեսագիտության եզրութաբանությամբ պետական պատվերը ներկայացվում է որպես պետական մարմինների կողմից տրվող և պետական բյուջեի միջոցների հաշվին վարձատրվող պատվեր՝ արտադրանքի ստեղծման, ապրանքների թողարկման, աշխատանքների կատարման համար, որոնցում հետաքրքրված է պետությունը: Նման պատվերը կարող է կատարվել ոչ միայն պետական, այլ նաև այլ ձեռնարկությունների կողմից: Պատվերը սովորաբար տրվում է մրցութային հիմքով²:

«Պետական պատվեր» արտահայտությունը, լինելով տնտեսագիտական կատեգորիա, ամրագրվելով օրենսդրության մեջ ձեռք է բերել նաև իրավաբանական հատկանիշներ: Պետական պատվերը ոչ միայն կիրառվում է պետության կողմից տնտեսությունը կարգավորելիս, այլ նաև այլ ոլորտներում, օրինակ՝ գիտություն, կրթություն և այլն³:

Այդուհանդերձ՝ «Գնումների մասին» ՀՀ գործող օրենքը, օգտագործելով «պատվիրատու» արտահայտությունը, չի բացահայտել «պատվեր» եզրույթի իմաստը: Հետաքրքիր է նաև այն, որ անգամ մինչև 2000 թվականին

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

¹ Տե՛ս Է. Բ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 1196-1197: Էլեկտրոնային աղբյուր՝ <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&pageNumber=1220>, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:

² Տե՛ս Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б. Современный экономический словарь.– 6-е изд., перераб. и доп.– М., ИНФРА-М, 2011: Էլեկտրոնային աղբյուր՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_67315/, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:

³ Օրինակ՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, որը սույն ուսումնասիրության շրջանակներից դուրս է:

«Գնումների մասին» ՀՀ առաջին օրենքի⁴ ընդունումն իրավական ակտերում, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության որոշումներում, օգտագործվել է «պետական պատվեր» արտահայտությունը՝ այդուհանդերձ չբացահայտելով դրա էությունը⁵:

Իրավագետները միանշանակ տեսակետ չունեն պետական պատվեր հասկացության հարցում: Ռուս հայտնի իրավագետ Լ. Վ. Անդրեևան նշել է, որ տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ «պատվեր», «պետական պատվեր» հասկացություններն օգտագործվում են տարբեր իմաստներով՝ և՛ որպես պետական պայմանագիր, և՛ որպես ապրանքների մատակարարում, և՛ որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների՝ պետության կարիքների ամբողջություն: Նա պետական պատվեր եզրույթը սահմանել է իր աշխատության մեջ՝ ներկայացնելով որպես փաստաթուղթ, որը պարունակում է պետության՝ այնպիսի ապրանքների՝ քանակով, որակով, տեսականիով, ժամկետով և այլ բնութագրերով կոնկրետացված և սահմանված կարգով ձևավորված կարիք (անհրաժեշտություն), որոնց մատակարարումն իրականացվում է բյուջեի և այդ նպատակների համար ներգրավված ֆինանսավորման արտաբյուջետային միջոցների հաշվին, և որի տեղաբաշխումն իրականացվում է պատվերների տեղաբաշխման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով⁶:

Պետական պատվեր հասկացությունը սահմանվել է նաև այլ ռուս իրավագետների կողմից: Մասնավորապես՝ ըստ Կ. Վ. Կիչիկի. «Պետական պատվերը հանրային-իրավական կառույցի՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կոնկրետացված կարիքն է՝ ամ-

րագրված իրավական ակտում (նորմատիվ-իրավական կամ վարչական), որը բավարարվում է օրենքով սահմանված կարգով պատվերների տեղաբաշխման միջոցով (որպես կանոն՝ անորոշ շրջանակի անձանց՝ պոտենցիալ մատակարարների շրջանում), պետական (մունիցիպալ) պայմանագրի, բյուջետային կառույցի քաղաքացիաիրավական պայմանագրի կամ այլ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքմամբ, որը պարունակում է այդ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին ներկայացվող անհրաժեշտ պահանջները, ինչպես նաև ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանները՝ պետական (մունիցիպալ) կարիքները բավարարելու նպատակով⁷: Վ. Գ. Բլինովի բնորոշմամբ՝ պետական պատվերը հանրային մարմնի իշխանական կամային ակտ է՝ հասցեագրված պետական պատվիրատուին, որը նախատեսում է պետական կարիքների բավարարման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, տեղաբաշխվում է օրենսդրությանը համապատասխան՝ գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների միջև, հիմք է պետական պատվիրատուի ու մատակարարի միջև պետական պայմանագրի կնքելու համար, ֆինանսավորվում է բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին: Պետական պատվերը՝ որպես հանրային շահի ֆորմալացված արտահայտություն, անհրաժեշտ պայման է հանուն պետության կարիքների ապրանքների մատակարարման մասնավոր-իրավական հարաբերությունների իրացման համար⁸:

Որոշ հեղինակներ պետական պատվերը դիտարկում են լայն իմաստով՝ որպես պետա-

⁴ Ընդունվել է 05.06.2000 թվականին, ուժի մեջ է մտել 21.08.2000 թվականին, ուժը կորցրել է 01.01.2005 թվականին, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2000.06.22/13(111), համար՝ ՀՕ-62:

⁵ Տե՛ս, օրինակ՝ ՀՀ կառավարության 08.02.1995 թվականի թիվ 67 որոշումը «ՀՀ 1995 թվականի պետական պատվերի մասին» կամ 15.06.1996 թվականի թիվ 175 որոշումը «ՀՀ 1996 թվականի պետական պատվերի մասին» և այլն:

⁶ Տե՛ս Андреева Л.В. Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд: правовое регулирование, 2-е изд., перераб. и доп.– М.: «Волтерс Клувер», 2011, պարագրաֆ 2.2, ինտերնետային աղբյուր՝ <http://www.twirpx.com/file/533493/>, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:

⁷ Տե՛ս Кичик К.В. Государственный (муниципальный) заказ как средство государственного регулирования экономики: правовые вопросы. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 33:

⁸ Տե՛ս Блинов В.Г. Правовое регулирование частных и публичных отношений при поставке товаров для государственных нужд, на соискание ученой степени кандидата юридических наук, Чебоксары, 2009, էջ 55-56:

կան կարիքներ, իսկ նեղ իմաստով՝ որպես մրցույթի անցկացման մասին ծանուցում⁹:

Պետական պատվերը ներկայացվում է նաև որպես պետական պատվիրատուներին հասցեագրված գործադիր իշխանության կառավարչական ակտ, որը նախատեսում է որոշակի պետական կամ այլ պայմանագրի կնքման անհրաժեշտություն՝ ապրանքների աշխատանքների, ծառայությունների կարիքների բավարարման համար¹⁰, կամ որպես պետության անունից հանձնարարություն (կազմակերպչական ակտ)՝ համապատասխան հանրային-իրավական կառույցների շահերին համապատասխան գյուղատնտեսական ապրանքների, հումքի և արտադրության մատակարարմամբ ապահովելու նպատակով¹¹:

Ե. Պ. Գուբինի տեսակետն այլ է. ըստ նրա՝ պետական պատվերը վարչական (ադմինիստրատիվ)-պլանային ակտ չէ, որը պարտադիր կլիներ շուկայի մասնակիցների համար, այլ՝ պետական կարգավորման գործիք է, շուկայական պլանավորման գործընթացի բաղկացուցիչ մաս¹²:

Ի տարբերություն շուկայական տնտեսության՝ խորհրդային շրջանի պետական պատվերը կարելի է դիտարկել որպես կառավարչական ակտ, որը պարտադիր էր ոչ միայն պետական պատվիրատուի (համապատասխան պետական կառավարման մարմնի), այլ նաև մատակարարի (ձեռնարկության) համար: Պետական պատվերը սահմանափակված էր կատարող սուբյեկտներով և տեղաբաշխվում էր հաստատված պլաններին համապատասխան:

Կողմերը որևէ բան չէին կարող համաձայնեցնել, իսկ պայմանագրի կնքելու կամքն արտահայտվում էր միայն փոխադարձ լռությամբ: Պայմանագրի կնքելուց խուսափելը դիտվում էր որպես վարչական իրավախախտում և պատժվում էր տուգանքով¹³: Ընդ որում՝ նաև նշվում է, որ միայն տեսական մակարդակով էր, որ պետական պատվերները կարող էին տեղաբաշխվել մրցութային կարգով¹⁴:

Ներկայումս՝ շուկայական տնտեսության պայմաններում, պետական գնումների մասնակցի համար պետական պատվերը չի կարող պարտադիր լինել, քանի դեռ վերջինիս հետ չեն ծագել պայմանագրային հարաբերություններ՝ դրանց չկատարումից կամ ոչ պատշաճ կատարումից բխող բացասական հետևանքներով: Ուստի, հաշվի առնելով պլանային տնտեսությունից անցումը շուկայական տնտեսության՝ կարելի է համարել, թե պետական պատվերը պետական կարգավորման ուղղակի (վարչական) մեթոդից վերածվել է անուղղակի (տնտեսական) մեթոդի¹⁵:

Ամփոփելով պետական պատվերի վերաբերյալ վերը նշված տեսակետները, համադրելով դրանց՝ մեզ համար ընդունելի տեսանկյունները՝ կարծում ենք, որ պետական պատվերը որպես պայմանագրի կամ պայմանագրերի ամբողջություն ներկայացնելու դեպքում խաթարվում է պետական պատվերի էությունը, քանի որ պայմանագիրը պետական պատվերի իրացման ձև է, միջոց՝ պետական պատվերի կատարման համար:

Կարծում ենք՝ պետական պատվերը միայն

⁹ Տե՛ս, օրինակ՝ Цикорев Н.Н., Колосов А.И. Государственные закупки: практика, организации и нормативное обеспечение: Учебное пособие, Орел: Издательство ОРАГС, 2004, էջ 16, կամ Белов В.Е. Участие Российской Федерации и субъектов Российской Федерации в отношениях, связанных с государственными заказами: Автореф. дисс., к. ю. н., М., 2006, էջ 6, կամ Гуцелюк Е.Ф. Применение лотовой закупки при расходовании бюджетных средств //Госзаказ: управление, размещение, обеспечение, 2008. №11, էջ 76 և այլն:

¹⁰ Տե՛ս Тарабаев П.С. Гражданско-правовое регулирование поставки товаров для федеральных государственных нужд, автореф. Дисс., к. ю. н., Екатеринбург, 2009, էջ 12:

¹¹ Տե՛ս Горбунова Л.В. «Поставка продовольствия для государственных нужд по российскому гражданскому праву. Дисс., к. ю. н., Самара. 2003, էջ 23:

¹² Տե՛ս Губин Е.П. Государственное регулирование рыночной экономики и предпринимательства: правовые проблемы, М.: Юристъ, 2005, էջ 207:

¹³ Տե՛ս Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга первая: общие положения, изд-во 4-е, стереотипное, М., «Статут», 2001, էջ 154:

¹⁴ Տե՛ս Молотников А.Е., Куракин Р.С. Актуальные проблемы предпринимательского права: Выпуск II, Монография, М.: НИЦ ИНФРА-М, 2016, էջ 300:

¹⁵ Տե՛ս Шевченко Л.И., Гредин Г.Н. Госзаказ в системе государственного регулирования экономики, Кемерово, 1999, էջ 45:

որպես ծանուցում դիտելը ևս արդարացված չէ: Իհարկե, պետական պատվերն արտացոլվում է համապատասխան փաստաթղթերում, սակայն դրանք նույնացնելը սահմանափակում է պետական պատվերի էությունը:

Մենք համակարծիք չենք, որ պետական պատվերը պետական կարիքների հետ կարելի է նույնացնել՝ նկատի ունենալով, որ պետական կարիքները չեն սահմանափակվում միայն պետական գնումների ոլորտով: Այլ կերպ ասած՝ պետական կարիքն ավելի լայն է, քան պետական պատվերը, պետական պատվերն ընդամենը միջոցներից մեկն է, որով հնարավոր է բավարարել պետական կարիքը:

Մեր կարծիքով՝ պետական գնումների ոլորտում պետական պատվերը կարելի է բնորոշել որպես պետական կարիքների բավարարման նպատակով գնումների պլանավորման ընթացքում պետական պատվիրատուի կողմից մշակված և կոնկրետ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կամ այլ ակտիվների (արժեքների) ձեռքբերման համար տրված հանձնարարական¹⁶:

Պետական պատվերն իրացվում է գնման գործընթացի միջոցով: Գնման գործընթացը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

«Գնումների մասին» ՀՀ գործող օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնում է համարվում պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշ-

խատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների շրջանակներում մասնավոր հատվածի գործընկերոջը իրավունքների շնորհումը: Այսպիսով՝ վերոնշյալ օրենքի իմաստով գնում է համարվում առավելապես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը¹⁷:

Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (United Nations Commission on International Trade Law, UNCITRAL) կողմից մշակված «Պետական գնումների մասին» մոդելային օրենքի համաձայն ևս՝ «գնումները» կամ «հանրային գնումները» նշանակում են ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերում¹⁸:

Եթե անգլալեզու աղբյուրներում «procurement» եզրույթը գուցե կարող է և իրավաբանական տեխնիկայի, իրավաբանական լեզվի տեսանկյունից խնդիր չառաջացնել, ապա նույնը չի կարելի ասել հայ իրականության համար:

Այսպես՝ ՀՀ օրենսդրությամբ գնումը ենթադրում է հիմնականում երեք տիպի նյութական և ոչ նյութական արժեքի ձեռքբերում՝ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է վերոնշյալ արժեքների ձեռքբերման համար հիմնականում հետևյալ պայմանագրերի կնքման հնարավորություն՝ առուվաճառքի պայմանագիր՝ ապրանքների ձեռքբերման համար, կապալի պայմանագիր՝ աշխատանքների կատարման համար, ծառայությունների վճա-

¹⁶ Նկատի ունենալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի իմաստով պատվիրատուներ են նաև տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքային հիմնարկները, համայնքային տարբեր կազմակերպություններ, իսկ համայնքային պատվերի տեղաբաշխման համար հատուկ ընթացակարգ չի նախատեսվում, սույն հասկացությունը կիրառելի է նաև համայնքային պատվերի դեպքում:

¹⁷ Այդպես է ներկայացված եղել նաև 05.06.2000 թվականին, 06.12.2004 թվականին և 22.12.2010 թվականին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքներում:

¹⁸ Տե՛ս <https://www.uncitral.org/pdf/english/texts/procurem/ml-procurement-2011/2011-Model-Law-on-Public-Procurement-e.pdf>, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:

րովի մատուցման պայմանագիր՝ ծառայությունների մատուցման համար:

«Գնում», «գնել» եզրույթները հայ իրականության մեջ առավելապես ասոցացվում են առուվաճառքի (առուծախի) պայմանագրի հետ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդված): Պայմանագրի տեսակի անվանումը՝ առուվաճառք, ինքնին բացահայտում է պայմանագրի երկու կարևոր տարրերը՝ «առնել (գնել) և վաճառել»¹⁹, ընդ որում՝ գնորդ եզրույթը, որը հենց գնման մասնակիցն է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օգտագործվում է առուծախի և մատակարարման հարաբերությունները կարգավորելիս:

Ինչ վերաբերում է կապալի պայմանագրին և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ կապալառուն պատվիրատուի առաջադրանքով կատարում է աշխատանք՝ վարձատրվելով դրա դիմաց, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ է մատուցում (կատարում որոշակի գործողություններ կամ իրականացնում որոշակի գործունեություն)՝ վճարվելով դրա դիմաց:

Վերոնշյալ հիմնական պայմանագրերի հասկացությունների վերհանումն արդեն իսկ բավարար է, որպեսզի փաստենք, որ հայ իրավագիտության համար խորթ է «աշխատանքի գնում» կամ «ծառայության գնում» արտահայտությունը, մինչդեռ գործող պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ անգամ կնքվող պայմանագրերում օգտագործվում է «աշխատանքի գնում» կամ «ծառայության գնում» արտահայտությունը²⁰, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրք-

քից «Գնումների մասին» ՀՀ օրենքի եզրութաբանական օտարացվածությամբ:

Հետևաբար, մեր կարծիքով՝ «գնում» բառը կիրառելի է ապրանքների ձեռքբերման համար, իսկ աշխատանքների և ծառայությունների «գնում» չի կարող լինել. աշխատանքները և ծառայությունները պատվիրատուի առաջադրանքով համապատասխանաբար կատարվում և մատուցվում են:

Մասնագիտական գրականության, այդ թվում՝ գիտական հոդվածների և ատենախոսությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պետական գնումների վերաբերյալ նույնպես միանշանակ հասկացություն գոյություն չունի:

Այսպես, տեսակետներից մեկի համաձայն՝ «գնումը» պատվիրատուի կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն է՝ ուղղված պետական կամ համայնքային կարիքների բավարարմանը: Գնումն սկսվում է մատակարարին (կապալառուին, կատարողին) որոշելուց և ավարտվում է պայմանագրի կողմերի կողմից պարտականությունները կատարելով: Օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ նախատեսված չէ գնում իրականացնելու մասին հայտարարության հրապարակում կամ գործընթացին մասնակցելու հրավերի ուղարկում, գնումն սկսվում է պայմանագրի կնքմամբ և ավարտվում կողմերի կողմից պարտականությունների կատարմամբ²¹:

Ռուս մեկ այլ հեղինակի դիտարկմամբ՝ պետական պատվերը պետական պատվիրատուի գործողություններն են՝ ուղղված պետական պայմանագրի կնքմանը՝ աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերման նպատակով, որոնց ֆինանսավորումն իրականացվում է հարկատուների հաշվին և անհրաժեշտ է պետության գործունեության համար: Պետական գնումը գործընթաց է՝ ուղղված պետական կարիքների համար ապրանքների ձեռքբերմանը, որի

¹⁹ «Առուվաճառք» կամ «առուծախ» անվանումը կիրառելու նախապատվության վերաբերյալ տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, 2-րդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ՝ պրոֆ. Ս. Կ. Բարսեղյանի և պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008, էջ 9, թիվ 1 հղում:

²⁰ Նմանատիպ բազմաթիվ պայմանագրերի օրինակներ տե՛ս www.gnumner.am կամ www.armeps.am կայքերում:

²¹ Տե՛ս Карасева С.В. Правовое регулирование размещения государственного заказа и исполнения договора на оказание услуг для государственных, муниципальных нужд, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2013, էջ 102:

ֆինանսավորումը նույնպես իրակացվում է հարկատուների հաշվին²²:

Մեկ այլ հեղինակ էլ նշում է, որ «պետական գնում» եզրույթը գրեթե ամեն մի երկրում տարբեր կերպ է մեկնաբանվում: Մեծամասնությունում խոսքը պետական մարմինների գործառույթների իրականացման ապահովման նպատակով պետական բյուջեի միջոցների հաշվին գնումների մասին է՝ բացառելով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերումը հետագա վերավաճառքի համար²³:

Մեկ ուրիշ տեսակետի համաձայն՝ «պետական գնում» եզրույթը վերաբերում է պետական պատվերի տեղաբաշխմանը: Պետական կամ համայնքային պատվերը տեղաբաշխվում է օրենսդրությամբ սահմանված կարգով, որը և կոչում են «պետական կամ համայնքային գնում»: «Գնում» եզրույթը ինչպես գիտական, այնպես էլ այլ գրականության մեջ հաճախ օգտագործվում է հենց միայն «պետական պատվերի տեղաբաշխման» իմաստով (այդ թվում՝ այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են՝ «գնումների մասին օրենսդրություն», «գնման մեխանիզմ», «գնման գործընթացներ» և այլն)²⁴:

Գնման գործընթացն իրականում բավականին բարդ իրավաբանական փաստերի ամբողջություն է և ներառում է ինչպես արարքների, մասնավորապես՝ գործողությունների ամբողջություն (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի ամբողջություն), այնպես էլ որոշ դեպքում իրադարձությունների ամբողջություն, որոնք ազդում են գնումների գործըն-

թացի ծագման և հետագա զարգացման վրա (օրինակ՝ արտակարգ իրավիճակի առաջացում, որի հետևանքով առաջանում է գնման անհետաձգելի անհրաժեշտություն):

Վերոգրյալի հիման վրա ամփոփելով պետական գնում հասկացության համար էական նշանակություն ունեցող հատկանիշները, ինչպես նաև հաշվի առնելով, որ «գնում» եզրույթը ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար օգտագործելը չի բխում հայրենական իրավական մտքին բնորոշ եզրութաբանությունից՝ առաջարկում ենք **«պետական գնում» արտահայտության փոխարեն օգտագործել «պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կարիքների բավարարում» արտահայտությունը՝ բնորոշելով դա որպես ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կամ այլ ակտիվների (արժեքների) ձեռքբերման նպատակով իրականացվող և պետական պատվերի վրա հիմնված գործընթաց, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին**²⁵:

Ընդ որում, կարծում ենք՝ կարիք չկա հասկացության մեջ թվարկել այն բոլոր ակտիվները (արժեքները), որոնք ձեռք են բերվում պետության կողմից՝ նկատի ունենալով, որ, մասնավորապես, վարձակալության, փոխադրման պայմանագրերը ներառված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ հասկացության մեջ, սակայն գործնականում պետական գնում անց է կացվում նաև նշված պայմանագրերի կնքման նպատակով²⁶:

²² Տե՛ս Бордунова С.А. Правовое регулирование государственных и муниципальных заказов по законодательству Российской Федерации, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012, էջ 44:

²³ Տե՛ս Кузнецов К.В. Настольная книга поставщика и закупщика: торги, конкурсы, тендеры, М., 2003, էջ 131:

²⁴ Տե՛ս Кичик К.В. Государственный (муниципальный) заказ как средство государственного регулирования экономики: правовые вопросы. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 41:

²⁵ Ընդ որում՝ «պետական պատվեր» եզրույթի նմանությամբ նշված հասկացությունը կիրառելի է նաև համայնքային գնումների համար:

²⁶ Տե՛ս, օրինակ՝ հետևյալ ծածկագրերով գնման իրավերները՝ www.gnumner.am կայքում՝ ՀՊՄՀ-ԷԱՃԾՁԲ-18/1, ՀՀ ՖՆ-ԳՀՇՁԲ-18/31, Բ8015321549, ՀՀ ՏՂՆՆՁԿ-ԳՀՇՁԲ-18/4-1, «Կապանի ոչ բնակելի տարածքի վարձակալություն», «Սալիտակի ոչ բնակելի տարածքի վարձակալություն» և այլն (վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին):

ՍԻՐՈ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁ

«Հանրային իրավունքի իրավաբանական անձանց» հասկացությունը և տեսակները հիմնականում ամրագրված են ռոմանագերմանական իրավունքի երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Մոլդովայի, Վրաստանի օրենսդրությունների մեջ, որտեղ, որպես կանոն, հանրային իրավունքի իրավաբանական անձ են պետությունը, վարչատարածքային միավորները, համայնքները, հանրային հիմնարկները, հանրային կորպորացիաները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և այլն¹: Ընդ որում՝ պետք է արձանագրել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները տարբեր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել: Յուրաքանչյուր երկրի ազգային համակարգը, ելնելով պատմական ավանդույթներից, դոկտրինալ մեկնաբանություններից և օրենսդրի կամքից, կարող է հանդես գալ նշանակալից ինքնուրույնությամբ և չներառել այս կամ այն տեսակի՝ ընդհանուր տեսական իմաստով հանրային իրավունքի իրավաբանական անձն իրավաբանական անձանց շարքում:

ՀՀ օրենսդրության մեջ նույնպես ամրագրված է «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» կատեգորիան. ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 180-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է», մինչույն ժամանակ՝ 189-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ է նաև միջհամայնքային միավորումը:

Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել՝ միայն վերոթվարկյալ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որի տարատեսակ, ըստ մեզ, պետք է հանդիսանա պետությունը:

Ինչպես նշել է Գ. Ելլինեկը. «Եթե պետությունն իրավունքի սուբյեկտ է և եթե ֆիզիկական անձ չէ, ապա կարող է լինել միայն իրավաբանական անձ (կորպորացիա), չնայած ունի մի շարք առանձնահատկություններ՝ ի համեմատություն սովորական իրավաբանական անձանց»²:

Պետությունը որպես իրավաբանական անձ դիտելու հարցն առաջինը բարձրացվել է Գերմանիայում Վ. Ալբրեխտոնի կողմից XIX դարի 30-ական թվականներին: Հետագայում այս գաղափարը պաշտպանվել է նաև Գ. Գերբերի կողմից, ով իր «Գերմանական իրավունքի համակարգը» գրքում (1865) նշել է, որ հանրային իրավունքի կառուցակարգի անհրաժեշտ պայման է պետությունը դիտել որպես իրավաբանական անձ: Ըստ Գ. Գերբերի՝ պետությունն իր ամբողջության մեջ պետք է բնորոշվի որպես իրավաբանական անձ, բայց ոչ թե ընդհանուր ընկալմամբ, որը բնորոշ է մասնավոր իրավունքին, այլ՝ որպես «անձ potentior», որն ունի իշխանության տարրեր, որի լիազորություններն արտահայտվում են իրավունքի սուբյեկտի սուբյեկտիվ հանրային իրավունքերով, որի պարտականությունները համապատասխանում են քաղաքացիների իրավունքներին»³:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

¹ Հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն առավել մանրամասն տես Ս. Ամիրխանյան, Հանրային իրավունքի իրավաբանական անձանց հիմնական տեսակներն արտասահմանյան երկրներում, Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2017թ. էջ 13-20:

² Տե՛ս Էլլինեկ Գ. Общее учение о государстве. СПб., 1908. С. 123.

³ Տե՛ս Garrido Falla Fernando Tratado de Derecho Administrative. Vol. 1. Madrid.: Instituto de Estudios Politicos. 1976. P. 353:

Պետության՝ որպես իրավաբանական անձի, կառուցակարգի կառուցումը, հաշվի առնելով նրա սոցիալական և կորպորատիվ հիմքը, նպատակ է ունեցել սահմանափակել նրա անկառավարելի իշխանությունը և նրա գործունեությունը ենթարկել իրավաբանական նորմերի կարգավորումներին (սահմանադրություններին և օրենքներին): Միննույն ժամանակ՝ այդպիսի մոտեցումը թույլ էր տալիս դիտարկել որպես պետության հիմք ինքնին հասարակությունը և ընդգծել պետության ներկայացուցչական բնույթը հասարակության հետ հարաբերություններում: Դա թույլ էր տալիս շեշտադրել 2 կարևոր պահեր՝ 1) հնարավորություն տալ պետությունը ներկայացնել որպես «կազմակերպված corpus» (կազմակերպական կազմավորում), որի գործունեությունը նորմատիվորեն կարգավորված է, 2) պետությունը մեկնաբանել որպես իրավաբանական պատասխանատվության սուբյեկտ, որը մասնավոր անձանց ապահովում էր ազատությունների և իրավունքների երաշխիքներով⁴:

Գաղափարը, որ պետությունը կարիք ունի իրավաբանական անձի կառուցակարգի, ռուսաստանյան մինչհեղափոխական հեղինակները (Ֆ. Կոկոշկին⁵, Ն. Էսմեն⁶) նույնպես պաշտպանել են: Ի. Ա. Իլյինի կարծիքով՝ պետությունը ոչ միայն միություն է, այլև իրավական միություն, որը կազմավորվում է մարդկանց կողմից, որը գործում է իրավական նորմերով: Դա նշանակում է, որ պետությունը գոյություն ունի ոչ թե բնությունից, այլ կազմավորվում է մարդկանց կողմից՝ ո՛չ ֆիզիկական իր է (օրինակ՝ տարածք), ո՛չ պարզապես մարդկանց բազմություն, այլ՝ մարդկանց միություն է, ովքեր կապված են միասնական իրավունքով, իշխանությամբ և տարածքով. պետությունը մարդկանց միություն է որպես մեկ ամբողջություն⁷: Բացահայտելով այս իրավաբանական անձի բնույթը՝ Ա. Իլյինը հանգում է եզրակացության, որ

պետությունը ոչ թե հիմնարկ է, որը սպասարկում է այլ անձանց կարիքները. նա իրավաբանական անձ է, որը ներառում է նրանց, ում համար գոյություն ունի: Այս իրավաբանական անձն ունի ոչ թե մասնավոր իրավական, այլ՝ հանրային իրավական բնույթ, քանի որ հիմնականում ունի իշխանական լիազորություններ: Պետությունը միություն է, որը լիազորված է իշխելու իր անդամների նկատմամբ, նրանց համար հրապարակելու իրավական նորմեր և հրամաններ, ղեկավարելու նրանց և դատելու⁸:

Ներկայումս հետխորհրդային 2 պետությունում՝ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում, այն իրավակարգավորումը, որ պետությունը քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով, մեկնաբանվում է այնպես, որ հանրային իրավական կազմակերպությունների նկատմամբ զուտ կիրառվում են իրավաբանական անձանց վերաբերող կարգավորումները, բայց նրանք այդպիսին չեն, քանի որ ունեն այսպես կոչված «քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտի» կամ «քաղաքացիական շրջանառության հատուկ մասնակիցների» կարգավիճակ⁹:

«Իրավունքի հատուկ սուբյեկտի» կառուցակարգը, որը կիրառվել է՝ հանրային իրավական կազմավորումների հետ կապված, ծագել է խորհրդային ժամանակաշրջանում և իր ամրագրումն է ստացել գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Խորհրդային և ժամանակակից իրավաբանների մի մասի կարծիքով՝ այս խմբի սուբյեկտներին չի կարելի ճանաչել որպես քաղաքացիական իրավունքի իրավաբանական անձ, քանի որ նրանք հանդես են

⁴ Стѣн Ястребов О. А. Юридическое лицо публичного права: сравнительно-правовое исследование: дис. докт. юрид. наук. Москва 2010г. С. 262-263.
⁵ Стѣн Коккошкин Ф. Русское государственное право. М. 1908. С. 60.
⁶ Стѣн Эсмен Н. Общие основания конституционного права. М. 1914. С. 33.
⁷ Стѣн Ильин И. А. Теория права и государства. М., 2003. С. 45.
⁸ Стѣн Ильин И.А. Теория права и государства. М. 1915. С. 161 -162, 166:
⁹ Стѣн Гражданское право: учебник / под ред. Ю. К. Толстого, А. П. Сергеева.М., 1996. էջ 154; Гражданское право: учебник / отв. ред. Е. А. Суханов. 2-е изд. Т. I. М., 2002. С. 282-283, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան 2009, էջ 166:

գալիս որպես քաղաքացիական շրջանառության մասնակիցների ինքնուրույն խումբ¹⁰:

Սակայն, կարծում ենք՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ «երրորդ տարատեսակ»՝ բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող, որովհետև, իրավաբանական անձանց վերաբերող նորմերը տարածելով հանրային իրավական կազմավորումների նկատմամբ, օրենսդիրը հենց դրանով հավասարեցնում է դրանց իրավաբանական անձանց, չնայած և ճանաչում է, որ ինքնին այդ սուբյեկտների բնույթը հնարավորություն չի տալիս նրանց վրա տարածելու իրավաբանական անձանց վերաբերող բոլոր նորմերը:

ՀՀ ՔՕ-ի 128-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից: Այս առումով, կարծում ենք՝ վերը նշված դրույթից կարելի է բխեցնել 2 հակասական կարծիք: Մի դեպքում՝ կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը քննարկվող սուբյեկտներին չի նույնականացնում իրավաբանական անձանց և սահմանում է իրավաբանական անձանց վերաբերող նորմերի սուբսիդիար կիրառություն, իսկ մյուս դեպքում, ինքնին ձեռնպահ մնալով նրանց իրավաբանական անձի կարգավիճակ շնորհելուց, նույնացնում է իրավաբանական անձանց հետ: Սակայն իրավաբանական անձի իրավունքներ ունենալը և իրավաբանական անձ չհանդիսանալը ներքին հակասություն է, որը չի կարելի թույլատրելի համարել: Այս համատեքստում Վ. Ե. Չիրկինը արդարացիորեն նշում է, որ դժվար թե կարելի է միաժամանակ լինել և չլինել, ունենալ և չունենալ, ինչպես չի կարելի լինել մի քիչ հղի¹¹:

Մեր կարծիքով՝ իրավաբանական անձանց

վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ՝ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը:

Ընդ որում՝ պետք է արձանագրենք, որ ներկայումս պետությունը միջազգային իրավունքում կրում է պատասխանատվություն (ռեստիտուցիայի, սատիսֆակցիայի, ռեպարացիայի կամ ռետորսիայի ձևերով) որպես իրավաբանական անձ: Իսկ Եվրոպական միության բոլոր երկրները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև նման պատասխանատվություն կրում են որպես հանրային իրավունքի իրավաբանական անձեր¹²: Պետությանն իրավաբանական անձի կարգավիճակ տալն իրավաբանական-տեխնիկական հնարք է, որն օգտագործվում է ռոմանագերմանական իրավական ընտանիքի անդամ հանդիսացող գրեթե բոլոր երկրների կողմից¹³:

Պետությանը՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ 1) ցանկացած պետության հիմնադրման և գործունեության նպատակն է երկրի ժողովրդի ընդհանուր շահերի բավարարումը, այսինքն՝ պետությունն իրականացնում է հանրային գործառույթներ, 2) պետությունը և նրա մարմիններն ունեն իշխանական լիազորություններ, 3) պետությունը հանրային և մասնավոր բնույթի իրավունքների և պարտականությունների կրող է, օժտված է իրավասուբյեկտությամբ, 4) ունի գույքային հիմք՝ պետական սեփականություն, 5) հիմնադրվում և լուծարվում է հատուկ կարգով, 6) մասնակցում է քաղաքացիական շրջանառությանն այլ սուբյեկտների հետ հավասարության հիմունքներով:

Որպես կանոն՝ պետությունը քաղաքա-

¹⁰ Sfin Братусь С.Н. Субъекты гражданского права. М. 1950. С. 241.; Гражданское право / Под ред. Е.А. Суханова. Т. 1. М. 2002. էջ 282; Гражданское право / Под ред. А.П. Сергеева и Ю.К. Толстого. Т. 1. М. 2001. С. 190.

¹¹ Sfin Чиркин В.Е. Субъекты конституционного права в частнопубличных отношениях// Журнал российского права. 2007. №2.

¹² Sfin Чиркин В. Е. Юридическое лицо публичного права. М.: НОРМА, 2007 С. 108-109.

¹³ Sfin Freitas do Amaral, Diogo Curso de direito administrativo. Vol. 1. Coimbra: Almedina. 1993. P. 201-202.

ցիաիրավական հարաբերություններին մասնակցում է իր մարմինների միջոցով: Ինչպես նշել է Ա. Ա. Պուշկինը՝ պետությունն առանց իր մարմինների չի կարող գործունեություն ծավալել, անգամ չի կարող տնօրինել իր սեփականությունը՝ անկախ այն հանգամանքից՝ խոսքը քաղաքացիական, թե՛ այլ, օրինակ՝ վարչաիրավական հարաբերությունների մասին է¹⁴:

Ինչ վերաբերում է պետության և պետական մարմինների փոխհարաբերակցությանը՝ պետք է նշել, որ մի շարք երկրներում, որոնք ճանաչում են հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինստիտուտը, պետական մարմինները, ընդհանուր կանոնի համաձայն, հանրային իրավունքի իրավաբանական անձ չեն համարվում: Անգամ Վ. Ե. Չիրկինը նշում է, որ իրեն հայտնի չէ որևէ երկիր, որտեղ պետական մարմինն տրված լինի հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ¹⁵:

Ֆրանսիայում պետությունը՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, «ներառում» է բազմաթիվ մարմիններ՝ կենտրոնական (Նախագահն ու վարչապետն իրենց ծառայություններով, նախարարություններ), լոկալ ծառայություններ (ոստիկանությունը (պրեֆեկտ) իր ծառայություններով, նախարարությունների ապակենտրոնացված ծառայություններ, իրենց ներկայացուցչությունները մարզերում): Այս մարմիններից ոչ մեկը չունի իրավաբանական անձի կարգավիճակ՝ նրանք հանդես են գալիս պետության անունից¹⁶: Պետական մարմինները որպես իրավաբանական անձ չեն դիտվում նաև Գերմանիայում¹⁷:

Նիդերլանդների քաղաքացիական օրենսգիրքը (գիրք 2, հոդված 2.1) սահմանում է, որ պետությունը, նահանգները և մունիցիպալ կազ-

մավորումները և այլ մարմինները, որոնց Հոլանդիայի Սահմանադրությամբ տրված է իրավական կարգավիճակ, հանրային իրավունքի իրավաբանական անձինք են: Իսկ պետական լիազորություններ ունեցող այլ մարմինները իրավաբանական անձեր են, եթե նրանց այդպիսի կարգավիճակ է տրված օրենքով¹⁸: Այսինքն՝ այստեղ նույնպես որպես ընդհանուր մոտեցում սահմանված է, որ պետական մարմինները, ընդհանուր կանոնի համաձայն, իրավաբանական անձեր չեն:

Համանման մոտեցում է որդեգրել նաև Մոլդովան՝ կրկին սահմանելով, որ պետական մարմինները հանրային իրավունքի իրավաբանական անձեր չեն, սակայն, այնուամենայնիվ, որոշ պետական մարմինների շնորհիվ է նման կարգավիճակ: Օրինակ՝ Մոլդովայի ՔՕ-ի «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք» վերտառությամբ 58-րդ հոդվածը սահմանում է, որ մարմինները, որոնք լիազորված են իրականացնելու կառավարության գործունեության (լիազորության) մի մասը, ունեն իրավաբանական անձի իրավունքներ, եթե, իհարկե, դա բխում է օրենքի կարգավորումներից կամ այն դեպքերում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով, կենտրոնական կամ տարածքային կառավարման մարմինների ընդունած ակտերից: Այդպիսի օրինակ կարող է լինել Մոլդովայի Հեռուստատեսության և ռադիոյի համակարգող խորհուրդի կարգավիճակը¹⁹:

Մոտեցումը, որը բացառում է հանրային մարմինների՝ իրավաբանական անձի կարգավիճակի ճանաչման անհրաժեշտությունը, ենթադրում է կառուցակարգ, որն ընդունված է բազմաթիվ արտասահմանյան երկրներում և հանրային-իրավական կազմավորումների և

¹⁴ Стѝу Ленин об экономической роли Советского государства и вопрос о гражданской правосубъектности государства // Вопросы государства и права: Сб. статей. М.: Юрид. лит., 1970. С. 40.

¹⁵ Стѝу Чиркин В. Е. նշված աշխատությունը, էջ 217:

¹⁶ Стѝу Талапина Э.В. Административное право Франции сегодня // Ежегодник сравнительного правоведения. 2004. С. 139 -140.

¹⁷ Стѝу М. Г. Кузык, Ю.В. Симачев, Государственные корпорации в России: создание и эволюция в 2007-2012 годах, Москва, 2013. С. 26.

¹⁸ Стѝу Netherlands Civil Code, 1992 Book 2 Legal Persons, էլեկտրոնային ռեսուրս http://www.ilo.org/dyn/natlex/natlex4.detail?p_lang=en&p_isn=91671&p_country=NLD&p_classification=01.03 (վերջին մուտք 01.03.2019)

¹⁹ Стѝу Кодекс телевидения и радио Республики Молдова. Закон республики Молдова N 260-XVI от 27 июля 2006 г. / Monitorul Oficial. N 131 -133 от 11 августа 2006 г.

նրա մարմինների միջև փոխհարաբերությունների կարգավորում է «իրավաբանական անձը՝ իրավաբանական անձի մարմին» անալոգիայով: Սակայն դա անխուսափելիորեն ենթադրում է հանրային իրավական կազմավորումների իրավական ճանաչում որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ²⁰: Ինչպես նշել է Մ. Ի. Բրագինսկին, «...Համակարգը որպես այդպիսին չի կարող մասնակցել քաղաքացիական հարաբերություններին առանձին միավորների հետ, նման վիճակը պետք է դիտել որպես «խաղի կանոնների խախտում», որոնք սահմանում են կոլեկտիվ սուբյեկտների մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը»²¹:

Վ. Դ. Ռուդակովայի արդարացի կարծիքով՝ պետական մարմինների ինքնուրույն իրավասուբյեկտության ժխտումը այսօրվա դրությամբ գիտության և պրակտիկայի մեջ առկա պետության և պետական մարմինների՝ որպես անկախ սուբյեկտների քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու տարանջատման խնդրի միջոց է²²: Այսինքն՝ որոշելու համար, թե արդյոք պետական մարմիններին անհրաժեշտ է տալ իրավաբանական անձի կարգավիճակ, պետք է քննարկման առարկա դարձնել այդ մարմինների իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում: Թե որո՞նք են պետական մարմինները՝ դրանց ոչ ամբողջական ցանկը սահ-

մանված է օրենքով: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ, Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: Վերոթվարկյալ պետական մարմիններից բացի՝ ՀՀ օրենսդրությունն առանձնացնում է անկախ պետական մարմինների կատեգորիան, որպիսիք են կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, հաշվեքննիչ պալատը²³:

2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքը²⁴, որի առաջին հոդվածի համաձայն՝ քննարկվող օրենքով կարգավորվում են պետական մարմնում, ինչպես նաև ենթակա պետական մարմնում կառավարչական իրավահարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին պետական մարմնի, ինչպես նաև ենթակա պետական մարմնի մասնակցության հիմնական պայմանները, որտեղ սահմանվել են միասնական կանոններ: Քննարկվող օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմինը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև ենթակա պետական մարմինը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից իր գործողություններով կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ:

Իսկ թե ինչպե՞ս է պետական մարմինը մասնակցում քաղաքացիական շրջանառությանը:

²⁰ Օրինակ՝ Վրաստանի 1997թ. ՔՕ-ը (հոդված 24 մաս 4) հարցը կարգավորում է հետևյալ կերպ. սահմանված է, որ պետությունը մասնակցում է քաղաքացիական իրավական հարաբերություններում այնպես, ինչպես մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք: Պետությունն իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում իր մարմինների միջոցով (նախարարություններ, պետական վարչություններ և այլն), որոնք չեն համարվում իրավաբանական անձեր:

²¹ Տե՛ս Брагинский М.И. Участие советского государства в гражданских правоотношениях. М., 1981. С. 28–29.

²² Տե՛ս В. Д. Рудакова, Гражданско-правовой статус публичных юридических лиц, Москва, 2014. С. 66.

²³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2016թ. դեկտեմբերի 15-ի փոխփոխություններով), հոդվածներ 194, 196 և 198:

²⁴ Տե՛ս «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» 23.03.2018թ ՀՀ օրենք (ՀՕ-207-Ն) հոդված 1:

նր՝ սահմանված է քննարկվող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով: Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է պետական մարմնի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառնությունների իրականացման և *քաղաքացիաիրավական հարաբերությունների* մասնակցության համար: Այստեղից հարց է առաջանում՝ պետական մարմինը գլխավոր քարտուղարի միջոցով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ է ձեռք բերում միայն պետությամբ անունից գործելու դեպքում, թե՞ նաև իր անունից՝ իր նյութատեխնիկական ապահովվածության համար:

ՀՀ պետական մարմինների կողմից կնքված պայմանագրերի²⁵ վերլուծությունը մեզ թույլ է տալիս նշել, որ ներկայումս պետական մարմինները քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում են՝ ոչ միայն նպատակ ունենալով ձեռք բերելու իրավունքներ և պարտականություններ պետության համար, այլ նաև առանձնացնում են իրենց սեփական կարիքները և ձեռք են բերում իրավունքներ և պարտականություններ իրենց համար:

Նման վարքագծի իրավական հիմք է այն, որ, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև՝ ենթակա *պետական մարմնի կարիքների համար*, գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

Իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Օրենքի իմաստով պատվիրատու են հանդես գալիս՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված *պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները*, պետության կամ համայնքների հիմնարկները (...):

Այսպիսով՝ ներկայումս, մի կողմից՝ պետական մարմինը մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը որպես պետական իշխանության մարմին՝ ձեռք բերելով և իրականացնելով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ պետության անունից և պետության համար, մյուս կողմից՝ կարծես թե կորցնում է մարմնի կարգավիճակը և որպես իրավասուբյեկտ իրավաբանական անձ գործում է իր անունից՝ իր սեփական կարիքները բավարարելու նպատակով:

Մեր կարծիքով՝ թեև պետական մարմինները կարող են ունենալ իրենց սեփական կարիքները, այնուամենայնիվ, ցանկացած պետական մարմնի կարիք նաև պետության կարիք է, և համապատասխան պետական մարմինները չեն կարող համարվել իրավասուբյեկտ ու իրենց կարիքները բավարարելու նպատակով պայմանագրեր պետք է կնքեն պետության անունից, որպիսի պայմաններում կասկած չի մնա առ այն, որ ՀՀ-ում պետական մարմինները նույնպես օժտված չեն իրավասուբյեկտությամբ, և կարիք չկա նրանց տալ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ: Պետական իշխանության մարմինները պետք է մնան իրավական ձև, որոնց միջոցով պետք է իրացվի պետության իրավասուբյեկտությունը: Պետությունը քաղաքացիական շրջանառության մեջ հանդես չի կարող գալ իր մարմիններից դուրս:

²⁵ Տես Առողջապահության նախարարության կողմից իրականացված «2017-0491-2019» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքով կնքված պայմանագրի մասին հայտարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարություն, էլեկտրոնային ռեսուրս <http://gnumner.am/hy/search/> (վերջին մուտք 01.03.2019):

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, ոստիկանության ավագ լեյտենանտ

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՏԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես գիտենք՝ Հայաստանի Հանրապետությունում հաշտարարությունը՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոց և արդարադատությանն օժանդակող իրավական ինստիտուտ, նոր է: Իրավական համակարգում իր տեղը և դերը ստանձնեց 2015 թվականի մայիսի 7-ին Ազգային ժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների և լրացումների միջոցով: Իսկ հիմնադիր փաստաթուղթ կարող ենք համարել քաղաքացիական և առևտրային իրավունքի ոլորտում վեճերի լուծման այլընտրանքային կանաչ փաստաթուղթը (ՎԼԱ) և Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը:

ՀՀ դատական օրենսգրքում, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ՀՀ ընտանեկան և ՀՀ պետական տուրքի մասին օրենքներում ամրագրվեցին այնպիսի նորմեր, որոնք թույլ են տալիս կարգավորել հաշտարարության ինստիտուտի ձևավորման կարգը և հաշտարարի գործունեությունը:

Հաշտարարությունն իրականացվում է քաղաքացիաիրավական, աշխատանքային և ընտանեկան բնույթի գործերով: Իսկ հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված գրավոր համաձայնություն է:

Հաշտարարի՝ հաշտարարության գործընթացն իրականացվում է օրենքից բխող սկզբունքներով՝ առաջնորդվելով կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Օրենսդիրը շատ հակիրճ և նրբանկատ-

րեն է շարադրել հաշտարարի իրավունքները և պարտականությունները:

Ըստ իս՝ միևնույն ժամանակ սահմանված ցանկացած իրավունքի և պարտականության տողատակերում հասկանում ենք, որ հաշտարարն իր գործունեությունը պետք է իրականացնի մաքրամաքուր, չգրված ներքին սկզբունքով: Հաշտարարը հաշտարարություն իրականացնելուց հրաժարվելու իրավունք ունի, եթե կարծում է, որ իր մասնակցությունը հաշտարարության գործընթացին կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի խախտման:

Միևնույն ժամանակ՝ այս կամ այն իրավունքի անարգել իրականացման երաշխիքների թվում հանդես է գալիս նաև տվյալ իրավունքի իրականացման կարգի հստակ իրավական կարգավորումը:

Ներպետական իրավական նորմերի համաձայն՝ հաշտարարությունն իրականացվում է արտադատական և դատավարության ընթացքում՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում դատավարության ընթացքում մինչ վճռի հրապարակումը:

Կարող ենք հաշտարարությունը միաժամանակ դիտարկել որպես քաղաքացիական դատավարության իրավունքի ինստիտուտ կամ նրան սերտ կապված ենթաճյուղ, քաղաքացիական գործընթացի փուլ է և սուբյեկտիվ իրավունքի իրացման ձև: Հաշտարարությունը որպես քաղաքացիական գործընթացի փուլ քաղաքացիական ընթացիկ փուլն է և շատ հաճախ վերջնական կարող է հանդիսանալ: Այս դեպքում ավարտը նշանակում է դատավարական փուլի կամ գործընթացի հաջորդ փուլի արագ անցում:

Թեպետ դատական փուլի կամ գործընթացի հաջորդ հաշտարարության փուլի ան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

ցումը չի նշանակում սուբյեկտիվ իրավունքների կամ դատավարության կողմերի իրավունքների դադարում, դրանք կարող են շարունակվել նաև դատական գործընթացի հաջորդ փուլերում, եթե համաձայնությունը չի կնքվում, կնքված հաշտության համաձայնությունը ոչ իրավաչափ է կամ հակասում է երրորդ անձանց շահերին:

Հաշտարարության փուլի անցման կողմերի իրավունքն անհրաժեշտ է տարբերակել դատավարության սուբյեկտի կամ կողմերի իրավունքների իրացումից: Հաշտարարության փուլի անցնող կողմերը, բացի հաշտության իրավունքից, ունեն օրենսդրական նորմերի հետ չկապված այլ իրավունքներ, և այդ իրավունքներից մեկն էլ հաշտարարության կողմերի՝ իրենց իսկ ներկայացրած փոխշահավետ կամ այլընտրանքային ձևով վեճի լուծումը, օրենքից չկառչելու կամ չկաշկանդվելու իրավունքն է:

Օրենքից չկառչելը կամ չկաշկանդվելը ենթադրում է նաև օրենքով չսահմանափակվելու և օրենքին չհակասող լուծման հնարավորություն, որը հաշտարարության կողմերի իրավունքն է:

Կարելի է ենթադրել, թե այս դեպքերում շրջանառությունից հանվում է մեզանում տարածված «գործի հաղթող և պարտվող» հասկացությունը:

Նկատի ունեմ՝ հաշտարարությամբ վեճի լուծման տարբերակում, քանի որ սովորաբար դատավարության կողմերից մեկը դատարանի վերջնական որոշումը չընդունվելու դեպքում համարում է իրեն պարտված՝ բացառությամբ, եթե հայցվորը հրաժարվում է հայցից կամ դիմումից: Գործնականում չի բացառվում, որ պարտվող հանդիսանա այն անձը, ով հայցը ներկայացրել է, սակայն իր իրավունքները խախտվել են:

Այնուամենայնիվ, կարծում եմ՝ հայցից հրաժարվելու կամ բողոքարկելու իրավունքի դեպքում կիրառել «պարտվող կամ հաղթող կողմը» հասկացությունը սխալ է, քանի որ դա սահմանված չէ օրենքով, այլ գործում է կողմերի տրամաբանությամբ: Այսպես՝ Քաղաքացիական դատավարության ՀՀ օրենսգրքի որևէ հոդվածի համաձայն կամ հոդվածի կետով նման բան չի սահմանված: Բարեբախտաբար, օրենսդրական նախաձեռնության իրավունքի ի-

րականացմամբ Ազգային ժողովի որևէ պատգամավոր հանդես չի եկել:

Փաստորեն, անգամ կողմերի գիտակցության մեջ հաշտարարության դեպքում նման տերմիններ չեն կարող ծագել՝ անկախ այն հանգամանքից, թե դատական կամ արտադատական կարգով է վեճը հաշտությամբ լուծվել: Հստակ կարող ենք ասել, որ այս դեպքում կողմերի միջև էլ ավելի է զարգանում բանակցությունների միջոցով վեճ լուծելը, անգամ կարող ենք ասել, որ հաշտարարությունը նպաստում է մարդու գիտակցության և իրավագիտակցության զարգացմանը:

Ավելին՝ կողմերն իրենց իսկ վեճի բանակցողներն են, և գործն ավարտվում է իրենց կայացրած որոշմամբ: Երբ դատավարության կողմերն օրենքի պահանջներին համապատասխան միջնորդություն են ներկայացնում դատարանին, որ գործը լուծվի հաշտությամբ, այդ պահին հաջորդում է հաշտարարության վարույթը, իսկ կողմերի հաշտությամբ վեճը լուծելու նախաձեռնության իրավունքը՝ իրականացված: Այդ պահից, ըստ էության՝ սկսվում է դատական կարգով վեճի լուծման գործընթացի հաջորդ փուլը կամ հաշտարարության փուլը: Հետևաբար՝ դատավարական փուլերի և հաշտարարության փուլի գործընթացը տարբեր և հաջորդող փուլեր են, ուստի հաշտարարության փուլին անցնել՝ չի նշանակում դատական կարգով իրավունքների պաշտպանությունից հրաժարվել:

Ակնհայտ է, որ անհրաժեշտություն կա հստակ իրազեկելու և մեկնաբանելու կողմերի՝ դատական կարգով և հաշտարարության միջոցով վեճը լուծելու առավելության վերաբերյալ:

Այդ իրավունքի իրականացմանն առնչվող մյուս կարևոր հարցադրումն այն է, թե կողմը դատավարության մինչև ի՞նչ փուլն իրավունք ունի դիմել հաշտարարության: Կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

Կարելի է փաստել, որ հաշտության գործընթացի հիմնական և բովանդակային աշխատանքը կատարվում է հաշտարարի կողմից: Դա են վկայում նաև այն բոլոր իրավական նորմերը, որոնք կարգավորում են հաշտարարի ինստիտուտը: Հաշտարարի աշխատանքն

ավարտվում է կողմերից առնվազն մեկի՝ կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեցնելու, կամ հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնություն կնքելու միջոցով:

Գործնականում հաշտության իրավունքը կողմերին չիրազեկելը, խոչընդոտելը կամ բացասական կարծիք արտահայտելով ներկայացուցչի կողմից հանդես գալը, կարծում եմ, ողջամիտ չէ:

Ինչպես հասկացանք՝ օրենսդիրը սահմանել է հաշտարարության արտադատական և դատավարության փուլում կողմերի կամավոր դիմելաձև, ինչպես նաև հաշտարարի ինքնուրույն գործունեություն: Սակայն բազմիցս նշել եմ, որ հաշտարարությունը, լինելով արդարադատությանն օժանդակող ինստիտուտ, պետք է ստանա իր գործունեությունն իրականացնելու անհրաժեշտ պետական աջակցություն, որն էլ կնպաստի հաշտարարության ինստիտուտի զարգացմանը:

Ավելի հստակ, կարծում եմ՝ հաշտարարի դերի բարձրացման և ինստիտուտի կայացման համար ոչ թե դատավորները, փաստաբանները կամ հանրային իրազեկումը պետք է նպաստեն, այլ՝ հենց մինչդատական վարույթում որոշ գործերի համար անհրաժեշտ է սահմանել հաշտարարության դիմելու պարտադիրության սկզբունք, օրինակ՝ ամուսնալուծության, խնամակալության, ալիմենտի, ժառանգման և աշխատանքային իրավունքից բխող վեճերը: Նշված վեճերը պետք է պարտադիր մինչդատական վարույթի գործեր լինեն, իհարկե, դա չպետք է սահմանափակի այս փուլից հրաժարվելու համար դատավարության ցանկացած փուլում հաշտության գնալու իրավունքը:

Եթե ուսումնասիրենք մայրցամաքային երկրներում հաշտարարության ծագման և զարգացման փորձը, ապա կտեսնենք, որ արդարադատության և մինչդատական վարույթի պարտադիր լինելը մեծ դեր է ունեցել: Օրինակ՝ հոլանդական կառավարությունն այս ոլորտում ձեռնարկել է շատ ակտիվ դիրքորոշում, որի նպատակն է քաղաքացիների համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս

նրանց ավելի մեծ չափով պատասխանատվություն կրել այն հակասությունների լուծման համար, որոնց կողմերը նրանք են:

Նաև առաջարկվել է տեղեկատվություն տրամադրելու հնարավորություններ հաշտարարության վերաբերյալ, հաշտարարների ծառայությունների վերաբերյալ յուրաքանչյուր դատարանում ստեղծել կենտրոնական տեղեկատվական կենտրոն: Այդ իրավական տեղեկատվական «պատուհանները» քաղաքացիներին տրամադրում են խորհրդատվություն, որ նրանք իրենց խնդիրների լուծման համար կարողանան ընտրել առավել հարմար կարգ:

Հաշտարարության ինստիտուտի կայացման և հաշտարարի դերի գնահատման համար ներպետական համակարգում, կարող եմ ասել, որ հոլանդական աջակցության ձևը ոչ թե պետք է նկատի ունենալ, այլ՝ անհրաժեշտ է և ընդօրինակելի:

Գերմանիայում հաշտարարությունը ներդաշնակորեն ինտեգրված է արդարադատության համակարգում: Օրինակ՝ հաշտարարները ուղղակիորեն աշխատում են դատարանների հետ՝ զգալիորեն նվազեցնելով մի շարք պատենցիալ հայցեր: Այսօր հաշտարարությունը ոչ միայն ընտանեկան հարցերում է ինտեգրված գերմանական դատարաններին, այլև ընդհանուր դատական համակարգին, վարչական դատարաններին և այլն: Գերմանական իրավական շատ դպրոցներում մշտապես ուսումնասիրում են հաշտարարություն: Այսինքն՝ յուրաքանչյուր ոք, ով ընդունվում է բուհի իրավագիտության ֆակուլտետ, անցնում է հաշտարարության դասընթաց¹:

Սակայն ոչ բոլոր երկրներում է հաշտարարությունը ճանաչվում որպես առանձին մասնագիտություն: Շատ երկրներում դա դիտվում է երկրորդ կամ հիմնական մասնագիտության լրացում: Օրինակ՝ Ավստրիան այն սակավաթիվ երկրներից է աշխարհում, որտեղ հաշտարարի մասնագիտությունն ընդգրկված է մի շարք մասնագիտությունների շարքում: Ավելին՝ Ավստրիան միակ երկիրն է, որը 2004թ. ընդունել է Դաշնային օրենքը հաշտարարության ինս-

¹ Стн Федеральный закон Российской Федерации от 23 июля 2013 г. N 233-ФЗ «О внесении изменения в статью 18 Федерального закона «Об альтернативной процедуре урегулирования споров с участием посредника (процедуре медиации)».

տիտուտի հիման վրա, այդ օրենքը կարգավորում է հաշտարարների ուսուցումը և սահմանում որոշակի վերապատրաստման չափանիշներ²:

Հայաստանում ևս այդպես է, օրինակ՝ փաստաբանը նաև ունի հաշտարարի արտոնագիր, բայց զբաղվում է հիմնականում փաստաբանությամբ, և կարելի է ասել, թե իրենք իրենց ներքին զգացողությամբ փաստաբան են, դա վկայում է այն, որ այդ ոլորտում ունեն բազմաթիվ գործեր, իսկ հաշտարարության գործերի բացակայության պատճառը բարդում են դատարանների վրա: Սակայն անդրադառնամ ներպետական ինստիտուտին, խնդիրներին, և իմ կարծիքով՝ ոլորտի զարգացման համար որպես օրինակելի և ընդունելի են Ա Գերմանիայի, Ա Հոլանդիայի մոդելները³, քանզի համարում եմ, որ հաշտարարությունը ինքնուրույն մասնագիտություն է և պետք է դասավանդվի բոլոր իրավաբանական ֆակուլտետներում:

Սակայն, իմ կարծիքով՝ հաշտարար պետք է լինի բացառապես պարտադիր բակալավրի աստիճանով իրավաբանական կրթություն ունեցող անձ, կրկին շեշտում եմ և հիմնավորում այն փաստով, որ մեր գործունեության ընթացքում ցանկացած քայլ կատարելիս պետք է հետևել օրենքի տառին և կարողանալ հասկանալ վեճի առարկան, ի վերջո՝ հաշտարարն արդարադատությանն օժանդակող է: Օրինակ՝ պատկերացրե՛ք, թե դատավորը կամ նոտարը լինի տնտեսագետ, այս դեպքում ի՞նչ կլինի արդարադատության իրականացման ընթացքում, պատասխանը մեկն է՝ իհարկե, ողբերգություն:

Վերոգրյալի համաձայն՝ առաջարկում եմ հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

1. Մինչդատական վարույթի պարտադիր

բնույթի գործեր սահմանել՝ ընտանեկան, աշխատանքային, ժառանգության բնույթի բոլոր վեճերը:

2. Հաշտարարության ինստիտուտի կայացման և դատական համակարգի ինտեգրման, ինչպես նաև արդարադատությանն օժանդակ ինստիտուտի դերի կայացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն և հսկողություն, ինչը չունենք մենք այսօր:

Միանշանակ՝ չի կարելի դա քննադատություն ընդունել, պետությունը կարող է և, կարծում եմ՝ նաև պարտավոր է հարկային արտոնություններ տրամադրել հաշտարարներին ու հաշտարարական ընկերություններին, քանզի այս ինստիտուտը նոր է և կայացման ուղում ունի բազում խնդիրներ, այդ իսկ պատճառով հարկային արտոնություններ տրամադրելն անհրաժեշտություն է, ինչպես նաև ժամանակավոր անհատույց գրասենյակային պայմաններ՝ առաջիկա հինգ տարիների համար:

Այդ կառուցակարգի իրավական ամրագրման դեպքում երկուստեք կշահեն Ա հաշտարարության նախաձեռնողը, Ա դատավարության կողմերը, քանի որ, մի կողմից՝ ապարդյուն չի անցնի սկզբնական նախաձեռնության հեղինակի արդեն կատարած աշխատանքը, մյուս կողմից՝ կողմերը գործընթացը շարունակելու որոշակի հիմք կունենան իրավունքի իրականացման համար:

Վերոհիշյալ եզրահանգումները և առաջարկությունները, կարծում եմ, օգտակար կլինեն, կնպաստեն մարդու իրավունքների և հաշտարարության ինստիտուտի զարգացմանն առնչվող իրավական ամրագրման հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

² Տե՛ս Федеральный закон Российской Федерации от 23 июля 2013 г. N 233-ФЗ/12.04.2017թ/: «О внесении изменения в статью 18 Федерального закона «Об альтернативной процедуре урегулирования споров с участием посредника (процедуре медиации)».

³ Տե՛ս GeramiA. Bridging the Theory-and-Practice Gap: Mediator Power in Practice // Conflict Resolution Quarterly.– 2009.– Vol. 26.– № 4.– P. 433-451.– P. 435.

ԱՆԱՀԻՏ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՔՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՆՆԳԻՐԸ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՅԵՅԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՅ**

Ցանկացած մարդաբանական հիմնադրույթի համար իրավունքում կենտրոնական հասկացություն է իրավունքի սուբյեկտը: Այս տեսանկյունից՝ իրավունքի յուրաքանչյուր անտրոպոլոգիա պետք է իր մեջ բովանդակի իրավունքի ընդհանուր հայեցակարգ կամ իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսություն: Սակայն որքանով ավանդապես կոնցեպտուալ գաղափարների համալիրն իրավաբանության մեջ ձևավորվել է որպես դոգմատիկ, այսինքն՝ որպես իրավունքի ընդհանուր տեսություն, այնքանով ամենը, ինչն ունենք այսօր իրավունքում իրավական անձի մասին ուսմունքում, մշակված է իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում: Բայց արդյոք այսօր ունենք իրավունքի սուբյեկտի վերաբերյալ ընդհանուր տեսություն:

Իրավունքի սուբյեկտի խնդրի ժամանակակից հետազոտողներից Ս. Ի. Արխիպովը նշում է, որ այսօր չի ձևավորվել իրավունքի սուբյեկտի ամբողջական ընդհանրական տեսություն:¹ Ինչպես նշում է գիտնականը. «Հենց իրավունքի սուբյեկտին, իրավական անձին ամենաքիչ ուշադրությունն է դարձվում ռուսական-խորհրդային իրավագիտության մեջ: Պոզիտիվիզմն այնքան խորն է ներթափանցել գիտական իրավագիտակցության մեջ, որ ռուս իրավագետների ամբողջական սերունդներ չեն կարող այլ կերպ ընկալել իրավունքի սուբյեկտը, քան որպես իրավաբարբերության կազմ»²: Նույնը կարելի է նշել նաև հայ իրավագետների մասին: Արխիպովը նշում է. «Իրավագիտությունը դեռևս պետք է մշակի իրավունքի սուբյեկտի լիարժեք տեսություն, որը պետք է պատասխանի ոչ միայն այն հարցին, թե ինչը կամ ի՞նչ է իրավունքի սուբյեկտը, այլ նաև սահմանի իրավունքի սուբյեկտի դերն ու տեղն իրավաբանական կարգում, սահմանել, թե արդյոք սուբյեկտն առկա է իրավունքի կամ իրավունքի սուբյեկտի համար, թե արդյոք իրավունքը սուբյեկտի միասնությամբ է, ինչ է իրավական նորմը, ինչ է սուբյեկտների իրավական հարաբերությունը և այլն: Իրավունքի սուբյեկտի խնդրի լուծումն անխուսափելիորեն կապված է բոլոր կողմերի, իրավագիտության բոլոր բնագավառների հետ ու կազմի իրավունք հասկացության, իրավական ազատության, իրավական կարգավորման, իրավաբանական պատասխանատվության և այլ իրավական հասկացողության վրա, կառաջացնի բոլոր հիմնարար իրավական հասկացությունների, տեսական կոնստրուկցիաների վերաբերյալ»³:

Սվյալ արձանագրումներն իրավունքի սուբյեկտի առնչությամբ զուրկ չեն հիմքից, չնայած պահանջում են մեկնաբանություն: Ուշադիր հայացքն իրավունքի ընդհանուր տեսության հանդեպ ուշադրությունը դարձնում է այն հանգամանքին, որն ավանդապես ընդհանուր տեսական գաղափարների համալիրում որպես իրավունքի սուբյեկտի առանձին ինստիտուտ չի դիտարկվում: Իրավունքի սուբյեկտը իրավական հարաբերության կամ իրավախախտման պրեդիկատ է: Իրավունքի դասական ընդհանուր տեսությունում իրավունքի սուբյեկտը գործիքային է և իրավունքի դոգմի կառուցվածքային կրող տարր չէ:

Իրավունքի սուբյեկտի այսպիսի ճակատագիրը հռոմեական իրավական ավանդույթի ժա-

տասխանի ոչ միայն այն հարցին, թե ինչը կամ ի՞նչ է իրավունքի սուբյեկտը, այլ նաև սահմանի իրավունքի սուբյեկտի դերն ու տեղն իրավաբանական կարգում, սահմանել, թե արդյոք սուբյեկտն առկա է իրավունքի կամ իրավունքի սուբյեկտի համար, թե արդյոք իրավունքը սուբյեկտի միասնությամբ է, ինչ է իրավական նորմը, ինչ է սուբյեկտների իրավական հարաբերությունը և այլն: Իրավունքի սուբյեկտի խնդրի լուծումն անխուսափելիորեն կապված է բոլոր կողմերի, իրավագիտության բոլոր բնագավառների հետ ու կազմի իրավունք հասկացության, իրավական ազատության, իրավական կարգավորման, իրավաբանական պատասխանատվության և այլ իրավական հասկացողության վրա, կառաջացնի բոլոր հիմնարար իրավական հասկացությունների, տեսական կոնստրուկցիաների վերաբերյալ»³:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 111 2019

¹ Տեն Архипов С. И., Субъект права: теоретическое исследование. СПб: издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2004, էջ 9:
² Տեն նույն տեղը, էջ 10:
³ Տեն նույն տեղը, էջ 9:

ռանգություն է: Սուբյեկտը որպես հռոմեական persona կառուցված է հռոմեական մասնավոր իրավունքի ինստիտուտների հիման վրա⁴: Այդ պատճառով էլ արդարացի է Ս. Ի. Արխիպովի հետևյալ արտահայտությունը. «Այն, ինչն այսօր ընդունված է անվանել իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսություն, ցիվիլիստական դոկտրինից փոխառնված քաղաքացիական-իրավական հարաբերությունների սուբյեկտի մասին մասնավոր իրավական պատկերացումներ է: Այս պատկերացումները չեն անցել անհրաժեշտ տեսական վերամշակումը, և դրանց կանխավ տրվել է ընդհանուր տեսականի կարգավիճակ»:⁵ Հռոմեական իրավունքի ռեցեպցիայի ֆենոմենը ոչ միայն իրավունքի սուբյեկտի կառուցման պլանում, այլև իրավունքի դոգմի կառուցման ընդհանուր առումով խաղացել է կարևոր դեր, չնայած՝ գիտենք, որ Իոնեթիոսի դպրոցի կողմից Corpus Iuris Civilis դրույթների մշակումն ի վերջո հանգեցրեց ոչ թե Միջնադարում մաքուր դասական հռոմեական իրավունքի վերածննդի, այլ, ինչպես դա ցույց է տվել Պ. Գ. Վինոգրադովը⁶ եզակի արևմտաեվրոպական իրավական համադրության՝ Արևմտյան Եվրոպայի ընդհանուր իրավունքի, որը ներառում է՝

- արևմտյան միջնադարին հարմարեցված և դրանում կառուցված Հուստինիանոսի ժողովածուի դրույթները,
- բարբարոսական իրավունքը կամ էլ գերմանների իրավական էթնիկական դրույթները,
- *ius canonici*՝ լատինական, կաթոլիկ եկեղեցու կանոնական իրավունքի դրույթները:

Այդ պատճառով էլ իրավունքի սուբյեկտի մոդելի ձևավորման սկզբնական պայմանների վերականգնման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր երեք գործոնները՝ ըստ Պ. Գ. Վինոգրադովի:

Արդարացի է այն հաստատումը, որի հա-

մաձայն՝ մենք իրապես չունենք իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսություն իրավագիտության մեջ: Սակայն չի կարելի համաձայնվել Արխիպովի այն կարծիքի հետ՝ որը կապված է իրավունքի սուբյեկտի տեսության բացարձակ բացակայության հետ: Հարցն այլ է՝ ինչո՞ւ մարդն իրավունքում բյուրեղացված է որպես իրավունքի սուբյեկտ, և արդյոք հնարավոր է իրավունքում մարդաչափության ամրագրման մեկ այլ ձև: Իրավունքի մարդաբանությունը, ինչպես հասկացվում է տվյալ աշխատանքում, ենթադրում է մարդու իրավունքում արտասուբյեկտային ներկայացման փորձ: Ինչպես ցույց կտանք ստորև՝ իրավունքի մարդաբանության համար արդիական է ավելի խոր, սուբյեկտիվ իրավունք ու մարդկային հասկացման միջոց, այդ պատճառով էլ իրավունքի մարդաբանությունն իրավունքի ընդհանուր տեսություն չէ, չնայած, ինչպես և ընդհանուր տեսությունը, իրավունքի մարդաբանությունը ձգտում է դեպի իր ապարատի հայեցակարգային ձևավորմանը:

Իրավական մտքի զարգացման ժամանակակից փուլում իրավունքի սուբյեկտի և իրավաբանական գիտելիքի համակարգում նրա տեղի մասին ուսմունքի վերաիմաստավորման անհրաժեշտության հանդեպ առաջին կոչերից մեկը պատկանում է Ս. Ի. Արխիպովին, ով դոկտորական ատենախոսության մակարդակով⁷ նախանշել է այդպիսի վերածնալորումների հիմնական ուղղությունները: Կրճատ կերպով անդրադառնանք Արխիպովի գաղափարներին:

Այստեղ պետք է մեծ կարևորություն տալ Ս. Ի. Արխիպովի կողմից գիտական հանրային ուշադրությունն իրավունքի սուբյեկտի խնդիրներին ուղղելու փաստին, քանզի գիտնականը ճիշտ է սահմանել իրավունքի սուբյեկտի դասական տեսության հիմնական խնդրահարույց տեղերը և մատնանշել է այս առումով անհրաժեշտ վերածնալորումները: «Իրավունքի սուբյեկտը,- նշում է Ս. Ի. Արխիպովը,- հանդես է

⁴ Մանրամասն տե՛ս Ապիյան Ն.Ա., Սաֆարյան Գ.Հ. Հռոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Երևան, ԵՊՀ, 2002:

⁵ Տե՛ս Архипов С.И., նշված աշխ., էջ 7:

⁶ Մանրամասն տե՛ս՝ Виноградов П. Г. Очерки по теории права. Римское право в средневековой Европе. М., 2010.

⁷ Տե՛ս Архипов С. И. Субъект права: теоретическое исследование: автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук. Специальность 12.00.01 – теория и история права и государства: История учений о праве и государстве / С.И. Архипов.– Екатеринбург, 2005, էջ 46:

գալիս ոչ թե որպես մահացած իրավաբանական ծածկույթ, իրավական ձև, այլ՝ որպես բարձրագույն իրավական ատյան, ինքնարժեք իրավական անհատականություն, որը միաժամանակ ստեղծում է իրավունքի կերպարներ իր գիտակցությունում, իրավական իդեալներ, ստեղծագործ իրավական օրենքներ, մշակում է իրավական սովորություններ, հանդես է գալիս որպես բոլոր իրավական հարաբերությունների մասնակից, իրականացնում է իրավական գործունեություն, իրականացնում է, կիրառում նրա մասնակցությամբ ընդունված իրավունքի նորմերը, հանդես է գալիս որպես իրավական մշակույթի կրող»:⁸ Ս. Ի. Արխիպովի հետազոտության կարևորագույն դրույթներից մեկն արտահայտված է հետևյալ դրվագում. «Իրավաբանությունն այժմ ունի այն հենքը, միավորող սկիզբը, որի միջոցով կարելի է մաքուր կերպով կապել «իրավական մարմինը» «իրավական ոգու» հետ: Որպես դա սինթեզող սկիզբ կարող է հանդես գալ իրավունքի սուբյեկտի գաղափարը:

Այստեղ հասկանում ենք ոչ թե սուբյեկտ, որն ընդունվում է որպես օրենսդրի կողմից կարգավորվող իրավահարաբերությունների ֆորմալ մասնակից, այլ՝ սուբյեկտ, որն ընդունվում է որպես իրավունքի ստեղծող, անձ, ով ստեղծում է դրական իրավունքը, որն այլ մարդկանց հետ հարաբերություններում իրականացնում է իր բնական և ոչ բնական իրավունքները, արդար իրավակարգի իդեալը: Սուբյեկտի գաղափարը որպես իրավունքի ստեղծող կարող է կատարել այն կամրջի գործառույթը, որը պետք է կապի երկու իրավական բևեռները՝ բնական և դրական իրավունքները:⁹

Իրավունքի սուբյեկտի վերլուծությունն Արխիպովի հիմնադրույթում հանգեցնում է իրավունքի սուբյեկտի տարբեր ոլորտների առանձնացման: Այսպիսով՝ առանձնացվում են՝

- 1) իրավունքի սուբյեկտը որպես իրավաբանական անձ,
- 2) սուբյեկտը որպես իրավական կամք, որպես վճռորոշ իրավական ատյան, որը

վերցված է, ընդունված և նրանով իրականացվող որոշումների, կամքի ձգտումների հետ միասնության մեջ,

- 3) իրավունքի սուբյեկտը որպես իրավական կապերի միասնություն, որպես իրավահարաբերությունների կենտրոն,
- 4) իրավունքի սուբյեկտը որպես իրավական գիտակցություն, որպես իրավական սուբյեկտիվություն,
- 5) իրավունքի սուբյեկտը որպես իրավական գործիչ,
- 6) իրավունքի սուբյեկտը որպես սոցիալ-իրավական արժեք,
- 7) իրավունքի սուբյեկտը որպես իրավունակություն:¹⁰ Ինչպես նշում է Ս. Ի. Արխիպովը՝ իրավունքի սուբյեկտի հասկացման ոլորտների քանակը կարելի է բազմապատկել մինչև անվերջություն: Իրավունքի սուբյեկտն անընդհատ փոխվում է, ձեռք է բերում նոր որակներ, նա կապված չէ դրանցից որևէ մեկի հետ:¹¹

Իրավական համակարգում իրավունքի սուբյեկտի տեղի վերանայման շնորհիվ, ինչպես նաև իրավունքում սուբյեկտիվության վերաիմաստավորման հետևանքով՝ պրոֆեսոր Ս. Ի. Արխիպովը հանգում է հետևյալ եզրակացության. «Իրավական համակարգի կենտրոնում որպես իրավունքի առաջնային ու ելակետային սուբյեկտ պետք է լինի ոչ թե անհատը՝ մասնավոր ֆիզիկական անձը, և ոչ էլ իրավաբանական անձը, այլ՝ հենց մարդը, որ իր մեջ միավորում է մասնավոր իրավական դերեր քաղաքացիական, ընտանեկան, այլ մասնավոր հարաբերություններում և պետության ղեկավարի, նախարարի, զինծառայողի, հարկային տեսուչի, այլ հանրային գործիչի հանրային-իրավական գործառույթները: Որպես պետության մասնավոր կորպորացիաների և իրավունքի ամբողջ համակարգի հիմնադիր... որպես սուբստրատ հանդես է գալիս մարդու իրավական անձը: Այս անձից առանձնանում է ամեն մասնավորը, անհատականը, հատուկը և փաթեթավորվում է, այսպես կոչված, ֆիզիկական և

⁸ Տե՛ս Архипов С. И. Субъект права: теоретическое исследование.– СПб: изд-во Р. Асланова “Юридический центр Пресс”, 2004, էջ 11:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 15:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 104-105:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 105:

իրավաբանական անձի մեջ՝ ներառելով նրա հատուկ տարատեսակները՝ պետություններ, այլ հանրային-իրավական անձինք»:¹²

Այս կառույցը դիտարկեք ավելի խոր: Ս. Ի. Արխիպովի իրավունքի սուբյեկտի նոր տեսության կենտրոնական հասկացությունն իրավական անձ կատեգորիան է, որը և իրավունքի սուբյեկտիվության դրսևորման բոլոր այլ ոլորտների հավաքագրող հիմքն է: Բայց ինչ է իրավական անձը: Այս հարցը, ըստ մեզ՝ ամբողջությամբ լուծված չէ Ս. Ի. Արխիպովի կողմից: Իրավական անձը գիտնականի հիմնադրույթում մարդու որոշակի հիմք է,¹³ բայց, միաժամանակ, իրավունքի սուբյեկտում այս իմանենտորեն գործող գոյացությունը (մարդու իրավական անձը չի կարող գոյություն ունենալ իր ածանցյալներից միայն մեկի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց մեջ, նրանցից յուրաքանչյուրն ապահովում է տարբեր ոլորտների զարգացում):¹⁴ Այստեղ առաջանում է հարց. ինչ հիմնադրույթային իմաստ ունի իրավական անձ հասկացության ներմուծումը, և արդյոք հնարավոր է տվյալ հասկացության օպերացիոնալիզացումը:

Իրավունքի սուբյեկտի նոր հասկացությունը որպես իրավական անձ հասկացությամբ դիտարկող հիմնադրույթում ոչ այլ ինչ է, քան նույն հռոմեական իրավական persona-ն: Հիմնադրույթի հեղինակն իրավացիորեն նշում է, որ իրավական անձը միավորում է մասնավոր իրավական դերերը քաղաքացիական, իրավական և այլ մասնավոր հարաբերություններում, նաև հանրային-իրավական գործառույթներ, գործունեության տեսակներ:¹⁵ Ուստի առաջանում է հարց, թե ինչ էլակետային դրույթի մեջ և ինչ իմաստային ծանրաբեռնվածությամբ են այս հիմնադրույթում ներմուծվում մարդ և անձ կատեգորիաները: Ս. Ի. Արխիպովի մենագրությունից երևում է, որ հեղինակն իրավունքի սուբյեկտի թեման դիտարկելիս հաճախ հիմնվում է կոմունիկացիայի որպես համակարգի տեսության դրույթի, որ-

պես ինքնակազմակերպման տեսության, համակարգի վրա, ներածության մեջ նա դիմում է Լումանի համակարգային պատկերացումներին,¹⁶ սակայն հայտնի է, որ հենց այս հիմնադրույթներում հիմնական խնդրահարույց տեղը սուբյեկտի խնդիրն է:

Բացի դրանից՝ հետաքրքիր է նաև Ս. Ի. Արխիպովի՝ իրավունքի սուբյեկտի հիմնադրույթի դիտարկումը դասական/ոչ դասական իրավական մտածողության տեսանկյունից, քանի որ մարդաբանական շրջադարձը, ինչպես նաև հումանիտարիստների ուշադրության ներգրավումն Արևմուտքում սուբյեկտի խնդրի վրա երկրորդ աշխարհամարտից հետո տեղի է ունեցել դասական բանականության համակարգի քննադատության ենթատեքստում: Իրավունքում դասականությունը կարող է նույնականացվել նոր եվրոպական իրավական հիմնադրույթների հետ: Դրա հետ կապված՝ նշանակալից է գիտնականի դիրքորոշումն իրավունքի ու պետության՝ հետքաղաքական իրավունքի ու պետության կազմակերպման իդեալական, ցանկալի պատկերացման հանդեպ. պետությունը չի կարող ճանաչվել սուվերեն անձից, իրավունքի այլ սուբյեկտներից անկախ իրավական անձ: Նա չի կարող հանդես գալ որպես քաղաքականապես իշխող սուբյեկտ, այլ պետք է արտահայտի քաղաքացիների, անհատների ընդհանուր կամքը:¹⁷ Հետագայում երրորդ աստիճանի իրավունքը սուվերեն, ազատ անձի իրավունք է, մարդու իրավունք: Նրան պետք է համապատասխանի կոմունիկացիայի մեկ այլ տեսակ, որը հիմնվում է ոչ թե ուժի գերակայության գաղափարի, այլ՝ հասարակության բնական կազմակերպման գաղափարի, ընդհանուր սկիզբն անհատականի հետ միացման վրա: Իրավունքի ռացիոնալիզմը հանդես է գալիս որպես անհրաժեշտ նախադրյալ հասարակական հարաբերություններում օրինաչափությունների հաղթահարման, բնական-կենսաբանական համակարգերի գործարկման տրամաբանության համար, որոնք հիմնվում են

¹² Տես նույն տեղը, էջ 248:

¹³ Տես նույն տեղը, էջ 291:

¹⁴ Տես նույն տեղը, էջ 295:

¹⁵ Տես նույն տեղը, էջ 297:

¹⁶ Տես նույն տեղը, էջ 15-17:

¹⁷ Տես նույն տեղը, էջ 22:

պատճառահետևանքային կապերի, գծային դե-տերմինացիայի, բնական ընտրության գործո-ղության վրա:¹⁸

Երրորդ աստիճանի իրավունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ դասական լիբերալ իրավամտածո-ղության արդյունք: Բոլոր նախանշաններով դա համապատասխանում է Լուսավորության ծրա-գրին: Ս. Ի. Արխիպովը նույնպես ասում է. «Ոչ թե սուբյեկտն է առկա իրավունքի համար, այլ՝ իրավունքն է առկա սուբյեկտի համար և որոշ-վում է նրանով»:¹⁹ Մենք կհամաձայնվենք դրա հետ, սակայն մեկ սկզբունքային ճշգրտմամբ. իրավունքն առկա է ոչ թե սուբյեկտի համար, այլ՝ մարդու համար, բազմակի է ու եզակի մար-դու համար: Սուբյեկտը միշտ իրավունքի պրե-դիկատ է, նրա դրությունն իրավական հասկա-ցությունների ցանցում ենթարկվող է: Որքան էլ որ խոսենք այն մասին, թե սուբյեկտն իրավա-կան կոորդինատների²⁰ համակարգ է, բոլոր ի-րավական երևույթների համար ելակետը, որ իրավունքի սուբյեկտի հասկացումը միայն դե-պի իրավահարաբերությունների մասնակից, նախատեսված իրավական նորմերի կատա-

րող, իրավաբանական իրավունքների ու պար-տականությունների կրող անթույլատրելի է, քա-նի որ դա նշանակում է իրավունքի սուբյեկտի գործող էության սահմանումից հրաժարում,²¹ որ իրավունքի սուբյեկտը նա է, ում միջոցով սահմանվում են ամբողջ իրավակարգը, բոլոր առկա իրավական նորմերը, կապերը և իրա-վահարաբերությունները... նա իրավունքի աղ-բյուր և նպատակ է, իրավական բացարձակ²², որ իրավունքի սրբության այս աղբյուրը պետք է որոնել իրավունքի սուբյեկտում,²³ որ որպես իրավունքի սուբյեկտ մարդն իրապես դառնում է ամբողջ երկրի արարիչ և դիմում է ոչ թե ա-ռաջին, այլ՝ երկրորդ բնույթի գիտակցելու գործ-ընթացին²⁴ և այլն, այս բոլոր գեղեցիկ գաղա-փարները կապ չունեն իրավունքի սուբյեկտի հետ, դա չի ներառում այս ամենը, քանի որ նա իրավաբանական դոկտրինում, նաև իրավաբա-նական պրակտիկայում, մեր կարծիքով՝ իրա-վունքի սուբյեկտը նորմատիվ մարդն է՝ որպես իրավաբանական իրավունքների և պարտա-կանությունների միասնություն:



¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 105:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 105:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 106:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս նույն տեղում:

²⁴ Տե՛ս նույն տեղում:

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

ՁԵՆՔ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔ, ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՄ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ԿԱՄ ՇՈՐԹԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու հանցակազմի քրեաիրավական էությանն ու որակման առանձնահատկություններին վերաբերող, էական նշանակություն ունեցող որոշակի հիմնահարցեր: Հոդվածում որոշակի քննարկման են արժանացել ինչպես իրավաբանական գրականության մեջ նշված հանցակազմի որակման խնդիրներին վերաբերող տեսակետները, տարբեր հեղինակների արտահայտած կարծիքներն ու վերլուծությունները, այնպես էլ քննարկվող խնդրի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումները:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքով՝ ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի բարեփոխումների համար:

Բանալի բառեր. զենք, ռազմամթերք, հափշտակել, շորթել, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր, խոշոր չափ, առանձնապես խոշոր չափ:

АРАИК АСЛАНЯН

Заместитель начальника
отдела криминалистических исследований
Экспертно-криминалистического управления
Полиции РА, подполковник полиции,
кандидат юридических наук

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ УГОЛОВНО-ПРАВОВОЙ КВАЛИФИКАЦИИ ХИЩЕНИЯ ЛИБО ВЫМОГАТЕЛЬСТВА ОРУЖИЯ, БОЕПРИПАСОВ, ВЗРЫВЧАТЫХ ВЕЩЕСТВ И ВЗРЫВНЫХ УСТРОЙСТВ

Автором были рассмотрены вопросы, касающиеся особенностей уголовно-правовой квалификации и сущности хищения либо вымогательства оружия, боеприпасов, взрывчатых веществ и взрывных устройств как преступления, направленного на собственность. В статье обсуждаются как точки зрения, касающиеся проблем определения состава преступления, указанного в правовой литературе, мнения и анализы разных авторов, так и правовые позиции Кассационного Суда РА относительно рассматриваемого вопроса.

В результате проведенных исследований со стороны автора были сделаны предложения, которые могут иметь важное значение для реформ Уголовного кодекса РА.

Ключевые слова: оружие, боеприпасы, хищение, вымогательство, взрывчатые вещества, взрывные устройства, крупный размер, особо крупный размер.

ARAYIK ASLANYAN

Candidate of Jurisprudence, Police Colonel
and Deputy Head of the Subdivision of Criminal Scientific Researches
of the Expert- Criminal Department of the RA Police

CERTAIN PECULIARITIES OF CRIMINAL AND LEGAL QUALIFICATION OF THE OFFENCE BY THEFT AND EXTORTION OF WEAPON, AMMUNITION EXPLOSIVE MATERIALS AND EXPLOSIVE EQUIPMENTS

Certain issues having essential meaning concerning to the criminal and legal essence and qualification of the peculiarities of the offence by theft and extortion of weapon, ammunition explosive materials and explosive equipments have become subject for discussion by the author. In the Article were discussed views, expressed opinions and analysis by different authors concerning to the issues of qualification of the offence mentioned in the legal literature as well as legal positions on the issue under discussion expressed by the RA Court of Cassation.

In the result of study made by the author were represented suggestions which may be important for improvements of the RA Criminal Code.

Keywords: weapon, ammunition, to theft, to extort, explosive materials, explosive equipments, large size, especially large size.

* * *

ՀՈՎԱՏՔ ՔՈԶԱՐՅԱՆ

Հայ-ռուսական պետական համալսարանի
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
մագիստրանտ

ԿԵՂԾ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ. ՕՐՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կեղծ ձեռնարկատիրության հանցակազմի օբյեկտիվ կողմի ձևակերպման հիմնախնդիրները: Հեղինակը, մատնանշելով վերոնշյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի էական թերությունները, հանգել է այն եզրակացության, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի նորմը ճանաչել ուժը կորցրած:

Բանալի բառեր. կեղծ ձեռնարկատիրություն, հանցակազմ, պատճառահետևանքային կապ, օբյեկտիվ կողմ, առևտրային կազմակերպություն

ОВСЕП КОЧАРЯН

Российско-Армянский государственный университет,
Институт права и политики,
магистрант

ЛЖЕПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО: ПРОБЛЕМЫ ОБЪЕКТИВНОЙ СТОРОНЫ СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ

В статье рассматриваются проблемы оформления объективной стороны состава преступления лжепредпринимательства, предусмотренного частью 1 статьи 189 УК РА. Автор, раскрывая существенные недостатки объективной стороны вышеуказанного состава преступления, приходит к выводу о необходимости исключения указанного состава преступления из УК РА.

Ключевые слова: лжепредпринимательство, состав преступления, причинно-следственная связь, объективная сторона, коммерческая организация.

HOVSEP KOCHARYAN

Russian-Armenian State University,
Institute of Law and Politics,
Magister

FICTITIOUS ENTREPRENEURSHIP: SOME PROBLEMS OF THE OBJECTIVE SIDE OF THE CORPUS DELICTI

The article deals with the problems of the objective side of the corpus delicti of the fictitious entrepreneurship, provided for by the first part of article 189 of the Criminal Code of the RA. The author, revealing the essential shortcomings of the objective side of the aforementioned corpus delicti, comeu to the conclusion that it is necessary to exclude the mentioned corpus delicti from the Criminal Code of the Republic of Armenia.

Keywords: fictitious entrepreneurship, corpus delicti, cause-effect relationship, objective side, commercial organization.

* * *

ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության մայոր,
Երևանի պետական համալսարանի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հոդվածը նվիրված է անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր (սոցիալական) կանխարգելման հարցերին: Մասնավորապես՝ հեղինակը քննարկում է ընդհանուր կանխարգելման տնտեսական, սոցիալական, դաստիարակչական, կրթական, մշակութային, կազմակերպչական բնույթի միջոցառումները, որոնք պետք է ուղղել անչափահաս ունեցող ընտանիքի սոցիալական դիրքի ամրապնդմանը, դպրոցի հեղինակության բարձրացմանը, դեռահասների համար դրական ուղղվածությամբ ժամանցի կազմակերպմանը:

Բանալի բառեր. հանցավորության ընդհանուր (սոցիալական) կանխարգելում, հանցավորության կանխարգելման օբյեկտ, դաստիարակչական գործառույթ, ընտանեկան անբարենպաստություն, պրոֆիլակտիկ ներգործություն

РИПСИМЕ ХАЧАТРЯН

Старший преподаватель кафедры
Уголовного права и криминологии
факультета правоведения Академии
Образовательного комплекса полиции РА,
майор полиции,
соискатель кафедры Уголовного права ЕГУ

К ВОПРОСАМ ОБЩЕГО (СОЦИАЛЬНОГО) ПРЕДУПРЕЖДЕНИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Статья посвящена вопросам общего (социального) предупреждения групповой преступности несовершеннолетних. В частности, автор обсуждает мероприятия экономического, социального, воспи-

տաճարական, կրթական, մշակութային, կազմակերպչական բնույթի գործունեությունները, որոնք պետք է ուղղվեն նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթության մակարդակների վերաբերյալ, որպեսզի ապահովվի համապատասխան կրթության ստացումը և կրթական որակի բարձրացումը։

Ключевые слова: общее (социальное) предупреждение преступности, объект предотвращения преступности, воспитательная функция, семейная неблагоприятность, профилактическое воздействие

HRIPSIME KHACHATRYAN

Senior lecturer at Police Academy of Police Educational Complex of RA, Department of Law, Chair of Criminal Law and Criminology, Police Major. Post-graduate student of the YSU department of Criminal Law.

ON ISSUES OF JUVENILE GROUP CRIMINALITY GENERAL (SOCIAL) PREVENTION

The article is devoted to the issues related to juvenile group criminality general (social) prevention. In particular, the author has discussed the economic, social, upbringing, educational, cultural, organizational activities for general prevention which should be addressed to strengthening of social status of families having juvenile, to raising school authority, to organizing of positive-oriented entertainment for juveniles.

Keywords: criminality general (social) prevention, criminality prevention object, upbringing function, domestic unfavorable environment, preventive impact

* * *

ՆԵՐԱԿԱՅՈՒՆ

«Վերականգնողական» դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է քրեական իրավունքում հաշտեցման տեղին և դերին: Ճիշտ է՝ քրեական արդարադատության նպատակը հանցագործություն կատարելու մեջ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելն է, բայց պատիժը բնավ ոչ միշտ է արդարադատության նպատակը: Ներկայումս պատիժը չի դիտվում որպես հանցանք կատարելու մեջ մեղավոր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու միակ հնարավոր հետևանք:

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հենքում ընկած է այն գաղափարը, որ ավելորդ է համարվում քրեական ներգործության միջոցներ կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր գիտակցել են իրենց մեղքը կատարված հանցանքում, և դա հիմք է դարձել՝ հաշտվելու տուժողի հետ: Այդ պատճառով բազմաթիվ պետություններ նախընտրում են շարժվել միջոցների տնտեսման ճանապարհով և չվատնել ավելորդ ռեսուրսներ ու ջանքեր այն անձանց պատժելու վրա, որոնց առնչությամբ արդեն իսկ ձեռք է բերվել նախականխման դրական արդյունք:

Բանալի բառեր. քրեական իրավունք, տուժող, հաշտեցում, քրեական պատասխանատվություն:

НЕЛЛИ АШРАФЯН

Старший прокурор управления по делам о преступлениях коррупционной и экономической направленности Генеральной прокуратуры РА

РОЛЬ И МЕСТО ПРИМИРЕНИЯ В УГОЛОВНОМ ПРАВЕ

Данная статья посвящена роли и месту понятия примирения в уголовном праве. Правда, целью уголовного правосудия является наказание виновных в совершении преступления, но наказание не всегда является самоцелью правосудия. В настоящее время наказание не рассматривается как единственно возможное следствие уголовной ответственности в отношении виновного, совершившего преступление.

Причиной отказа от ответственности уголовные преступления на основе примирения с потерпевшим является идея о том, что нет необходимости применять уголовные наказания в отношении лиц, которые осознали свою вину в совершении преступления, что и стало основой для примирения с жертвой. Вот почему многие государства предпочитают идти по пути экономии средств и не тратить чрезмерные ресурсы и усилия для наказания тех, в отношении которых уже достигнут предварительный положительный результат.

Ключевые слова: уголовное право, потерпевший, примирение, уголовная ответственность.

NELLI ASHRAFYAN

Senior Prosecutor of the Department for Combating Corruption and Economic Crimes of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

THE ROLE AND PLACE OF RECONCILIATION IN THE CRIMINAL LAW

This article is devoted to the role and place of reconciliation in the criminal law. Truly, the purpose of criminal justice is to punish those guilty of committing a crime, but the punishment is not always the purpose of justice. Currently, punishment is not considered as the only possible consequence of criminal liability for guilty person in committing a crime.

The reason for dismissing criminal offenses on the basis of reconciliation with the victim is the idea that it is unnecessary to impose criminal penalties on persons who are aware of their guilt in committing a crime and that has become the basis for reconciliation with the victim. That is why many countries prefer to save financial means and do not waste excessive resources and efforts for punishing those who already have achieved a positive initial outcome in reconciliation.

Keywords: criminal right, victim, reconciliation, criminal liability

* * *

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավական ապահովման և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ, Հայաստանի Ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս

ԱՌԱՆՑ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՃՈՒ ԳՈՒՅՔԻ ԲՈՒԱԳԱՆՁՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Տվյալ հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման (ԱՄԴԲ) մեխանիզմի հիմնական գաղափարը և դրա հատկանիշները: Հետազոտու-

թյան ընթացքում վերլուծության են ենթարկվել ու ներկայացվել որոշ միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի մասին կոնվենցիայում և Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) հանձնարարականներում տեղ գտած պահանջները՝ ուղղված ԱՄԴԲ մեխանիզմի ներդրմանն անդամ պետությունների օրենսդրությունում: Այնուհետև ուսումնասիրվել են ԱՄԴԲ մեխանիզմի երկու հիմնական տեսակները և դրանց առանձնահատկությունները: Հեղինակը նաև իրականացրել է համեմատական վերլուծություն դատապարտման վրա հիմնված բռնազանձման և առանց մեղադրական դատավճռի բռնազանձման ինստիտուտների միջև՝ վեր հանելով դրանց հիմնական նմանություններն ու տարբերությունները:

Բանալի բառեր. առանց մեղադրական դատավճռի բռնազանձում, դատապարտման վրա հիմնված բռնազանձում, կոռուպցիայի դեմ պայքար, ապօրինի ծագում ունեցող գույք, անձի դեմ հայց, գույքի դեմ հայց, հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշ, քաղաքացիական բռնազանձում, քրեական բռնազանձում, կանխարգելիչ և ընդլայնված բռնազանձում:

СОНА МАРКАРЯН

Главный специалист отдела правового обеспечения и внешних связей Специальной следственной службы Республики Армения, магистр права программы LL.M Американского университета Армении

ОПРЕДЕЛЁННЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ИНСТИТУТА КОНФИСКАЦИИ АКТИВОВ ВНЕ УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА

В рамках данной статьи были изучены основная сущность и характеристики механизма конфискации активов вне уголовного производства. В течение исследования были проанализированы и представлены требования некоторых международных документов, таких как Конвенция ООН против коррупции и рекомендации Группы разработки финансовых мер (FATF) относительно внедрения механизма конфискации активов вне уголовного производства в законодательстве государств-членов. Далее, два основных типа конфискации вне уголовного производства и их особенности были рассмотрены автором в пределах статьи. Автор также провел сравнительный анализ между механизмами конфискации, основанном на осуждении и конфискации активов вне уголовного производства, выявив их основные сходства и различия.

Ключевые слова: конфискации активов вне уголовного производства, конфискации, основанная на осуждении, борьба с коррупцией, незаконные активы, иск против конкретного лица, иск в отношении имущества, критерий доказанности “равнение вероятностей”, гражданская конфискации, уголовная конфискации, превентивная и расширенная конфискации.

SONA MARGARYAN

Chief specialist of legal provision and external relations department of the Special investigation service of RA
Master of law of the LL.M program of American University of Armenia

CERTAIN ISSUES REGARDING NON-CONVICTION BASED CONFISCATION OF ASSETS

In scope of the given article, the main concept and characteristics of the non-conviction based confiscation (NCBC) has been examined. Requirements of certain international documents, such as UNCAC and FATF recommendations, regarding incorporation of NCB confiscation has been analyzed and presented. Further, the two main types of NCB confiscation and their peculiarities have been scrutinized by the author within the article. The author also has carried out comparing analysis between conviction based and non-conviction based confiscation mechanisms, bringing out their main similarities and differences.

Keywords: non-conviction based confiscation of assets, conviction based confiscation of assets, no prior conviction, fight against corruption, tainted assets, in personam action, in rem action, evidentiary standard of balance of probabilities, civil confiscation, criminal confiscation, preventive and extended confiscations.

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՁԵՎԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են կառավարության գործունեության կայունության երաշխավորման որոշ հիմնախնդիրներ կառավարման խորհրդարանական ձևի պետություններում: Վեր են հանվել կառավարության գործունեության կայունության ապահովման վրա ազդող հիմնական գործոնները՝ միակուսակցական և կոալիցիոն կառավարությունների պայմաններում: Հոդվածում հիմնավորվել է այն մոտեցումը, որ պետությունում երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի մշակումը և իրականացումը կարող է առավել արդյունավետ երաշխավորվել երկարաժամկետ հեռանկարով գործող կառավարությունների դեպքում:

Բանալի բառեր. խորհրդարանական կառավարման ձև, կայունություն, անվստահություն, միակուսակցական կառավարություն, կոալիցիոն կառավարություն, փոքրամասնության կառավարություն:

АЙК КЕСОЯН

Главный специалиста юридического департамента аппарата премьер-министра РА, кандидат юридических наук

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ СТАБИЛЬНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРАВИТЕЛЬСТВА В ГОСУДАРСТВАХ С ПАРЛАМЕНТСКОЙ ФОРМОЙ УПРАВЛЕНИЯ

В статье исследованы некоторые проблемы гарантирования обеспечения стабильности деятельности правительства в государствах с парламентской формой управления. Подняты основные факторы, влияющие на обеспечение стабильности деятельности правительства – в условиях однопартийного и коалиционного правительств. В статье обоснован тот подход, что разработка и реализация долгосрочных стратегических программ в государстве может наиболее эффективно гарантироваться при правительствах, действующих с долгосрочной перспективой.

Ключевые слова: парламентская форма правления, стабильность, недоверие, однопартийное правительство, коалиционное правительство, правительство меньшинства.

HAYK KESOYAN

Chief specialist of the legal department of the office of prime minister of RA, Phd

PROBLEMS OF ENSURING THE STABILITY OF THE GOVERNMENT'S ACTIVITY IN THE PARLIAMENTARY FORM OF GOVERNMENT

The article examines some key issues in ensuring the stability of the government's activity in the parliamentary form of government. The article highlights the main factors influencing the stability of the government's activity in the conditions of single-party and coalition governments. The article substantiated the approach that the elaboration and implementation of long-term strategic programs in the state could be safeguarded in the case of long-term governments.

Keywords: form of parliamentary government, stability, non confidence, one-party government, coalition government, minority government:

ՆԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական գնումները պետական հիմնական գործառույթներից մեկն են, որի միջոցով պետությունն ապահովվում է պետական կարիքների բավարարումը: Պետական գնումներն իրականացվում են պետական պատվերի հիման վրա: Նկատի ունենալով, որ պետական գնումների գործընթացի տարբեր փուլերում թույլ են տրվում ամենատարբեր չարաշահումներ, պետական գնումների համակարգի ուսումնասիրությունը պետք է սկսել պետական պատվեր ու պետական գնումներ հասկացություններից, որն էլ փորձ է արվել կատարել սույն աշխատանքում:

Բանալի բառեր. հանրային շահ, պետական կարիքներ, պետական պատվեր, պետական գնում, պետական կարիքների բավարարման նպատակով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում:

НАНЭ СААКЯН

Аспирант кафедры гражданского права ЕГУ,
Главный специалист в службе правовой экспертизы
Кассационного суда РА

ПОНЯТИЯ ГОСУДАРСТВЕННОГО ЗАКАЗА И ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК

Государственных закупки являются одной из самых ключевых функций государства, с помощью которой реализуются государственные нужды. Государственные закупки формируются с помощью государственных заказов. И так как на различных стадиях государственных закупок допускается наибольшее количество злоупотреблений, исследование этой системы нужно начать с определения государственного заказа и государственных закупок, что и пытались сделать в этой работе.

Ключевые слова: общественный интерес, государственные нужды, государственный заказ, государственные закупки, закупка товаров, работ и услуг для удовлетворения государственных нужд

NANE SAHAKYAN

hD student at Civil Law Chair of YSU,
Chief expert of the legal expert service of
Court of Cassation of the Republic of Armenia

THE CONCEPTS OF GOVERNMENT ORDER AND PUBLIC PROCUREMENT

Public procurements are one of the key functions of the state with which the government needs implemented. Government purchases are formed with the help of government (state) orders. And as in various stages of public procurement the greatest number of abuses are allowed, the study of this system should start from the definition of government order and public procurement which we try to do in this work.

Keywords: public interest, government needs, government order, public procurement, government purchases, procurement of goods, works and services to implement government needs.

ՍԻՐՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

Սույն հոդվածում քննարկման առարկա է դարձվում այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը, դե ֆակտո նախատեսելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց կառուցակարգը՝ սահմանելով, որ համայնքը և միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ են, ձեռնպահ է մնացել հանրային իրավունքի իրավաբանական անձանց մյուս տեսակները սահմանելուց: Հեղինակի կարծիքով՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները դրանով չեն սահմանափակվում, և այդպիսին նախ և առաջ պետք է դիտվի նաև պետությունը, քանի որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարինություն՝ պահանջելով իրավակիրառողից դրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը:

Բանալի բառեր. պետություն, պետական մարմիններ, իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ, իրավաբանական անձի տեսակ:

СИРО АМИРХАНИЯ

Аспирант кафедры гражданского права ЕГУ

ГОСУДАРСТВО КАК ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО ПУБЛИЧНОГО ПРАВА

В этой статье предметом изучения является то, что законодательство РА де-факто устанавливает структуру юридических лиц, устанавливая, что общины и межобщинные союзы являются юридическими лицами публичного права, воздерживается от определения других видов юридических лиц публичного права. По мнению автора, виды юридических лиц публичного права не ограничиваются этим, и в первую очередь государство должно считаться таким, поскольку субсидиарное применение правовых норм, касающихся юридических лиц, которое допускается только в определенных случаях, служит законным требованием для идентификации обсуждаемого субъекта, как юридического лица публичного права.

Ключевые слова: государство, государственные органы, юридическое лицо, юридическое лицо публичного права, вид юридического лица

SIRO AMIRKHANYAN

PhD student of the YSU Chair of Civil Law

THE STATE AS A LEGAL ENTITY OF PUBLIC LAW

In this article, the subject of study is that the RA legislation de facto establishes the structure of legal entities, establishing that communities and intercommunal unions are legal entities of public law, refrains from defining other types of legal entities of public law. According to the author, the types of legal entities of public law are not limited to this, and first of all the state should be considered as such, since the subsidiary application of legal rules relating to legal entities, which is allowed only in certain cases, serves as a legal order to identify the state as a legal entity of public law.

Keywords: state, state bodies, legal entity, legal entity of public law, legal entity type.

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս,
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՊԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխատանքում ներկայացված են Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների հաշտարարության ինստիտուտների հիմնախնդիրները: Ուսումնասիրվել է Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Հոլանդիայի և այլ եվրոպական երկրների փորձը, և համեմատական եզրեր են տարվել: Որպես հետազոտման արդյունք՝ առանձնացվել են բոլոր այն առավելությունները, որոնք դրական նշանակություն կունենան իրավակիրառ պրակտիկայում: Հետազոտվել են հաշտարարության գործնական խնդիրները և հաշտարարությունը՝ որպես գիտություն: Աշխատանքում կատարվել են նաև համապատասխան առաջարկություններ, որոնք, կարծում ենք՝ անհրաժեշտություն են ու կնպաստեն հաշտարարության ինստիտուտի կայացման հիմնախնդիրներին:

Բանալի բառեր. հաշտարար, խնդիր, այլընտրանք, Հայաստանի Հանրապետություն:

ЛУСИНЕ ТАСАЛЯН

Преподаватель кафедры уголовного права и криминологии факультета правоведения Академии образовательного комплекса полиции Республики Армения, старший лейтенант полиции

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ МЕДИАЦИИ РА

В работе представлены проблемы институтов медиации Республики Армения и других государств. Изучен опыт Российской Федерации, Германии, Нидерландов и других европейских стран, и было проведено сравнение. В результате исследования были отделены все те преимущества, которые будут иметь положительное значение в практике правоприменения. Исследованы практические медиационные проблемы и медиация, как наука. В работе приведены соответствующие предложения, которые, как мы считаем, необходимы и поспособствуют решению основных проблем становления института.

Ключевые слова: медиация, проблема, альтернатива, Республика Армения.

LUSINE TASALYAN

Lecturer of the Chair Law and Criminology of the Academy of Educational Complex of Police of the Republic of Armenia, Senior Lieutenant

THE ISSUES OF MEDIATION OF RA

The issues of mediation institutes of the Republic of Armenia and other states are represented in the work. The practice of the Russian Federation, Germany, Netherlands and other European countries has been studied and comparisons have been made. As a result of the research all those advantages which held positive significance in the law enforcement practice have been singled out. The practical issues of mediation and mediation as a science have been researched. Corresponding suggestions have also been made in the work, which are necessary from our point of view and will contribute to the issues of formation of mediation institute.

Keywords: mediation, problem, alternative, Republic of Armenia.

ԱՆԱՀԻՏ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱԿՆԴԻՐԸ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հոդվածում հեղինակը հանգամանորեն քննական վերլուծության է ենթարկել իրավագիտության մեջ հայտնի պրոֆեսոր Ս. Ի. Արխիպովի հայեցակարգը՝ իրավունքի սուբյեկտի հիմնախնդրի վերաբերյալ, և առաջարկել է իր տեսակետը խնդրո հարցի մասին:

Բանալի բառեր. իրավունքի սուբյեկտ, իրավասուբյեկտություն, իրավական անձ, իրավունակություն, զործունակություն, իրավահարաբերությունների մասնակից:

АНАИТ АЙВАЗЯН

Соискатель Института философии, социологии и права НАН РА,
член палаты адвокатов РА, адвокат

ПРОБЛЕМА СУБЪЕКТА ПРАВА: АНТРОПОЛОГИЧЕСКИЙ АСПЕКТ

В данной статье обстоятельно изучаются концепция профессора С. И. Архипова, а также проблемные подходы к понятию и сущности субъекта права в контексте современной теории и практики юриспруденции.

Выводы и предложения, сделанные в статье, имеют теоретико-познавательное и практико-прикладное значение.

Ключевые слова: субъект права, участник правового отношения, правосубъектность, правовое лицо, правоспособность, дееспособность.

ANAHIT AYVAZYAN

PHD student, Post-graduate researcher
Of Philosophy, Sociology and Law of NAS RA
Member of the Chamber of Advocates of RA, advocate

THE PROBLEM OF THE SUBJECT OF LAW FROM THE ANTHROPOLOGICAL POINT OF VIEW

In this article, the author thoroughly examines the concept of S. Arkhipov about the problem of the subject of law from the anthropological point of view. The author suggests his opinion about that problem.

Keywords: subject of law, member of a legal relationship, legal personality, legal person, legal capacity, legal competence.

ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅՆՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: